

ՄԻԳՆԱՂԱՐԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ
ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Տիգրան Ալեքսանյան

Tigran Aleksanyan

THE STUDY OF MEDIEVAL MONUMENTS
IN THE TERRITORY OF KHACHEN PRINCEDOM



LAND AND CULTURE ORGANIZATION

TIGRAN ALEKSANYAN

**THE STUDY OF MEDIEVAL MONUMENTS IN THE
TERRITORY OF KHACHEN PRINCEDOM**

YEREVAN 2022



ԵՐԿԻՐ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

**ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԽԱՂԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ**

ԵՐԵՒԱՆ 2022

ՀՏԴ 902:93/94

ԳՄԴ 63

Ա 296

Տպագրում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխաւորութեամբ

Գիտական խմբագիր՝ պ. գ. դ. Ա. Յակոբեան
Անգլերէն թարգմանութիւնը՝ Ն. Խուդանեանի

Published on the recommendation of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Scientific editor – D.Sc. A. Hakobyan
Translated from Armenian by H. Khudanyan

Ալեքսանեան Տ.

Ա 296 Միջնադարեան յուշարձանների ուսումնասիրութիւնը Խաչենի իշխանութեան տարածքում

Տ. Ալեքսանեան.- Եր.: Հեղ. հրատ., 2022.- 189 էջ:

Գիրքը նուիրուած է Խաչենի իշխանութեան տարածքի միջնադարեան յուշարձանների ուսումնասիրութեան պատմութեանը: Պատմական տարբեր վաւերագրերի հիմամբ ամբողջացուել են խնդրին վերաբերող բոլոր նիւթերը, ինչպէս հայ, այնպէս եւ օտար հետազօտողների աշխատանքները: Առանձին բաժնով ներկայացուած են նաեւ քննարկուող երկրամասի միջնադարեան յուշարձանների պեղումների համառօտ արդիւնքները: Նախատեսուած է Արցախի պատմութեամբ, հնագիտութեամբ, վիմագրութեամբ եւ մշակոյթով զբաղուողների եւ ընթերցողների լայն շրջանակների համար:

The book is dedicated to the history of the study of medieval monuments on the territory of Khachen principedom. On the basis of various historical documents, all materials related to the problem, both the work of Armenian and foreign researchers, have been summarized. A separate section also presents brief results of excavations of medieval monuments of the region under discussion.

It is intended for a wide range of readers engaged in the history, archaeology, epigraphy and culture of Artsakh.

ՀՏԴ 902:93/94

ԳՄԴ 63

ISBN 978-9939-0-4215-2

© Ալեքսանեան Տիգրան, 2022

Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք թէ ինչ հնույթիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն:

Մակար եպս. Բարխուդարեանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան.....7

Գլուխ I. Պատմա-աշխարհագրական ակնարկ

ա) Խաչենի իշխանության վարչա-տարածքային նկարագիրը10

բ) Քաղաքական իրավիճակը Խաչենում12

Գլուխ II. Միջնադարեան յուշարձանների ուսումնասիրությունը

ա) Նախախորհրդային շրջանի ուսումնասիրությունները.....24

բ) Խորհրդային շրջանի ուսումնասիրությունները.....36

գ) Յետխորհրդային շրջանի ուսումնասիրությունները.....50

Գլուխ III. Հնագիտական աշխատանքները Խաչենի միջնադարեան յուշարձաններում

1) Դադիվանք60

2) Չարեքտարի վանք69

3) Հոռեկավանք71

4) Յակոբավանք73

5) Հանդաբերդի վանք75

6) Վաճառի Ս. Ստեփանոս վանք77

7) Ս. Եղիշեի վանք78

8) Վաղուհասի Ս. Տիրամայր վանք80

9) «Ջուխտակ վանք» եկեղեցի82

Գրականության ցանկ88

ԱՌԱՋԱԲԱՆ

2020թ. արցախեան պատերազմը, բազմաթիւ արհաւիրքներից զատ, մտորելու, սթափուելու, անցեալը վերագնահատելու լուրջ ազդակ հանդիսացաւ: Պատերազմի հետեւանքով տարածքային մեծ կորուստների հետ մէկտեղ, թշնամու հսկողութեան տակ անցան երկրամասում հայի դարաւոր ներկայութիւնը փաստող հազարաւոր յուշարձաններ: Գաղտնիք չէ, որ մեր օրերում ադրբեջանցիներն ամէն կերպ փորձում են նենգափոխել պատմական իրողութիւնները, մշակութային ժառանգութիւնը օտարել այն ստեղծած ժողովրդից: Այս համատեքստում Արցախի պատմա-մշակութային ժառանգութեան ուսումնասիրման եւ հանրահռչակման գործը եղել եւ մնում է օրակարգային եւ հրամայական:

Խորհրդային միութեան ստեղծումով Հայաստանում հնագիտութիւնը դրուեց գիտական հիմքերի վրայ: Արդէն նախորդ դարի 60-70-ական թուականներին հայ հնագիտութիւնը լուրջ յաջողութիւններ էր գրանցել հայոց պատմութեան տարբեր շրջափուլերի, նիւթական մշակոյթի այլեւայլ հարցերի ուսումնասիրման գործում: Կազմակերպուող դաշտային հետազօտութիւնների շրջանակներում պեղումներ են իրականացուել հին եւ միջնադարեան մի շարք հնավայրերում՝ նոր ու անփոխարինելի տուեալներով սնուցելով հայագիտութիւնը: Համակարգուած պեղումներով յայտնաբերուած մեծաքանակ հնագիտական նիւթը համակողմանիօրէն ուսումնասիրուել է, կատարուել են ժամանակագրական եւ տիպաբանական դասակարգումներ, ընդհանրացումներ, հնագիտական իրերի ձեւի եւ որակի հետազօտումներ, որոնք արտացոլուած են մի շարք աշխատութիւններում:

Տաօք, նոյնը չի կարելի ասել Արցախի պարագայում: 20-րդ դարասկզբին նորաստեղծ Ադրբեջանին բռնակցուած Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատմա-ճարտարապետական յուշարձանների ուսումնասիրութիւնն ու յատկապէս պեղումներ իրականացնելու իրաւունքը վերապահուած էր միայն ադրբեջանցիներին: Սկզբնական շրջանում նրանք պարզապէս անտեսում էին պատմամշակութային յուշարձանների առկայութիւնը, իսկ աւելի ուշ, դրանց անդրադառնալիս՝ կանխամտածուած նենգափոխում պատմա-հնագիտական յուշարձաններով հարուստ երկրամասի էթնիկ-մշակութային դիմագիծը, տարբեր յուշարձանների ուսումնասիրութիւնը նախաձեռնում ամէն կերպ դրանք աղուանական մշակոյթին վերագրելու կանխամտածուածութեամբ՝ շատ յաճախ հեռու մնալով գիտական աշխարհում ընդունուած փաստերի ներկայացման մեթոդներից:

Պատմական Արցախ նահանգի մի մասն ընդգրկող ԼՂԻՄ-ի հնագիտական

յուշարձաններից հիմնականում ուսումնասիրում էին վաղ շրջանի (բրոնզ-երկաթի դարեր) յուշարձաններ՝ զերծ մնալով էթնիկ եւ կրօնական հարցերի շօշափումից, քանզի վերջիններս ամենակնճոռոտն էին ադրբեջանցիների համար: Միջնադարեան պատմաճարտարապետական կառույցների եւ հնագիտական յուշարձանների ուսումնասիրութիւնը կատարում էր խիստ կամայականօրէն: Ի զօրու չլինելով տեղական նշանակութեան բազմաթիւ համայնքային եկեղեցիների ոչնչացման պէս քանդելու խոշոր վանքային համալիրները՝ ադրբեջանցիները դրանց ծաւալա-տարածական յօրինուածքին, ճարտարապետութեանը, զարդաքանդակների եւ այլ հարցերի ուսումնասիրութիւններին անդրադառնում էին կեղծարարութեամբ, փորձելով դրանք հեռացնել այն կերտած հայ ժողովրդից եւ հնարաւոր բոլոր միջոցներով ներկայացնել իբրեւ աղուանական մշակոյթի արգասիք:

Այդ տարիներին հայագէտները զրկուած էին Արցախում հնագիտական հետազօտութիւն անելու որեւէ հնարաւորութիւնից: Նման պայմաններում հայ մասնագէտներին մնում էր տարբեր հրապարակումներով հերքել ադրբեջանցի ուսումնասիրողների միտումնաւոր խեղաթիւրուած մեկնաբանութիւնները: Այդ համատեքստում հայագիտութեան խոշորագոյն ձեռքբերումներից էր «Դիվան հայ վիմագրոյթյան» 5-րդ հատորի կազմումն ու հրատարակումը, որը նուիրուած է Արցախի եւ յարակից շրջանների վիմագրերին:

Առանձին ուսումնասիրութիւններ են նուիրուած նաեւ պատմա-ճարտարապետական մի շարք յուշարձաններին: Այդուհանդերձ, ի տարբերութիւն Հայաստանում կատարուող միջնադարեան խոշոր համալիրների պեղումների եւ հայագիտական հետազօտութիւնների, Արցախում, հասկանալի պատճառներով, զերծ էին մնում նմանօրինակ լայնամասշտաբ ձեռնարկումներից: Այդ ամէնի արդիւնքում Արցախի՝ որպէս պատմական Հայաստանի մի մասի, հնագիտական հետազօտումը մնաց անհասանելի, իսկ զուտ հայկական դիմագիծ ունեցող նիւթական մշակոյթը՝ չլուսաբանուած:

Արցախեան շարժումը եւ Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետութեան հռչակումը նոր հնարաւորութիւններ ստեղծեցին Արցախի պատմութեան եւ մշակոյթի բազմաթիւ հարցերի ուսումնասիրման համար: Արցախեան հերոսամարտերից յետոյ, միջնադարեան յուշարձանների համակարգուած եւ մասնակի պեղումները, Արցախի պատմա-ճարտարապետական յուշարձանների ուսումնասիրութեանը նուիրուած առանձին մենագրութիւններն ու յօդուածները նոր էջ բացեցին Հայոց Արեւելից կողմանց նիւթական մշակոյթի ուսումնասիրութեան բնագաւառում:

Յաւօք, 2020թ. արցախեան պատերազմը նորից բեկումնային դարձաւ:

Թշնամու կողմից գրաւուած տարածքներում անպաշտպան մնացին հայի դարաւոր ներկայութիւնը վկայող հազարաւոր յուշարձաններ: Թւում էր՝ ադրբեջանցիների զաւթողական վարքագիծը եւ բարբարոսական վերաբերմունքը հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ ժամանակի ընթացքում կարող էր փոխուած լինել: Սակայն պատերազմից անմիջապէս յետոյ պարզ դարձաւ, որ այն ոչ միայն չի փոխուել, այլեւ դարձել է անթաքոյց եւ տարուած է երկրի բարձրագոյն իշխանութեան ցուցումով:

Ներկայացուող աշխատանքը նուիրուած է յուշարձանների ուսումնասիրութեան պատմութեանը: Հետազոտութեան աշխարհագրական սահմաններն ընդգրկում են Խաչենի իշխանութեան զբաղեցրած տարածքը, որը ներառում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի մեծագոյն մասը, իսկ ժամանակագրական առումով քննութեան առարկայ են միայն միջնադարեան յուշարձանները: Վերջիններս մեծ մասամբ կառուցուել են 11-14-րդ դարերում, երբ Խաչենի եռաճիղ իշխանութիւնը բռնեց իր հզօրացման ուղին՝ կարելոր դերակատարում ստանձնելով եւ՝ քաղաքական, եւ՝ մշակութային գործընթացներում: Ներկայացուող նիւթն առաւել ընկալելի դարձնելու նպատակով, առանձին բաժնով հակիրճ շարադրուել է Խաչենի իշխանութեան վարչա-տարածքային պատկերը եւ պատմա-քաղաքական իրավիճակը: Աշխատանքի ատաղձը հանդիսացող միջնադարեան յուշարձանների ուսումնասիրութիւնը ներկայացուած է երեք ժամանակափուլերով, որը պայմանաւորուած է նաեւ հետազոտողների մեծ թւով: Առանձին բաժին է յատկացուած նաեւ քննարկուող տարածքի միջնադարեան յուշարձանների պեղումներին:

Ուսումնասիրութեան սահմաններում փորձ է արուել ամբողջական ընդգրկմամբ ի մի բերել Խաչենի իշխանութեան ընդգրկած տարածքում մինչ օրս պեղուած եւ ուսումնասիրուած (այդ թւում եւ ադրբեջանցիների կողմից) միջնադարեան յուշարձանները, ամբողջացնել եւ մէկտեղել խնդրին առնչուող պատմական, մատենագրական, վիճակագրական աղբիւրները, գիտական գրականութիւնը, հետազոտողների կարծիքները¹: Այդ տեսանկիւնից աշխատանքը աղբիւրագիտական մեծ նիւթ է պարունակում, որն արժէքաւոր է ոչ միայն Խաչենի իշխանութեան զբաղեցրած տարածքի յուշարձանների, այլ ընդհանրապէս՝ Արցախի պատմա-մշակութային ժառանգութեան հետազոտութեան համար:

1 Աշխատանքում չենք ներառել Արցախի Տիգրանակերպի եւ յարակից միջնադարեան յուշարձանների հետազոտութիւնների արդիւնքները: Դրանք բաւական ծաւալուն են եւ քննութեան առանձին նիւթ են, որոնց ուսումնասիրութիւնը կատարում է Տիգրանակերպի հնագիտական արշաւախմբի անդամների կողմից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ա) ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱ-ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Խաչենի իշխանությունը միջնադարեան Հայաստանի վարչա-քաղաքական խոշոր կազմաորումներից էր, հայոց պատմության եւ մշակույթի մէջ կարեւորագոյն դերակատարում ունեցած շրջաններից մէկը: Որոշակի փոփոխություններով 9-16-րդ դարերը գոյատեւած Խաչենի իշխանութեան տարածքը զբաղեցնում էր «աշխարհացոյց»-եան Արցախի հիմնականում լեռնային շրջանները եւ նախալեռնային շրջանների որոշ հատուածներ:

Խաչենի իշխանութեան աշխարհագրական սահմանների վերաբերեալ կարեւոր սկզբնաղբիւր է «աշխարհացոյց»-ում առկայ Արցախ նահանգի նկարագրութիւնը, չնայած այն հանգամանքին, որ որոշ չափով փոփոխուել էին երկրամասի վարչա-քաղաքական նկարագիրն ու առանձին շրջանների մասին եղած պատկերացումները: Խաչենի իշխանութեան աշխարհագրական սահմանների, նրա կազմի մէջ մտնող գաւառների ուսումնասիրութեանն առաջին անգամ համապարփակ ձեւով անդրադարձել է Բագրատ Ուլուբաբեանը²: Հարկ է նշել, որ Արցախի գաւառների տեղադրութեան եւ նրանց սահմանների վերաբերեալ ուսումնասիրողները միակարծիք չեն: Ու թէեւ վերջին տարիներին Արցախի պատմութեան եւ աշխարհագրութեան նկատմամբ հետաքրքրութեան աճը նպաստել է նաեւ նահանգի պատմական աշխարհագրութեան, ի մասնաւորի՝ գաւառաբաժանման վերաբերեալ նոր աշխատութիւնների ի յայտ գալուն³, այնուամենայնիւ, գիտութեան առջեւ ծառայած մի շարք հարցեր դեռեւս կարօտ են սպառնիչ պատասխանի: Այդուհանդերձ, հանրագումարի բերելով խնդրի շուրջ եղած տեսակէտները՝ պարզ է դառնում, որ իր գոյութեան ընթացքում Խաչենի իշխանութիւնը

2 Բ. Ուլուբաբեան, *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում*, Երևան, 1975, էջ 30-38:

3 Բ. Հարությունյան, *Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 20-43; Ա. Սարգսյան, *Արցախ, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ*, Երևան, 1996; Տ. Գևորգյան, *Արցախի գավառաբաժանումը ըստ «Աշխարհացոյց»-ի*, *Պատմություն և մշակույթ*, 2012, Գ, էջ 162-174; Ա. Յակոբեան, *Սիսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԲ տարի, Վիեննա, 2008, սն. 91-148; նոյնի՝ *Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք)*, Վիեննա-Երեւան, 2009, էջ 213-318; Ա. Եղիազարյան, *Հայոց Արևելից կողմանց իշխանությունները 9-10-րդ դդ.*, ԲԵՀ, 2010, № 1 (*Հայագիտություն*), էջ 25-36; Վ. Բալայան, *Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*, Երևան, 2002, էջ 106:

հիմնականում զբաղեցրել է Արցախի կենտրոնական գաւառները՝ հիւսիսում սահման ունենալով Մոսկի հարաւային լանջերը, հարաւում՝ Վարարակն-Կարկառ գետագիծը, արեւելքում՝ Կարկառ գետի աջափնեակը, իսկ արեւմուտքում՝ Սեւանի աւազանի արեւելեան շրջանները:

Արցախ նահանգի հարաւային շրջանները (յետագայում Դիզակի եւ Վարանդայի մելիքութիւնների ընդգրկած տարածքը), անցնում են ժամանակի ոչ պակաս ազդեցիկ Գորոզուի (Քթիշ) իշխանութեանը:

Ըստ մատենագրական տուեալների, Խաչենի իշխանութիւնն իր անունը ստացել է համանուն բերդից: Առաջին անգամ Խաչեն բերդանունը յիշատակուում է Մովսէս Կաղանկատուացու (Դասխուրանցու) երկու: 9-րդ դարի իրադարձութիւնները նկարագրելիս՝ պատմիչը նշում է, որ 821թ. Ներսէս անունով մի իշխան Դաղիվանքի մօտ՝ Խորածորում, սպանում է Միհրական տոհմից Վարազ-Տրդատ (Բ) իշխանին եւ նրա որդի Ստեփանոսին՝ նպատակադրուելով ոչնչացնել այդ տոհմի արական սերունդը⁴: Սպանուածի կինը զինուելով քաջութեամբ՝ «...առեալ զմնացեալ դուստրն իւր Սպրամ գիշերահէն տաժանելի ուղեւորմամբ մտանէ ի բերդն Խաչենայ՝ բարուրս խորհեալ տան իւրում ամուսնացուցանէ զՍպրամ Ատրնետրսեհի՝ Սահլի որդւոյ»⁵:

Պատմագրութեան մէջ տարածուած տեսակէտի համաձայն՝ Խաչենի բերդը նոյն Կաչաղակաբերդն է, որի աւերակները գտնուում են Խաչենագետի աջափին, Մեծառանից Ս. Յակոբավանքի հարաւային կողմում, Մարտակերտի շրջանի Քոլատակ գիւղի մօտ⁶: Այլ կարծիք ունի Ա. Յակոբեանը, ով Խաչենի բերդը նոյնացնում է Խաչենագետից հարաւ, Վանք գիւղից մօտ Յկմ հարաւարեւմուտք գտնուող Խոխանաբերդի հետ⁷: Առկայ նիւթի հիմամբ, թերեւս, դժուար է նոր խօսք աւելացնել եղած տեսակէտներին, եւ մեր կարծիքով, անհրաժեշտ են նոր տուեալներ, որոնք հնարաւոր են խնդրոյ առարկայ հնավայրերի հնագիտական ուսումնասիրութիւններով:

Խաչենի իշխանութիւնն ամբողջ միջնադարի ընթացքում անփոփոխ սահմաններով գոյութիւն ունեցած վարչա-քաղաքական մէկ միաւոր

4 Լեո, *Երկերի ժողովածու*, հտ. 2, Երևան, 1967, էջ 419:

5 Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը* Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 340:

6 Ա. վրդ. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Տիխիս, 1842, էջ 195*; Մ. եպս. Բարխուդարեանց, *Արցախ, Բագու, 1895, էջ 197-198*; Մ. Յովհաննէսեան, *Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 452*; Ա. Սարգսյան, *Խաչենի ամրոցները*, Երևան, 2002, էջ 39-54; Շ. Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները*, Երևան, 1985, էջ 19:

7 Ա. Յակոբեան, *Խաչէն-Խոխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԴ փարի, Վիեննա, 2010, սն.71-170*: Տե՛ս նաեւ Բ. Հարությունյան, *Հայաստանի պատմության արլաս, Մաս Ա, Երևան, 2004, էջ 81*:

չէր: Աւատատիրական կարգերին բնորոշ անջատողական ձգտումները, միասնական թագաւորութեան վերացումը եւ տարաժամանակեայ ասպատակութիւնները յանգեցնում էին տարածքային նորանոր փոփոխութիւնների: Դրանով հանդերձ, Խաչենի իշխանութիւնը հիմնականում տարածուել է վերը նկարագրուած սահմաններում:

Բ) ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԽԱՉԵՆՈՒՄ

Արցախում իշխող Առանշահիկների եւ 7-րդ դարում Ուտիքում Միհրանեաններ անունով յայտնի իշխանատոհմի միջեւ ընթացող շուրջ երկուհարիւրամեայ պայքարն ասարտուեց առաջինների յաղթանակով: Արդէն 9-րդ դարի առաջին կէսին Առանշահիկներից սերող իշխանական տոհմի մի ճիւղը՝ Սահլ Սմբատեանի գլխաւորութեամբ, իշխում էր Արցախի կենտրոնում՝ Խաչենում, միւսը՝ Եսայի Աբու Մուսէի ղեկավարութեամբ, հարաւային շրջաններում՝ Դիզակում⁸: Իրենց փոքր իշխանութիւններն են հաստատում նաեւ ասատատիրական այլ տներ, որոնք նուազ դերակատարում ունէին երկրի ներքին եւ արտաքին կեանքում⁹:

Խաչենի տիրակալ Սահլ Սմբատեան իշխանը 9-րդ դարասկզբին մի շարք յաղթանակներ տանելով արաբների նկատմամբ՝ ամրապնդում է իր իշխանութեան դիրքերը եւ նոր հողեր ձեռք բերում նաեւ Թարթառի վերնահովտում ու Սեւանայ լճի աւազանում: Մովսէս Կաղանկատուացու վկայութեամբ՝ նա էր «...տէր Սիւնեաց, որոյ բռնազբաւսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ...»¹⁰:

Սահլին յաջորդում է նրա որդին՝ Ատրներսեհը, որին արաբ հեղինակները կոչում էին Մուալիայ: Ն. Ադոնցի կարծիքով՝ վերջինիս իսկական անունն էր Յովհաննէս¹¹, եւ ենթադրում է, որ Մուալիայ նրան կոչում էին միայն արաբները, քանզի այդ անուանը հանդիպում ենք լոկ արաբ պատմիչների մօտ¹²: Ըստ Բ. Ուլուբաբեանի՝ Ատրներսեհն իշխել է Ծարում (Վերին Խաչենում), իսկ Յովհաննէս-մուալիան՝ Կենտրոնական Խաչենում՝ Մեծառանից գաւառում¹³: Եւ իբրեւ թէ՛ Յովհաննէսն իշխանութիւնը ստանձնել

8 С. Бархударян, Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Ереван, 2011, с. 49.

9 Հ. Սվազյան, Արցախյան աշխարհը Միհրանյան տոհմի վերացումից հետո, ԼՀԳ, 2012, № 1, էջ 3:

10 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 340:

11 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը / Երկեր, հր. Ա. Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 510:

12 Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 73-74:

13 Նոյն տեղում:

էր դեռեւս հօր կենդանութեան օրօք, քանզի նրան վերագրուած՝ Մեծառանից Ա. Յակոբավանքի 853թ. արձանագրութեան մէջ նա է յիշուում որպէս Արցախ-խաչենի իշխան¹⁴:

854-855թթ. հակաարաբական ապստամբութիւն կազմակերպելու մեղադրանքով, ի թիւս այլ իշխանների, Սահլն իր որդի Ատրնէրսեհի հետ միասին աքսորուեց Սամարա¹⁵: Աքսորից վերադարձաւ միայն Ատրնէրսեհը եւ շարունակեց իշխանավարումը՝ հիմնական տիրոյթներ ունենալով նահանգի հիւսիսային եւ արեւմտեան գաւառները:

10-րդ դարի բիւզանդական կայսր եւ պատմիչ Կոստանդին Ծիրանածինը (913-959թթ.), թուարկելով Հայաստան աշխարհի պետական այն միատրումները, որոնց հետ բիւզանդական արքունիքն ունէր պաշտօնական գրագրութիւն, յիշատակում է նաեւ Խաչենի իշխանութիւնը, ուր նամակներ են յղուել հետեւեալ վերտառութեամբ՝ «խաչենի իշխանին, Հայաստան»¹⁶:

Վերլուծելով աղբիւրագիտական տուեալները, պատմաբան Ալ. Յակոբեանը նշում է, որ 10-րդ դարի վերջերին Խաչենի (ինչպէս նաեւ Գորոզուի) իշխանութիւնները վերածում են թագաւորութիւնների: Գիտնականի բնորոշմամբ՝ դա այն ժամանակաշրջանն էր, երբ Բագրատունեաց թագաւորները, ըստ էութեան, հաշտուել էին իրենց պետութեան տարածքում փոքր թագաւորութիւնների առաջացման փաստի հետ եւ հէնց իրենք էլ հաստատում էին նրանց թագաւորական լիազօրութիւնները. «Խաչէնի իշխանների թագադրման եւ ինուեստիտուրաների ընդունման ժամանակը, իբրեւ առաւել հաւանական վարկած՝ վերագրելի է 10-րդ դարի 80-90-ական թթ. սահմանագծին»¹⁷:

11-րդ դարի առաջին կէսին Այսրկովկաս սկսեցին ներթափանցել թիրք-սելջուկեան հրոսակախմբերը: Բիւզանդիայի ձեռամբ քայքայուած Բագրատունեաց թագաւորութեան փոխարէն տարբեր տեղերում նշանակուած կայսերական կուսակալներն ի զօրու չեղան դիմագրաւելու սելջուկեան ուժերին:

Արդէն 11-րդ դարավերջից, երբ անցել էին կոտորածներով, կողոպուտով

14 Դիվան հայվիմագրության, պր. V, Արցախ, Կազմեց՝ Ա. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 12, արձ. № 1; Հմմտ. Ա. Յակոբեան, Արքայապոռհմերն ու իշխանապոռհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անփիկից մինչև ԺԳ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երեւան, 2020, էջ 180:

15 Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Հաւաքեց եւ թարգմանեց՝ Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 100-101:

16 Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151:

17 Ա. Յակոբեան, Արքայապոռհմերն ու իշխանապոռհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 249:

Եւ գերեվարութիւններով ուղեկցուող առաջին արշաւանքները, սելջուկ տիրակալները նուաճուած երկրներում սկսեցին աստիճանաբար հաստատել որոշակի կարգուկանոն՝ հնարաւորութիւն տալով վերականգնելու քայքայուած տնտեսութիւնը, վերաշինելու մեծ ու փոքր բնակավայրերը: Այս քաղաքականութիւնն ակնառու դարձաւ յատկապէս Մելիք-շահի օրօք (1072-1092), որի անցկացրած բարեփոխումներն արտացոլուած են շահի մեծ վէզիր Նիզամ ալ-մուքի «Սիասէթ-նամէ» (Կառավարման ձեռնարկ) նշանաւոր երկում¹⁸: Ժամանակագիրները գովասանքով են խօսում Մելիք-շահի մասին՝ փաստելով, որ սուլթանը բարեացակամ էր նաեւ քրիստոնեաների հանդէպ. «...և եղև այր բարի և ողորմած և յոյժ քաղցր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի»¹⁹: Սակայն գահակալի մահից յետոյ, սելջուկեան կենտրոնական պետութիւնը սկսում է քայքայուել, սկիզբ են առնում ներքին գահակալական կռիւները: Ստեղծուած ծանր դրութեանը գումարուեց նաեւ 1139թ. Գանձակի երկրաշարժը՝ «...որով շարժմամբ բազում աւերուած լինէր ընդ բազում տեղիս ի գաւառիս Փառիսոսոյ և Խաչինոյ...»²⁰:

Իրավիճակը փոխուեց միայն 12-րդ դարի կէսերին: Հայաստանի կեանքում տեղի ունեցան քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային աննախադէպ իրադարձութիւններ, որոնք պայմանաւորուած էին մի կողմից սելջուկների կենտրոնական իշխանութեան խարխլմամբ, միւս կողմից՝ վրաց-հայկական ռազմա-քաղաքական դաշինքի ձեւաւորմամբ եւ Ջաքարեանների հայկական իշխանատոհմի հզօրացմամբ: 12-րդ դարի կէսերից ամբողջ Խաչենն ընդգրկուած էր հակասելջուկեան պայքարի մէջ, որի մասին վկայութիւններ են պահպանուել նաեւ Խաչենի վիմագրերում: Օրինակ, Հաթերքի տէր, իշխանաց-իշխան Հասանը 1182թ. գրուած արձանագրութեան մէջ յայտնում է, որ 40 տարի՝ այսինքն՝ 1142-1182թթ., լինելով Խաչենի գահերէց իշխան, շատ պատերազմներ է մղել եւ յաղթել իր բոլոր թշնամիներին. «Ես Հասան, որդի Վախտանգա, տէր Հաթերո եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո եւ Հաւախաղացին, կացի յաւագութեան ամս :Խ: (40) շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն Ա Յ...»²¹:

Հայ-վրացական զինակցութեան արդիւնքում սելջուկներից

18 *Сиасет-намэ, Книга о правлении вазира XI столетия Низам-ал-Мулька, Перевод Б. Заходера, Москва-Ленинград, 1949.*

19 *Մարտէոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 240; Պատմութիւն նահանգին Սիսական. Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 319:*

20 Ղ. Ալիշան, *Հայասպարում, հր. Բ, Վենետիկ, 1901, էջ 276 (Ժաժ Գանձակայ):*

21 *Դիվան հայվիմագրոթյան, պր. V, էջ 198, արձ. № 707:*

ազատագրուեցին Հայաստանի կենտրոնական, հիւսիսային եւ հիւսիսարեւելեան բոլոր գաւառները: Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետը մանրամասն նշում են ազատագրուած երկրամասերը, որոնց թում են նաեւ Հայոց Արեւելից կողմանց պատմական հողերը²²: Ազատագրուած նահանգների ու գաւառների լիիրաւ տէրեր էին դարձել կամ հին իշխանական տների ներկայացուցիչները, կամ էլ ճակատամարտերում առաւել աչքի ընկած զօրավարները²³: Վերջիններիս հետ իրենց կապերն ամրապնդելու նպատակով ամիրսպասալար Սարգիս Զաքարեանն իր երկու աղջիկներին կնութեան է տալիս արցախեան ամենաազդեցիկ իշխանական տների ղեկավարներին: Ակնյայտ է, որ ազգակցական կապերի քօղի ներքոյ Զաքարեանները փորձում էին ապահովել սեփական տոհմի գերագահութիւնը:

Զաքարեանների իշխանապետութեան ժամանակաշրջանը ողջ Հայաստանի միջնադարեան կեանքում առանձնակի կարեւորութիւն ներկայացնող փուլերից մէկն է, քանզի քաղաքական-տնտեսական վերելքին համընթաց ծաղկում ապրեց նաեւ հոգետոր-մշակութային կեանքը: Հայաստանի բոլոր շրջաններում սկսուեց շինարարական եռուզեռ, զարկ տրուեց եկեղեցաշինութեանը՝ խթան հանդիսանալով խաչքարային արուեստի եւ քանդակագործութեան զարգացման համար:

Թուրք-սելջուկեան լուծը թօթափելուց յետոյ, քաղաքական ու տնտեսական վերելքի նոր հեռանկարներ բացուեցին: Արցախն ազատագրելուց յետոյ, հաստատուում է Առանշահիկ տէրերի արդէն եռաճիւղ իշխանական տիրապետութիւնը՝

1. Ներքին Խաչեն (Խոխանաբերդի իշխանութիւն), իշխանանիստն էր Խոխանաբերդը՝ Գանձասարի վանքի մօտ:

2. Կենտրոնական Խաչեն (Հաթերքի իշխանութիւն), նստոցն էր Հաթերք ամրոցը՝ Տրտու-Թարթառի միջին հոսանքի ձախափնեայ ձորալանջին:

3. Ծարի իշխանութիւն (գրականութեան մէջ երբեմն կոչուում է նաեւ Վերին Խաչեն), նստոցն էր ենթադրաբար Հանդաբերդը:

Խաչենում ստեղծուած եռաճիւղ իշխանութիւնները միշտ հանդէս են եկել նրանցից մէկի գահերէցութեամբ: Սկզբում աւագութիւնը պատկանում էր հաթերքցիներին, յետոյ կարճ ժամանակով անցաւ Ծարայ տէրերին, իսկ արդէն 13-րդ դարի 30-ական թուականների վերջից սկսած Խաչենի գահերէց տէրեր ճանաչուեցին միայն խոխանաբերդցիները:

²² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխարհասիրութեամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 163-164; Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 138:

²³ Հայ ժողովրդի պատմություն, հր. 3, Երևան, 1976, էջ 551:

12-րդ դարի երկրորդ կեսին Խաչենի իշխանության գահերէց տէրը Խոխանաբերդի, ապա Հաթերքի գահակալն էր, իշխանաց իշխան



Հանդաբերդ (լուս.՝ Լ. Մկրտչեանի)

Հասանը (1142-1182թթ.)՝ «...տէր Հաթերո եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո եւ Հաւախաղացին...»²⁴: 1182թ. նա թողնում է իշխանութիւնը, աշխարհիկ կեանքը, երկիրը բաժանում որդիների միջեւ եւ կրօնաւորութեան գնում Դադիվանք՝ պատմութեան մէջ մնալով «Հասան Կրօնաւորեալ» մականուամբ: Ալ. Յակոբեանի ճշգրտմամբ, հէնց սրանով է պայմանաւորուած միասնական Խաչենի բաժանումն աւելի փոքր իշխանութիւնների²⁵:

Հասանից յետոյ՝ մինչեւ 1214 թուականը, վեց որդիներից իբրեւ գահերէց

²⁴ Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198, արձ. № 707:

²⁵ Ա. Յակոբեան, Արքայապոռհներն ու իշխանապոռհները Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 312:

իշխեց Վախտանգը: Նրա իշխանութան օրերում Խաչենը շարունակում էր հերոսաբար ետ մղել թուրք-սելջուկեան զորաջոկատների հարուածները: Խաչենցիներն ասպատակիչների դէմ կռուում էին ինչպէս իրենց իշխանութեան սահմաններում, այնպէս էլ հարեան գաւառներում: Այդ մարտերից մէկում զոհուում է Վախտանգի որդիներից մէկը՝ Հասանը, ապա նաեւ ինքը:

1184թ. Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի նստոց Հաթերքում էր հաստատուել նաեւ ժամանակի նշանաւոր օրէնսդիր, առակագիր, գիտնական Մխիթար Գոշը²⁶: Վախտանգն իր եղբայրների հետ միասին, մեծապէս օժանդակում են միջնադարեան Հայաստանի նշանաւոր հոգեւոր կենտրոններից մէկի՝ Նոր Գետիկի վանքի շինարարութեանը՝ կառուցելով Ս. Աստուածածին եկեղեցին, որի շինարարական վիճակը պահպանուել է տաճարի հիւսիսարեւելեան ասանդատան ճակատին²⁷:

Վախտանգ Հաթերքցու մահից յետոյ՝ 1214թ., շինարարական ու բարեգործական բուն գործունէութիւնը շարունակեցին նրա այրին՝ Արզուխաթունն ու դուստրերը: Իշխանուիին աւարտին է հասցնում Դադիվանքի կաթողիկէի կառուցումը²⁸, ձեռագործ ծածկոցներով ու վարագոյրներով զարդարում Գոշավանքը, Դադիվանքը, Հաղբատիվանքն ու Մակարավանքը²⁹:

Վախտանգի մահից յետոյ, Իւանէ Զաքարեան աթաբեկը գահերէցութեան ժառանգորդ չունեցող Հաթերքի իշխանութեան տիրոյթները միացնում է Ծարի իշխանութեանը: Ժամանակագրի վկայութեամբ՝ «...ի վեցհարիւր վաթսուն և երեք թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ»³⁰: Իւանէ աթաբեկը, ինչպէս եւ նրա եղբայր Զաքարէ ամիրսպասալարը, ամէն կերպ ջանում էին ազատագրուած Հայաստանի բոլոր իշխանութիւնները կենտրոնացնել Զաքարեան իշխանների, կամ նրանց հետ խնամիացած տոհմերի ձեռքում: Եւ Խաչենի եռաճիւղ տիրակալութիւնը եւս Զաքարեան տան հետ կապուած էր արինակցական կապերով: Այսպէս, Հաթերքի իշխան Վախտանգի կինը՝ Արզուխաթունը, Իւանէի եւ Զաքարէի քեռի՝ Տփղիսի ամիրայ Քրդի դուստրն էր (Քրդի քոյրը Սարգիս ամիրսպասալարի կինն էր՝ Իւանէի եւ Զաքարէի մայրը):

Սարգսի դուստրերից մեծը՝ Խորիշահը, Ներքին Խաչենի տէր

26 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 209:

27 Դիվան հայ վիճագրութեան, պր. VI, Իջեանի շրջան, Կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Զանփոլադյան, Երևան, 1977, էջ 64-65:

28 Դիվան հայ վիճագրութեան, պր. V, էջ 198, արձ. N° 708:

29 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 215-216; Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութավանք, «Էջմիածին», 1971, 2-է, էջ 62-72:

30 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 140:

Վախտանգի (Հասան-ջալալի հոր) կինն էր, իսկ միւսը՝ Դովիը, Ծարի տէր Հասանի: Անզաւակ Վախտանգ Հաթերքցու մահը յարմար առիթ էր վերանայելու եւ աւելի ամրապնդելու Զաքարեանների ազդեցութիւնը Խաչենի իշխանութիւնների վրայ: Այդպէս, 1214թ. Հաթերքի իշխանութիւնը միացուեց Ծարին, որի իշխանատիկնոջ աթոռը զբաղեցնող Դովիը (Իւանէի քոյրը) դարձաւ Խաչենի մեծագոյն մասի լիիրաւ կառավարիչ:

Ծարի իշխանութիւնը 12-րդ դարի վերջի եւ 13-րդ դարի սկզբի Հայաստանում նոր կազմաւորուած կամ վերահաստատուած այն վարչական միաւորներից էր, որը Զաքարեան իշխանապետերի հովանաւորութեամբ հզօրացաւ եւ հայրենի տիրոջների սահմաններում ձեռնարկեց քաղաքական, տնտեսական ու մշակութային ակտիւ գործունէութիւն:

Պատմական աղբիւրները աղօտ տեղեկութիւններ են հաղորդում Ծարի կամ Վերին Խաչենի իշխան Հասան Ա Ծարեցու մասին, որը մահացել է 13-րդ դարի առաջին քառորդում: Փոխարէնը շատ են վկայութիւնները նրա կնոջ՝ Դովիի վերաբերեալ: Ծարի իշխանութեան հիմնական գործունէութիւնը կապուած է հէնց Դովիի հետ, որը վայելում էր իր եղբայր Իւանէ Զաքարեանի հովանաւորութիւնն ու օժանդակութիւնը: Եւ պատահական չէ, որ Վերին Խաչենի այս իշխանատոհմը յետագայում կոչուեց Դովեան: Հայ իրականութեան մէջ սա բացառիկ երեւոյթ է, երբ իշխանական տունը կոչում է կնոջ անունով: Իշխանուիւ շինարարական գործունէութեան մասին տեղեկանում ենք Խաթրավանքի մատուռի հիւսիսային պատին արուած արձանագրութիւնից, որի համաձայն 1226թ. Դովիը Խաթրավանքում կառուցել է իր տէգր՝ Յովհաննէսի կերտած տաճարի գաւիթը, նաեւ մի մատուռ, վանքին է նուիրել մի աւետարան ու այլ ընծաներ³¹:

13-րդ դարը շրջադարձային էր Խաչենի հայոց իշխանութեան համար: Դարասկզբի կարճատեւ խաղաղութեանը եւ տնտեսական ու մշակութային բուռն վերելքին յաջորդում է մոնղոլական արիւնարբու բանակների ներխուժումը, որն աւարտում է երկրի համատարած նուաճումով: Այս ժամանակ է, որ պատմական ասպարէզ է իջնում Խաչենի մեծ իշխան Հասան-Ջալալը (1214-1261թթ.)՝ «...այր բարեպաշտ և աստուածասէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր...»³², ով Խաչենի իշխանութեան գահերէց տէրերի մէջ առանձնանում է իր բացառիկ կերպարով: «Հասան» անունն արաբերէն բառ է եւ նշանակում է գեղեցիկ³³: Սակայն նրան դրուատանքով կոչում էին նաեւ «Ջալալ», որը նոյնպէս արաբերէն է եւ

31 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 127, արձ. № 420:

32 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 268:

33 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հր. Գ, Հալէպ, 2006, էջ 51:

նշանակում է փառք, վեհութիւն, մեծութիւն³⁴: Մեծ իշխանը կրել է նաեւ փաղաքշական մէկ այլ անուանում՝ «Դաւլա», որն արաբերէն դաւլաթ-դովլաթ բառից է եւ նշանակում է հարստութիւն, իշխանութիւն, իշխան³⁵: Մոնղոլական ահասարսուռ արշաւանքներից ու կոտորածներից յետոյ, Խաչենի տիրակալ Հասան-Ջալալն իր վարած ճկուն քաղաքականութեամբ եւ նուէրներով կարողանում է սիրաշահել մոնղոլ զօրապետներին, ինչի արդիւնքում նրանք համեմատաբար հանգիստ են թողնում Խաչենի բնակչութեանը: Մոնղոլների հետ յարաբերութիւնների բարելամանն էր միտուած նաեւ Հասան-Ջալալի դուստր՝ Ռուզուքանի ամուսնութիւնը Չարմաղանի որդի՝ Բորա-նոյի հետ, որով նրանք առաւել բարեացակամ են դառնում Խաչենի իշխանութեան նկատմամբ:

Հասան-Ջալալի աթոռակալութեան առաջին տարիներին Խաչենում նորից աշխուժանում է տնտեսական եւ մշակութային կեանքը: Նրա օրօք «Խաչեն» անունն արդէն լիովին փոխարինում էր «Արցախ»-ին՝ ցոյց տալով հին նահանգի ամբողջ լեռնային ու նախալեռնային տարածքը՝ առանց Դիզակի, որն ընդգրկում էր Արցախի հարաւային մասը՝ Երասխի ձախափնեակը³⁶:

Մեծ իշխանի կերպարի եւ հզօրութեան մասին են վկայում բազմաթիւ ձեռագիր եւ վիմագիր սկզբնաղբիւրները: Նրա մասին պատկերաւոր նկարագիր է հաղորդում նաեւ անձնական թրի նեֆրիտէ երախակալը՝ «Հասան-Ջալալ իշխան Խաչենոյ» մակագրութեամբ³⁷:

Հասան-Ջալալի գործունէութիւնը նշանաւորում է կատարուած շինարարական աշխատանքներով: Դրանց մասին վկայող առաջին արձանագրութիւնը պահպանուել է Վաճառ աւանի ակերակներում՝ Մարտակերտի շրջանի Ծմակահող գիւղի մօտ³⁸: Նուազ կարելոր չէ նաեւ Հասանի կնոջ՝ Մամքանի ծաւալած եկեղեցաշէն գործունէութիւնը, որը եւ՛ ամուսնու, եւ՛ որդու հետ, եւ՛ առանձին կառուցել կամ վերանորոգել է եկեղեցիներ, կանգնեցրել խաչքարեր, օժանդակել ձեռագիր մատեաններ կազմելուն, որոնք նուիրել է հայրենի վանքերին: 1248թ. Հասան-Ջալալն ու Մամքանը հիմնովին նորոգում են «նետողաց ազգի» ակերած Կեչառիսի վանքը, որի մասին պատմում է վանքում պահպանուած արձանագրութիւնը. «Ես՝ Ջալալ Հասան՝ որդի Վախտանգայ՝ որդոյ մեծին Հասանայ, տէր Խոյախան բերդոյ եւ Խաչենոյ, եւ ամուսին իմ Մամքան, դուստր Բաղաց

34 Նշվ. աշխ., հր. Դ, էջ 286:

35 Նշվ. աշխ., հր. Բ, էջ 76:

36 Բ. Ուրբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 32:

37 Մանրամասն տես Մ. Օրբելու, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью / Избранные труды, Ереван, 1963, с. 135-145.

38 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 78, արձ. № 235:



Գանձասարի վանք: Տեսքը հարաւից (լուս.՝ հեղինակի)

թագաւորին, միաբանեցաք մեծ եւ հռչակաւոր սուրբ ուխտիս Կեչառուաց, եւ տուաք, յաւերման նետողաց բազում գանձիւք վերստին նորոգեցաք... թվին ՈՂԷ (1248թ.)³⁹»: Սակայն, Հասան-Ջալալի եկեղեցաշինական գործունէութեան ամենակարեւոր արդիւնքը եղաւ Գանձասարի վանքի կառուցումը (1216-1238/1240թթ.)⁴⁰:

Ներքին Խաչենում ստեղծուած Խոխանաբերդի իշխանութիւնն ունէր իր վարչական ու հոգեւոր կենտրոնները: Իշխանութեան եպիսկոպոսանիստն էր Գանձասարը, ըստ էութեան՝ առաւել հռչակաւոր կենտրոն, քան գաւառի առաջնորդարանը՝ Ս. Յակոբավանքը, «...եւ դա այն պատճառով, որ Գանձասարն առաւել մօտ էր իշխանանիստին ու միաժամանակ նախնեաց տապանատունն էր»⁴¹: Իշխանութեան վարչական կենտրոնը գտնուում էր Գանձասարից հարաւ՝ Խաչենագետի աջ ափին, եւ կոչւում էր Խոխանաբերդ (Խաւխանաբերդ): Ճիշտ է, Խոխանաբերդի տէրերն ունէին նաեւ ուրիշ հռչակաւոր բերդ-ամրոցներ, ինչպիսիք են Հաւքախաղացը կամ Կաչաղակաբերդը, Ջրաբերդը, Գեռաքարը: Սակայն իշխանանիստը եղել

39 Ա. Յակոբեան, Արքայապոռհմերն ու իշխանապոռհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 341-342: Հմմտ. Հ. Եղիազարյան, Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1955, ԺԲ, էջ 48, արձ. N°57; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 80, արձ. N° 239:

40 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 38, արձ. N° 82:

41 Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 135:

է Խոխանաբերդը, եւ Ներքին Խաչենի իշխանատոհմի անդամներն իրենց կոչում էին այս բերդի անունով՝ «ինքնակալ Խոխանաբերդի»⁴²:

13-րդ դարի վերջերից Ներքին Խաչենի իշխանական տունը սկսեց կոչուել Հասան-Ջալալ իշխանի անունով՝ Հասան-Ջալալեան: Այսպէս էին կոչում նաեւ այն հոգեւորականները, ովքեր ներկայացնում էին նոյն իշխանական տոհմը եւ արդէն ժառանգական իրաւունքով 13-րդ դարից յետոյ տնօրինում էին նահանգի եպիսկոպոսութիւնը, իսկ 15-րդ դարից՝ նաեւ ամբողջ Հայոց Արեւելից կողմանց կաթողիկոսական աթոռը:

1255թ. Հասան-Ջալալը մեծ շքախմբով, որի կազմում էին նաեւ կինը՝ Մամքանը, եւ որդին՝ Աթաբակ-Իւանէն, ուղեւորում է մոնղոլների տիրակալ Բաթու խանի մօտ, որը պատուով է ընդունում Խաչենի իշխանին եւ նրան վերադարձնում «...զհայրենիս իւր զՉարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»⁴³: Սակայն, Հասան-Ջալալի փառքն ու հեղինակութիւնը հանգիստ չէին տալիս տեղի իսլամադաւան մոնղոլ կառավարիչներին, որոնք դաւեր էին նիւթում նրա դէմ: Խարդաւանքներից խուսափելու նպատակով մեծ իշխանը ստիպուած է լինում երկրորդ անգամ գնալ Կարակորում: Վերադարձից մէկ տարի անց՝ 1261թ., իշխանի հանդէպ ատելութեամբ լցուած Արղուն ոստիկանը, հակամոնղոլական ապստամբութիւն կազմակերպելու մեղադրանքով, ի թիւս քրիստոնէայ այլ պաշտօնեաների, ձերբակալում է նաեւ Հասան-Ջալալին, եւ որոշ ժամանակ անց դաժանօրէն մահապատժի ենթարկում նրան:

Հասան-Ջալալի մահից յետոյ իշխանութիւնն անցաւ նրա միակ որդի Աթաբակ-Իւանէին՝ «...հրամանաւ Հուլաուին եւ Արղունին»⁴⁴: Կիրակոս Գանձակեցիին դրուատանքով է խօսում Աթաբակի մասին՝ նրան համարելով «...այր սրբասնունդ, պարկեշտ և խոնարհամիտ և աղօթական, որպէսզի ի սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»⁴⁵: Հայրը Աթաբակին իշխանական աթոռին նախապատրաստել էր վաղ մանկութիւնից, եւ սպասելի էր, որ վերջինս իշխանութեան հետ մէկտեղ կը ժառանգէր նաեւ մեծ իշխանի շինարարական եռանդը: Սակայն, նա ընդամէնը աւարտին է հասցրել Գանձասարի վանքի գաւթի շինարարութիւնը՝ ամբողջացնելով նրա ճարտարապետական յորինուածքը: Գաւթի կառուցումը ներկայացնող արձանագրութեան համաձայն՝ Աթաբակը վանքին է ընծայել նաեւ մի ոսկետուփ աւետարան եւ հարաւկողմեան բլուրն իր սահմաններով⁴⁶:

42 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 38, արձ. № 82:

43 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 359:

44 Նշվ. աշխ., էջ 392:

45 Նոյն տեղում:

46 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 40-41, արձ. № 84:

Աթաբակին յաջորդեց նրա որդի Ջալալը, ում օրօք Խաչենի իշխանութիւնն աստիճանաբար կորցնում է իր վաղեմի հզօրութիւնը եւ այլեւս անկարող գտնուում դիմադրելու թաթար-մոնղոլների կամայականութիւններին: Իշխանութեան թուլացմանը յետագայում նպաստեցին նաեւ ողջ Հայաստանն ակերակների վերածած Լենկ-Թեմուրի արշաւանքները, «...զոր չար թագաւորքն անհաւատք Արեւելից կորուստ բերին Հայկազեան սեռիս...»⁴⁷: Նոր բռնաւորի ասպատակութիւնների, գործած ակերածութիւնների եւ վրայ հասած դժնդակ տարիների մասին տխրալից խօսում է ժամանակագիրը՝ Լենկ-թեմուրին ներկայացնելով իբրեւ «այր մի անողորմ, անգութ, անագորոյն, լցեալ ամենայն չարութեամբ, պղծութեամբ և հնարիւք բանսարկուին սատանայի»⁴⁸:

Երկրի վաղեմի բարեշէն բնակավայրերն ու ամրոցները կիսաւեր վիճակում էին, վանքերում եւ եկեղեցիներում չկար նախկին աշխոյժ մշակութային կեանքը: Արդէն 13-րդ դարի վերջերից Խաչենում նկատուում էր մեծածախս շինութիւնների սակաւութիւնը: Փոխարէնը ակնառու էր փոքրածաւալ կառոյցների կառուցումը, հին յուշարձանների մասնակի վերանորոգումները եւ խաչքարերի առատութիւնը: Սրանով պայմանաւորուած, ո՛չ Ջալալը, եւ ո՛չ էլ նրան յաջորդած միւս իշխանապետերը աչքի չեն ընկնում իրենց ակտիւ գործունէութեամբ, ինչի հետեւանքով սուղ են նաեւ նրանց վերաբերող մատենագրական տուեալները: Այդ ժամանակաշրջանի գահերէց իշխանների մասին հիմնական հաղորդումներ քաղում ենք տարբեր աղբիւրներով ստեղծուած վիմագրերից՝ տեղեկանալով նրանց անուան եւ կառավարման շրջանի մասին⁴⁹:



**Հասան-Ջալալի տապանաքարը Գանձասարի վանքում
(գրչ.՝ Ս. Բարխուդարեանի)**

47 Պատմութիւն Լանկ-Թեմուրայ եւ յաջորդաց իւրոց. Արարեալ Թովմա վարդապետի Մեծորեցոյ, Փարիզ, 1860, էջ 9:

48 Նոյն տեղում:

49 Դիվան հայ վիմագրոյթյան, պր. V, էջ 42, արձ. № 86, էջ 53, արձ. № 130:

16-րդ դարի երկրորդ կեսին՝ պարսկա-թուրքական պատերազմների շրջանում, Խաչենի իշխանութեան կազմում գոյատևող իշխանական միաւորների վրայ ձեւաւորուեցին նոր կազմաւորումներ, որոնց գոյութիւնը 1603թ. վաւերացրեց պարսից շահ Աբասը՝ նրանց օժտելով մելիքական տիտղոսներով ու սահմանուած իրաւունքներով⁵⁰:

Արդէն ուշ միջնադարում Խաչեն անուան տակ հասկացւում էր Խաչենի մելիքութեան ընդգրկած տարածքը՝ հիմնականում Խաչենագետի աւազանում եւ Կարկառի ձախափնեակում, քանզի 16-րդ դարից սկսած նախկին նահանգի տարբեր մասերը զբաղեցնում էին Գիւլիստանի, Ջրաբերդի, Ծարի, Սոթքի, Վարանդայի մելիքութիւնները:

50 Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները / Երկերի ժողովածու, հտ. 9, Երևան, 1987, էջ 417:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Արցախի պատմա-ճարտարապետական յուշարձանների եւ հնավայրերի ուսումնասիրութեան պատմութիւնը պայմանականօրէն կարելի է բաժանել երեք փուլերի. ա) նախախորհրդային շրջան, բ) խորհրդային շրջան, գ) յետխորհրդային կամ անկախութեան շրջան: Դասակարգուած շրջափուլերը իրարից տարբերուծ են ոչ միայն տուեալ ժամանակաշրջանի հասարակարգով, այլեւ յիշեալ ժամանակահատուածներին բնորոշ մասնագէտների պատրաստուածութեամբ, կատարուած հետազոտութիւնների խորութեամբ եւ նիւթի մեկնաբանման անաչառութեամբ: Յատկապէս վերջինս առաւել ակնառու էր խորհրդային ժամանակաշրջանում, երբ Լեոնային Ղարաբաղի պատմամշակութային յուշարձանների ուսումնասիրութիւնը «լիազօրուեց» միայն ադրբեջանցիներին:

Ա) ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հետաքրքրութիւնը Արցախի հնութիւնների նկատմամբ եւ դրանց մասնակի ուսումնասիրութիւնը սկիզբ է առնում 18-րդ դարում: Դրանք հիմնականում հոգեւոր դասի ներկայացուցիչների ձեռնարկումներն են, որոնք առաւելապէս սահմանափակուել են պատմական Հայաստանի տարբեր շրջաններ կատարած ուղեւորութիւններով, յուշարձաններ այցելելով եւ դրանց ընթացքում հանդիպած պատմա-ճարտարապետական յուշարձանների նկարագրութեամբ ու վիմագրերի ընդօրինակութիւններով: Տեղագիր-հետազոտողների հետաքրքրութիւնների առանցքը հայրենի բնութեան ու աշխարհագրութեան, վանքերի ու եկեղեցիների, բերդերի ու քարաւանատների նկարագրութիւնն էր, ինչպէս նաեւ յուշարձանների որմերին եւ շրջակայքում առկայ վիմագիր յիշատակարանների հաւաքումը⁵¹: Եւ շատ դէպքերում վիմագրերով աղքատ յուշարձանները դուրս էին մնում ճանապարհորդ-բանահաւաքների ուշադրութիւնից, ինչի մասին փաստում է 19-րդ դարի հետազոտող Մ. Սմբատեանցը. «...չունէր ամենևին գրուածք. ուստի տեսինք և անցանք...»⁵²:

51 Դիվան հայ վիմագրության, պր. I, Կազմեց՝ Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 19:

52 Մ. արք. Սմբատեանց Նախիջեանցի, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Քայազար գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 230:

Այսօրինակ հետազոտողները, որոնք իրաւամբ ստացել են բանահաւաք-հնասէրների անուանումը, իրենց կատարած աշխատանքով հեռու էին գիտական հետազոտութիւնների անցկացման սկզբունքներից: Այդուհանդերձ, նրանք անդրանիկ քայլերն էին անում պատմական յուշարձանների ուսումնասիրութեան ուղղութեամբ, եւ մեզ հասած աշխատութիւններից շատերը մինչ օրս չեն կորցրել իրենց աղբիւրագիտական արժէքը: Այդ շրջանի նկարագրութիւնների մեծ մասը ներկայացուած է ականատեսի աչքերով, եւ մեր օրերում դրանց կարելիութիւնը չափազանց մեծ է, առաւել եւս, որ ուսումնասիրութեան ենթակայ որոշ յուշարձաններ կան չեն պահպանուել, կան մեզ են հասել կիսավէր վիճակում:

Խաչենի իշխանութեան զբաղեցրած տարածքի վանքերի ու խաչքարերի արձանագրութիւնները հաւաքելու գործին առաջինը ձեռնամուխ է եղել Աղուանիցկաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանը՝ 1718թ.: Նրա աշխատութեան բնօրինակը մնում է անյայտ: Սակայն Եսայի կաթողիկոսի ձեռագրից օգտուելու մասին յիշատակում են Ս. Ջալալեանցը, Հ. Շահխաթունեանցը, Հ. Ղրիմեցին եւ ուրիշներ: Մեզ են հասել այդ աշխատութեան երեք ընդօրինակութիւնները, որոնք պահուում են Մաշտոցի անուան Մատենադարանում: Դրանցից առաջինի հեղինակն է Ս. Էջմիածնի գրագիր Յովհաննէս եպս. Ղրիմեցին: 1821-1822թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Զորագեղցին, վիրահայոց թեմի առաջնորդ Ներսէս արք. Աշտարակեցու եւ այլ հոգեւորականների ուղեկցութեամբ, այցելում է Հայաստանի հիւսիսարեւելեան շրջաններ: 1822թ. ամռանը խումբը, որի կազմում էր նաեւ վեհարանի գրագիր Յովհաննէս եպս. Ղրիմեցին, ժամանում է նաեւ Գանձասար: Այստեղ Ղրիմեցին ամենայն բարեխղճութեամբ արտագրում է Եսայի կաթողիկոսի տետրակը՝ այդ մասին յիշատակելով իր ընդօրինակութեան յիշատակարանում. «Յամի Տեառն 1822, յամսեանն Յովիսի մէկին, ընդ սրբազնակատար Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցեաց և խաչից հնագոյն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան Հայոց ՌՃԿԷ (1718), զոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ»⁵³:

Յաջորդ ընդօրինակումը նոյնպէս կատարուել է Գանձասարի վանքում՝ 1830-1854թթ. Արցախի մետրոպոլիտ Բաղդասար արք. Հասան-Ջալալեանի կողմից, որի մասին եւս խօսուում է նրա աշխատութեան յիշատակարանում.

53 Եսայի Հասան-Ջալալեան, Վիմական արձանագրութիւնք, գրիչ՝ Յովի. եպս., Գանձասար, 1822, ՄՄ Հմր 9923, թերթ 2ա: Բանասեր Պ. Հակոբյանը համարում է, որ այս ընդօրինակութիւնը կատարել է Հովհաննէս եպս. Մշեցին 1822թ. հուլիսի 1-ին (Պ. Հակոբյան, Հայկական վիմագրերը և Խաչատուր Աբովյանը, ՊԲՀ, 1971, № 2, էջ 45):

«Ի ՌՄՇԸ թուին հայոց (1809) ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Պաղտասար վարդապետի Զալալեան և որդւոյ Դանիէլի հազարապետին Տեառն Խաչենոյ»⁵⁴: Վիմագրագէտ Արսէն Յարութինեանի կարծիքով՝ «վերստին նորոգեցաւ արձաններս ի հին օրինակէ» արտայայտութիւնը պէտք է հասկանալ արտագրուեց, ընդօրինակուեց իմաստով⁵⁵:

Եսայի կաթողիկոսի տետրակի երրորդ արտագրութիւնը ներկայացնող ձեռագիրը կազմուել է 1828թ. Յովհաննէս Շահխաթունեանցի կողմից, Աստապատի Ս. Ստեփանոս վանքում⁵⁶: Յաւելենք, որ այդ ձեռագրից զատ, Շահխաթունեանցի կատարած ընդօրինակութիւնները տեղ են գտել նաեւ ատլի ուշ նրա հրատարակած «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» աշխատութեան մեջ. «Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից՝ զորս ժողովեաց և ի խաչարձանաց Եսայի կաթողիկոս նոցին Աղուանից ի թուականութեանն Հայոց ՌՃԿԷ (1718) ի մի տետր. Յորոյ գրուածոց առեալ մեր դիցուք աստէն ի տեղեկութիւն հայրենի հնութեանց»⁵⁷:

Եսայի կաթողիկոսի ներկայացրած վիմագրերի արտագրութիւններն արուել են Գանձասարից, Խաթրավանքից, Դադիվանքից, Եղիշէի եւ Հաւապտուկ վանքերից եւ այլ յուշարձաններից: Ընդօրինակած արձանագրութիւնների հիման վրայ հեղինակը փորձել է ներկայացնել նաեւ Ծարի իշխանութեան տոհմաբանութիւնը: Մեզ հասած ընդօրինակութիւնների համեմատութիւնը առկայ բնագրերի հետ ցոյց է տալիս, որ եկեղեցական նշանաւոր գործիչը մեծ խնամքով եւ ճշգրտութեամբ է արտագրել արձանագրութիւնները, որոնք գրեթէ անփոփոխ ձեւով յետագայում տեղ են գտել Յ. Շահխաթունեանցի, Ս. Զալալեանցի, Մ. Բարխուդարեանցի եւ այլոց աշխատութիւններում:

Խաչենի վիմագրերի յաջորդ ընդօրինակումը կատարել է Եփրեմ կաթողիկոսի ղեկավարած խմբի միւս մասնակից Մեսրոպ Թաղիադեանցը, որի աշխատանքը, ցաւօք, մեզ չի հասել: Իր ճանապարհորդութիւնների գրքում խօսելով արցախեան շրջագայութեան մասին՝ նա նշում է. «Աստանօր

54 Եսայի Հասան-Զալալեան, Վիմական արձանագրութիւնք, ՄՄ Հմր 7821, թերթ 18ա:

55 Ա. Հարությունյան, Եսայի Հասան-Զալալյանի վիմագրագիտական վաստակը (ըստ ՄՄ Հմր 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, Ժ, էջ 117-120: Տե՛ս նաև Ա. Հասան-Զալալյան, Կաթողիկոս Եսայի Հասան-Զալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը, ԼՀԳ, 2011, № 3, էջ 96:

56 Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հյր. Ա. Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաքյան, Երևան, 1965, Հմր 4537, էջ 1232:

57 Յովհ. եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Աշխատասիրութեամբ Ա. Տեր-Ստեփանյանի, Էջմիածին, 2014, էջ 450-471: Հմմտ. Օ. Եգանյան, Հովհաննէս եպս. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի» աշխատության մեջ հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», 1972, Ը, էջ 64:

հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս եւ օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչքարս, եւ ի վէմն ապառաժից. սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, զորս և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցայ՝ որք յետոյ կորեան⁵⁸»:

Գանձասարի ու շրջակայ վանքերի վիմագիր եւ ձեռագիր նիւթերից լայնօրէն օգտուել է մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալեանցը: Եսայի կաթողիկոսի վիմագրերն արտագրելուց բացի, մետրոպոլիտը կազմել է նաեւ Հասան-Ջալալեանների իշխանական տոհմացանկը: Ձեռագրի գոյութեան մասին տեղեկանում ենք հայ մեծանուն վիպասան Րաֆֆու հաղորդումներից: Արցախ կատարած երկամետայ ուղեւորութեան նօթերում նա գրում է, որ Գանձասարի վանքում տեսել է մետրոպոլիտ Բաղդասարի անտիպ աշխատութիւնը. «Գանձասարի վանքի գյուղում, Վախթանգ-բէկ Հասան-Ջալալյանի տանը գտա մի հնամաշ տետրակ: Դա սկսած, բայց չավարտած մի պատմության սևագրությունն է՝ գրված Բաղդասար մետրոպոլիտի ձեռքով, գլխավորապես Հասան-Ջալալյանների տոհմի վերաբերությամբ»⁵⁹: Ձեռագիր մատեանի մասին գրողը յիշատակում է նաեւ «Խամսայի մելիքությունները» աշխատութեան համար աղբիւր հանդիսացող անտիպ նիւթերը թուարկելիս⁶⁰: Յիշեալ ձեռագրի բովանդակութիւնից մի հատուած Րաֆֆին ներկայացնում է մէկ այլ աշխատութեան մէջ. «Ազգաբանութիւն և ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց հանեալ և հաւաքեալ ի պատմութեանցն Հայոց և Աղվանից, և ի յարձանագրեաց ի խաչքարաց և ի տապանաքարաց, եղելոց ի վանս Գանձասարայ և ի շրջակայ նորին վանորայս և տեղիս հանդերձ թուաբանութեամբ, զորս համառօտ շարահիւսեցի ես՝ Բաղդասար միտրոպոլիտ Աղուանից Հայոց, որդի Դանիէլ-բէկ իշխանի և թոռն Մէլիք-բէկ իշխանին Հասան-Ջալալեանց նախկին տերանցն երկրին Արցախոյ գաւառին Խաչենոյ, յաղագս տեղեկութեան ներկայ և ապագայ սերնդոց, տոհմայնոց և ազգականոց իմոց: Գրեցաւ ի ՌՄՂԸ թուին Հայոց և ի 1849 ամի Տեառն»⁶¹:

Խաչենի վիմագրական հարուստ ժառանգութիւնը, եւ առհասարակ՝ նիւթական մշակոյթի յուշարձանները, եղել են նաեւ Սարգիս Ջալալեանցի բազմակողմանի ուսումնասիրութեան առարկան: Հասան-Ջալալեան իշխանական տան շառաւիղը Արեւելեան Հայաստանում իր շրջագայութեան

58 *Ճանապարհորդութիւն Մետրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. Սարկաւազի սրբոյ էջմիածնի ի Հայս, հպ. Ա, Կալկաթա, 1847, էջ 332:*

59 *Րաֆֆի, Խամսայի մելիքությունները / Երկերի ժողովածու, հպ. 9, Երևան, 1987, էջ 606:*

60 *Նշվ. աշխ., էջ 612:*

61 *Րաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի / Երկերի ժողովածու, հպ. 10, Երևան, 1964, էջ 480:*

ընթացքում եղել է պատմական Արցախի գրեթե բոլոր բնակավայրերում, նկարագրել գիղերն ու ավանները, հաւաքել իր ժամանակ դեռեւս պահպանուած վիմագրերի մեծ մասը, ինչպէս նաեւ վանքերում ու մասնաւոր անձանց մօտ գտնուող ձեռագրերի յիշատակարաններն ու բազմաթիւ փաստաթղթեր⁶²: Նրա արտագրութիւններն արուել են բժախնդրօրէն, ուղեգրական տպաւորութիւնները՝ փաստական նիւթի իմացութեամբ:

Արցախի հնութիւնների նկարագրութեամբ աչքի ընկնող յաջորդ ուսումնասիրողը Եղիշէ (Հովակիմ) աւագ քահանայ Գեղամեանցն է՝ կեղծանունը Հայկունի: Հայրենիքի նկատմամբ տաճած ջերմ սիրով եւ այն աւելի խորը ճանաչելու ձգտումով՝ Եղիշէ Գեղամեանցը, եկեղեցական եւ հասարակական աշխատանքից զատ, շրջագայել է նաեւ հայրենիքի զանազան վայրերում եւ հաւաքած նիւթերը հրատարակել ժամանակի պարբերականների էջերում կամ առանձին գրքոյկներով: Բանահաւաքն իր «Ուղեգնացական ակնարկներ»⁶³ աշխատութիւնը շարադրել է Արցախում շրջագայելու ժամանակ: Հակառակ համեստ վերնագրին՝ երկը հարուստ է Արցախի պատմութեանը, վիմագրերին, ազգագրութեանը, բանահիւսութեանը, էթնիկ վիճակագրութեանը, կրթութեան եւ տնտեսութեան վիճակին վերաբերող տուեալներով:

Աշխատութիւնն առաջին անգամ լոյս է տեսել 1885թ. «Մեղու Հայաստանի» երկօրեայ պարբերականում՝ իրարայաջորդ 43 յօդուածներով: Կենդանութեան օրօք հեղինակին այդպէս էլ չի յաջողում յօդուածաշարն ի մի բերել առանձին գրքով, որի պատճառով էլ երկը յանիրաւի դուրս է մնացել Արցախի պատմութեան եւ հնութիւնների ուսումնասիրութեամբ զբաղուող յետագայ հետազօտողների ուշադրութիւնից: Մինչդեռ Գեղամեանցի հայրենագիտական երկը Ս. Զալալեանցի ուսումնասիրութիւնից յետոյ մեզ յայտնի երկրորդ, եւ մի շարք առումներով իր նախորդին լրացնող համապարփակ աշխատութիւն է, որը հրապարակուել է Մ. Բարխուդարեանցի «Արցախ» աշխատութիւնից ուղիղ տասը տարի աւելի վաղ:

Իր ճամփորդութիւնների ընթացքում Հայկունին նկարագրել է այն ժամանակ դեռեւս գործող կամ խոնարհուած բազմաթիւ եկեղեցիներ ու վանքեր, խաչքարեր եւ տապանաքարեր, հաւաքել է ձեռագիր մատեաններ եւ ուսումնասիրել դրանք: Մեզ զբաղեցնող խնդրի տեսանկիւնից արժէքաւոր են Եղիշէ Առաքեալ, Գանձասարի վանք, Հաւապտուկ վանք, Դաղիվանք,

62 Ս. վրդ. Զալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Տփլիս, 1842, Մասն Բ, Տփլիս, 1858*:

63 Ե. (Հովակիմ) *ավագ քին. Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրութիւններ, գիրք XIII, Երևան, 2010*:

Յակոբավանք, Վաղուհասի Տիրամայր (Մայրաքաղաք) վանքերի մասին թողած նրա հաղորդումներն ու վերծանած արձանագրությունները: Ժամանակի սղութեան պատճառով հեղինակը չի կարողացել հետազոտել բոլոր վիմագրերը: Բայց աշխատանքում տեղ գտած վերծանություններն էլ արուած են բարեխղճօրէն եւ հանգամանալից՝ դրանք համադրելով նախորդ հետազոտող Ս. Զալալեանցի «աչքից վրիպած»⁶⁴ վիմագրերի հետ:

Հայոց Արեւելից կողմանց նիւթական մշակոյթի յուշարձանների, պատմութեան, ազգագրութեան եւ այլ հարցերի հանգամանալից ուսումնասիրութեանն է անդրադարձել Մակար Եպս. Բարխուդարեանցը: Կատարած հետազոտութիւնների առաջին արդիւնքը եղաւ գիտնականի հեղինակած «Աղուանից երկիր եւ դրացիք» աշխատութիւնը⁶⁵, որով առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուեցին անդրկուրեան հայաբնակ գաւառներում դեռեւս պահպանուած պատմա-մշակութային յուշարձանները:

Նրա երկրորդ եւ առաւել բարձրարժէք հրապարակումն էր «Արցախ» գիրքը: Խորապէս գիտակցելով իր աշխատանքի արժէքն ու կարեւորութիւնը՝ աշխատութեան առաջաբանում հեղինակը նշում է. «Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն»⁶⁶:

Աշխատութիւնն ընդգրկում է Արցախի եւ Ուտիքի ամբողջ տարածքի պատմա-ճարտարապետական յուշարձանները, վիմագրերը, եկեղեցիներում ու մասնաւոր հաւաքածուներում պահպանուած ձեռագրերի նկարագրութիւններն ու յիշատակարանները, դիտողութիւններ եւ դատողութիւններ այդ ամէնի վերաբերեալ, որոնցից շատերն ընդունուել են մեր պատմագիտութեան կողմից ու հիմք դարձել յիշեալ տարածքներում եղած պատմական դէպքերի ճշգրտման եւ աշխարհագրական տեղանունների յստակեցման համար: Մակար Եպիսկոպոսի վիմագրական նիւթերի

64 Նշվ. աշխ., էջ 69:

65 Մ. ծ. վրդ. Բարխուդարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893:

Վերահրապարակւոյթունը տե՛ս Մ. Եպս. Բարխուդարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, հատորը կազմեց՝ Պ. Չորանեան, Երևան, 1999:

66 Մ. Եպս. Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 5:

հաւաքածուն ամենահարուստն է իր նախորդների ընդօրինակութիւնների համեմատ: Լինելով Արցախից (ծնունդով՝ Խնածախ գիւղից), Բարխուդարեանցը քաջ գիտէր երկրամասի պատմութիւնը, ինչը նրան օգնում էր համեմատաբար հեշտ կարգալու կիսախաթար վիճագրերը: Նա հաւաքել է վիճական արձանագրութիւններ, արտագրել ձեռագիր յիշատակարաններ, նկարագրել գրեթէ բոլոր բերդերը, վանական համալիրները եւ եկեղեցիները: Մակար եպիսկոպոսի հաւաքած նիւթերն անգնահատելի նշանակութիւն ունեն իրենց հաւաստիութեամբ, բազմազանութեամբ եւ գրեթէ սպառնիչ ամբողջականութեամբ: Չնայած դրան, աշխատութեան մէջ կան որոշակի թերութիւններ. յաճախ հեղինակը փաստերին տալիս է կամայական բացատրութիւններ, պատմական տարբեր շրջաններին վերաբերող նիւթի պակասը լրացնում սեփական ենթադրութիւններով, եւ որ ամենատարածուածն է՝ յաճախ տեսանելի է մի կողմից 19-րդ դարի Արցախի, իսկ միւս կողմից՝ պատմական Խաչենի հետ կապուած տարբեր փաստերի շփոթութիւնը: Այդուհանդերձ, Մ. Բարխուդարեանցի ծաւալուն աշխատութիւնն առ այսօր կարելի էր աղբիւրագիտական հենք է Արցախի պատմութեամբ եւ հնութիւններով զբաղուողների համար:

Հայրենի լեռնաշխարհի նիւթական եւ հոգեւոր մշակոյթի հնօրեայ արժէքների բազմակողմանի ուսումնասիրութիւններով աչքի է ընկնում վարդապետ Խաչիկ Դադեանը, ով առանձնակի ուշադրութիւն է դարձրել նաեւ Արցախի պատմութեանն ու հնագիտութեանը: Խաչիկ Դադեանի գործունէութիւնն ընդգծելու համար նշենք, որ գերմանացի Էմիլ Ռեսլերից յետոյ, նա առաջին հայ հետազօտողն էր, ով հնագիտական ուսումնասիրութիւններ կատարեց Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ պեղելով Առաջածոր, Քոլատակ, Մաղաուզ, Կիչան գիւղերի շրջակայքում գտնուող մի շարք կուրգաններ⁶⁷: Դրա հետ մէկտեղ, հետազօտողը հաւաքել է նկարագրել է Արցախի հոգեւոր կենտրոններում պահուող տասնեակ ձեռագրեր, հրապարակել դրանց յիշատակարանները, բազմաթիւ հրովարտակներ եւ այլն: Միաժամանակ զբաղուելով նաեւ բանահաւաքչական աշխատանքներով՝ Խ. Դադեանը արժէքաւոր տուեալներ է հաւաքել Արցախի բնակավայրերի, գաւառների, բնակչութեան թուի, սրբավայրերի եւ առանձին եկեղեցիների մասին՝ նպատակ ունենալով գրել Ղարաբաղին նուիրուած ժողովրդագիտական աշխատութիւն⁶⁸:

67 Յ. Թօփճեան, Յուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, Մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 63-74:

68 «Արարար»-ի ժառանգությունը, Գ, Խաչիկ ծ. վրդ. Դադեան, Հոդվածների ժողովածու, Կազմեց՝ Ն. Պետրոսյանը, Էջմիածին, 2007, էջ 10:

Նրա գործունեության կարեւոր մասն է կազմում վիճաբերի հաւաքումը, որոնցից շատերը հրատարակուել են «Արարատ» եւ «Բանասէր» պարբերականներում, իսկ մի մասն անտիպ է եւ գտնուում է Հայաստանի ազգային արխիւում⁶⁹: Երեք տարի լինելով Մեծարանից Ս. Յակոբավանքի վանահայր՝ վարդապետն առաջինն է ուսումնասիրել վանքի վիճաբերը⁷⁰, Առաջածոր գիւղի տարածքից⁷¹ եւ մի շարք այլ վայրերից հաւաքել եւ հրատարակել է բազմաթիւ արձանագրութիւններ⁷²: Նրա գրչին են պատկանում նաեւ առանձին պատմագիտական աշխատութիւններ, որոնցից քննուող խնդրի համար առաւել արժէքաւոր է «Համառօտ տեղեկագիր Արցախի «Ղարաբաղի» թեմի վանքերի» ուսումնասիրութիւնը⁷³: Վերջինս կարեւոր տեղեկութիւններ է պարունակում արցախեան մի շարք վանքերի վիճակի, առանձին կառոյցների մանրամասների, դրանց պահպանուածութեան վիճակի մասին:

Արցախի պատմութեան, աշխարհագրութեան եւ մշակոյթի տարբեր հարցերի ուսումնասիրութեանն է անդրադարձել նաեւ Մխիթարեան միաբան Ղեւոնդ Ալիշանը: Բնաւ չլինելով Հայաստանում, նա իր կուտակած հարուստ գիտելիքի շնորհիւ, ներկայացրել է քննութեան առարկայ տարածքների մանրակրկիտ նկարագրութիւնը, առանձին յուշարձանների տեղադրութիւնը: Արցախին նուիրուած իր պրպտումները գիտնականն ամփոփել է «Արցախ» պատմա-աշխարհագրական երկում, որն առաջին անգամ հրատարակուել է յետմահու՝ «Բազմավէպ» հանդէսի 1988-1989թթ. համարներում: Այս երկում Ալիշանը մանրամասն նկարագրել է Մեծ Հայքի Արցախ նահանգի գաւառները, բնակավայրերը, բերդերը եւ վանքերը⁷⁴: Թէեւ վաստակաշատ գիտնականի մօտ յաճախ բացակայում են իր օգտագործած աղբիւրները, այնուհանդերձ նրա աշխատութիւնը մնում է անգնահատելի հետազօտութիւն Արցախի տարբեր հարցերի լուսաբանման համար:

Արցախի պատմա-ճարտարապետական յուշարձանների

69 Խ. Դադյան, *Խաչեն գավառի եկեղեցիների պատերից, խաչքարերից և փայտանաքարերից քաղված արձանագրություններ*, Հայաստանի ազգային արխիւ, ֆոնդ 319, ցուցակ 1, գործ № 5; նոյնի՝ *Ճանապարհորդական նշումներ Ղարաբաղի գյուղերում գտնված խաչքարերի, գերեզմանաքարերի և շինությունների պատերի վրա եղած արձանագրությունների մասին*, նոյն տեղում, գործ № 9:

70 Խաչիկ ծ. վրդ. Դաւրեան, *Մեծարանց որ եւ Ս. Յակոբայ վանից արձանագրութիւնները*, «Բանասէր», հր. 3, պր. Բ և Գ, Պարիս, 1901, էջ 135-147:

71 Խաչիկ վարդապետ, *Առան երկիր կամ աշխարհ*, «Արարատ», 1896, Ե, էջ 233-234:

72 Ա. Ղազիյան, *Վավերագրեր Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանի հավաքածուից*, ՊԲՀ, 2006, № 3, էջ 276:

73 Խ. ծ. վրդ. Դաւրեան, *Համառօտ տեղեկագիր Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի*, «Արարատ»-ի ժառանգութիւնը, Գ, էջ 29-38:

74 Ղ. Ալիշան, *Արցախ, Թարգմանութիւնը գրաքարից՝ Գ. Թոսունյանի*, Երևան, 1993:

ուսումնասիրողների շարքում իր ուրոյն տեղն ունի նաեւ վիպասան Ռաֆֆին: Իր «Դավիթ Բեկ» եւ նախապատրաստուող «Խամսայի մելիքությունները» ստեղծագործութիւնների համար լրացուցիչ փաստական նիւթ հաւաքելու նպատակով՝ գրողը ձեռնարկել է երկամետայ ուղեւորութիւն դէպի Արցախ եւ Սիւնիք⁷⁵: Այդ ընթացքում նա շրջել է 17-րդ դարում Արցախում ձեւաւորուած հինգ մելիքութիւնների տարածքով՝ այցելելով երբեմնի իշխանանիստ ամրոցները, վանքերը, տոհմային տապանատները, ուսումնասիրել հին գրչագիր մատեանների յիշատակարանները: Ռաֆֆու հետաքրքրութիւնները սահմանափակուել են Արցախի պատմութեան միայն ուշմիջնադարեան՝ մելիքական ժամանակաշրջանով ու այդ ժամանակ եղած պատմա-ճարտարապետական յուշարձաններով, որոնց մի մասն արդիւնք է ոչ վաղ անցեալում ապրած իշխանների շինարարական գործունէութեան: Այդուհանդերձ, դրանց նկարագրութիւնները հարուստ փաստական նիւթ են պարունակում, ուստի եւ կարելոր աղբիւր են նաեւ մերօրեայ ուսումնասիրողների համար: Պակաս կարելոր չեն նաեւ բաւական խնամքով արտագրուած վիմագրերը (որոնց մի մասը տեղ է գտել նաեւ Ս. Ջալալեանցի, Մ. Բարխուդարեանցի աշխատութիւններում)՝ «Ռաֆֆուն ուրոյն տեղ ապահովելով հայ վիմագրագիտության բնագավառում»⁷⁶:

Արցախի վանքերի, բերդերի եւ առհասարակ՝ երկրամասի հնութիւնների նկարագրութեամբ աչքի է ընկնում նաեւ հայոց պատմութեան եւ մշակոյթի երախտաւոր Լէոն (Առաքել Բաբախանեան): Ռաֆֆու պատմա-վաւերագրական ուսումնասիրութիւններից մեծապէս ոգեշնչուած՝ շուշեցի գրողը եւս նախաձեռնել է հայրենագիտական ուղեւորութիւններ Արցախի տարբեր վայրերով: Դրանց ընթացքում հեղինակը շարադրել է տարբեր յուշարձանների պատկերաւոր նկարագրութիւնները, որոնք ուղեկցում են հայրենի բնաշխարհի, բնակավայրերի, դրանց բնակիչների նիստուկացի, ժողովրդական ծէսերի ու արժէքաւոր այլ նկարագրութիւններով. «Ես ուշադրութիւն եմ դարձրել հնութիւնների վրա, որովհետս դրանք էին մեր ուղեցույցները, մեր նպատակը»⁷⁷: Խնդրոյ առարկայ թեմայի համար յատկապէս կարելոր են Լէոյի հաղորդումները Ջրաբերդի, Գանձասարի, Յակոբավանքի, Եղիշէի վանքի վերաբերեալ՝ ներկայացուած գիտնականին բնորոշ բազմակողմանի վերլուծութիւններով, սթափ եւ խորաթափանց


75 Ռաֆֆի, *Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում / Երկերի ժողովածու, հտ. 9, Երևան, 1987, էջ 230-285*:

76 Ա. Հարությունյան, *Ռաֆֆու հավաքչական աշխատանքների վիմագրական նշանակությունը, Հայոց լեզու և գրականություն, 2011, № 5, էջ 49*:

77 Լեո, *Իմ հիշատակարանը / Երկերի ժողովածու, հտ. 8, Երևան, 1985, էջ 32*:

դատողութիւններով⁷⁸:

Խաչենի նիւթական մշակոյթի ուսումնասիրութեանը, նրա գահերէց իշխան Հասան-Ջալալի գործունէութեանն ու պատմական անցքերին վերաբերող արժէքաւոր հետազոտութիւններ է կատարել ակադէմիկոս Յովսէփ Օրբելին⁷⁹: Նկատենք, որ անուանի գիտնականի հետաքրքրութիւնը Խաչենի նկատմամբ կապուած է պատահական դէպքի հետ: 1908թ. Կովկասի հնագիտական թանգարանի տնօրէնի տեղակալ Ռ. Շմիդտը Թիֆլիսում գտնուող պետերբուրգեան ուսանող Օրբելուն ցոյց է տալիս դաշոյնի մուգ-կանաչաւուն նեֆրիտէ դաստակ, որի վրայ պահպանուել էր հայատառ, փակագիր արձանագրութիւն: Ձեռնամուխ լինելով վերջինիս հետազոտութեանը՝ Օրբելին պարզում է, որ դաշոյնը պատկանել է Խաչենի տիրակալ Հասան-Ջալալ իշխանին, որի անունը պահպանուել է դաշոյնից մնացած դաստակի վրայ՝ «Հասան-Ջալալ իշխան Խաչենոյ»:



Հասան-Ջալալի դաշոյնի արձանագիր դաստակը (լուս.՝ Բ. Բարատովի, գրչ.՝ Հ. Օրբելու)

Դաշոյնի ուսումնասիրութեանը նուիրուած յօդուածը⁸⁰ տպագրելուց յետոյ, Հասան-Ջալալի կերպարով ոգետրուած Օրբելին ձեռնամուխ է լինում գրելու նաեւ դաշոյնը կրած իշխանի մասին՝ նպատակ ունենալով ներկայացնել Խաչենի տէր Ջալալի կեանքն ու գործունէութիւնը, կարեւորագոյն իրադարձութիւնները եւ պատմական այն միջավայրը, որում գործել է մեծ իշխանը: Այդ նպատակով, ուսումնասիրելով վիմագիր եւ մատենագիր բազմաթիւ նիւթեր, Օրբելին հեղինակում է գիտական մի աշխատութիւն Հասան-Ջալալի մասին⁸¹, որը նոր խօսք էր հայագիտութեան մէջ: Այս երկու

78 Նշվ. աշխ., էջ 97-198:

79 Ի. Ղարիբջան, Հովսէփ Օրբելի, «Հուշարձան», Թ, Երևան, 2014, էջ 157-158:

80 Ի. Օրբելու, *Нефритовая кинжальная рукоять с армянской надписью / Избранные труды*, Ереван, 1963, с. 135-145.

81 Ի. Օրբելու, *Կասան-Джалал, князь Хаченский / Избранные труды*, с. 146-174.

աշխատութիւնները հեղինակի կողմից 1909թ. յունուարին ներկայացուել են Կայսերական ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքին, ինչի արդիւնքում Ն. Մառը երիտասարդ կովկասագէտին գործուղում է Խաչեն՝ գիտահետազոտական աշխատանքները շարունակելու նպատակով:

Հասան-Ջալալին վերաբերող նիւթերը տեղում ուսումնասիրելու, եւ առհասարակ, Խաչենի հարուստ վիմագրական նիւթը հետազոտելու նպատակով, 1909թ. ամռանը Օրբելին ժամանում է Խաչեն: Այստեղ նա մնում է ընդամէնը 17 օր՝ ընդօրինակելով է շուրջ 270 արձանագրութիւն Խաչենի իշխանութեան տարբեր յուշարձաններից: Հաւաքած նիւթի հիման վրայ, գիտնականը շարադրում է «12-13-րդ դարերի Խաչենի խաչքարերի կենցաղային բարձրաքանդակները» յօդուածը⁸², դրանով իսկ մատնանշելով, թէ հինաւորց այդ երկրամասի քարակոթողներն ու վիմագրերը որքան հարուստ եւ բազմազան նիւթ կարող են տալ պատմաբաններին, հնագէտներին, ազգագրագէտներին:

Պէտք է նշել, որ Հ. Օրբելու գիտական աշխատանքները նոր խօսք էին հայ հնագիտութեան ձեւաւորման ասպարէզում: Պատմական Խաչենի իշխանութեան տարածքում նրա կատարած կարճատեւ հետազոտութիւնների արդիւնքում լոյս տեսան Արցախի միջնադարեան պատմութեանն ու մշակոյթին նուիրուած մի շարք ուսումնասիրութիւններ, որոնք յետագայում կարելի էր ունեցան խնդրոյ առարկայ տարածաշրջանը հետազոտող միւս մասնագէտների համար:

1911թ. ամռանը, Էջմիածնի սինոդի հրամանով, Արցախ է ժամանում Մեսրոպ Մագիստրոս արք. Տէր-Մովսիսեանը, որին յանձնարարուած էր մանրամասն ծանօթանալ Հաղարծին, Թարգմանչաց (Գանձակի գաւառ), Չարէքայ եւ Խօթայ (Դադիվանք) նշանաւոր վանքերի տնտեսա-կառավարչական կացութեանը, վանքապատկան կալուածների դրութեանը: Այդ աշխատանքներին զուգահեռ Տէր-Մովսիսեանը կատարել է նաեւ յիշեալ վանքերի նկարագրութիւնները՝ դրանցում առկայ մի շարք արձանագրութիւնների վերծանութիւններով հանդերձ⁸³: Մեզ զբաղեցնող խնդրի տեսանկիւնից արժէքաւոր են նաեւ արքեպիսկոպոսի ուղեւորութեան ընթացքում հանդիպած յուշարձանների հանգամանակից նկարագրութիւնները, «...որոնք մեծ կարևորութիւն էին ներկայացնում նաև պատմական և հնագիտական տեսակէտից»⁸⁴:

82 И. Орбели, Бытовые рельефы на крестных камнях Хачена XII и XIII веков /Избранные труды, с. 196-204.

83 Մ. եպս. Տէր-Մովսիսեան, Հայկական արձանագրութիւններ, Ազգագրական հանդէս, Թիֆլիս, 1913, № 2, էջ 61-84:

84 Նշվ. աշխ., էջ 61:

Կատարած հետազոտությունների առաել ամփոփ պատկերը տարիներ անց Մեսրոպ արքեպիսկոպոսը շարադրել է առանձին աշխատության մէջ, Դադիվանքի նկարագրությունները ներկայացնելով պատմական անցքերի մանրամասներով, հայկական միւս վանքերի հետ ունեցած ճարտարապետական եւ կառուցողական զուգահեռներով: Աշխատութեան մէջ հետազոտողն անդրադարձել է նաեւ Դադիվանքի ու Գանձասարի վանքի ընդհանրութիւններին, հոգեւոր եւ աշխարհիկ կեանքում ունեցած դերին ու նշանակութեանը՝ եզրակացնելով, որ Դադիվանքում «հոգեւոր շեշտուած կեանքին կից, ժողովրդական մեծ սրբավայր է եղել, համապատասխան ուխտագնացութիւններով»⁸⁵: Մեսրոպ արքեպիսկոպոսն առաջինն էր, որ մանրամասն անդրադարձել է նաեւ Դադիվանքի Կաթողիկէ եկեղեցում պահպանուած որմնանկարների նկարագրութեանը, որը սկզբնաղբիւրի դեր է կատարել յետագայ ուսումնասիրողների համար⁸⁶:



**Դադիվանքի ընդհանուր տեսքը 20-րդ դարի սկզբին
(լուս.՝ Գ. Յովսէփեանի, ՀՊԹ⁸⁷ արխիվ)**

Հայոց Արեւելից կողմանց հոգեւոր եւ նիւթական մշակոյթի տարբեր

85 Մ. մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 84:

86 Նշվ. աշխ., էջ 87:

87 Հայաստանի պատմութեան թանգարան:

հարցերի բազմակողմանի հետազոտութանն է անդրադարձել նաև Գարեգին Յովսէփեանը, որի հեղինակած պատմա-հնագիտական ուսումնասիրութիւնները եւ հայ մշակոյթին վերաբերող հետազոտութիւնները կատարուել են տեսական եւ գործնական գիտելիքների լուրջ համադրմամբ⁸⁸: Ծնունդով արցախցի գիտնականը (Մարտակերտի շրջանի Մաղաուզ գիւղից) ջանասիրութեամբ հետազօտել է Գանձասարի շրջակայքի Հաւապտուկ, Կօշիկ անապատ, Գեռաքարի յուշարձանների եւ այլ վայրերի վիմական արձանագրութիւնները, մանրակրկիտ ուսումնասիրել հնամեայ ձեռագրերը եւ մատենագրական այն աղբիւրները, որոնցում տեղեկութիւններ են պահպանուել Խաչենի ու Նրա գահերէց տէրերի վերաբերեալ:

Իր պրպտումների արդիւնքում Գ. Յովսէփեանը հրատարակել է հայ պատմագիտութան մեծարժէք հետազոտութիւններից մէկը՝ «Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ» եռահատոր աշխատութիւնը⁸⁹, որը նուիրուած է Խաչենից ծագող իշխանական տոհմերից մէկին՝ Խաղբակեաններին: Աշխատանքում, տարբեր առիթներով պատմութեան անցքերը քննելիս, գիտնականը յաճախ է անդրադարձել նաև քննուող տարածաշրջանի հոգեւոր կառոյցներին, դրանց վիմական արձանագրութիւններին, վերլուծել նախորդ հետազոտութիւնները, տեսակէտները:

Բ) ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1921թ. յուլիսի 5-ին, ՌԿ(Բ)Կ Կովկասեան բիւրոյի որոշմամբ, Լեոնային Ղարաբաղը միացուեց Խորհրդային Ադրբեջանին, իսկ երկու տարի անց՝ 1923թ. յուլիսի 7-ին, նորաստեղծ Ադրբեջանի կազմում ձեւաւորուեց Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ)⁹⁰: Պատմական այս որոշումը ճակատագրական եղաւ Արցախի համար՝ սերմանելով եւ ժամանակի ընթացքում հասունացնելով նոր ու կտրուկ գործողութիւնների դիմելու դրդապատճառներ: Նորակազմ Ադրբեջանի տարածքում յայտնուած պատմական Արցախի հազարաւոր յուշարձանները եւ դրանք կերտած հայ

88 20-րդ դարասկզբին Գ. Հովսէփյանը մասնակցել է Ն. Մառի ղեկավարությամբ կազմակերպված Գառնիի պեղումներին, որից հետո ընտրվել է նաև Պեպերբորգի կայսերական հնագիտական ընկերության անդամ (տես Ս. Հարությունյան, Գ. Հովսէփյանը որպէս բնագետ, ՊԲՀ, 1968, № 1, էջ 148):

89 Գ. արք. Հովսէփյան, Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, մասն Բ, Երուսաղէմ, 1942, մասն Գ, Նիւ Եորք, 1942/3:

90 Нагорный Карабах в 1918-1923гг., Сборник документов и материалов, Ред. В. Микаелян, Ереван, 1992, с. 19.

ժողովրդի պատմութիւնը դարձան ադրբեջանցի մասնագէտների հիմնական գլխացալանքը եւ հայագէտների հակադէտութեան գլխաւոր թիրախը:

Խորհրդային իշխանութեան առաջին տարիներից հայ գիտնականներին արգելուած էր շօշափելու Արցախին վերաբերող որեւէ հարց, իսկ Ադրբեջանի գիտական շրջանակներում ի սկզբանէ որդեգրուել էր մի սկզբունք՝ ամէն կերպ շրջանցել Արցախի թեման⁹¹: ԼՂԻՄ-ի եւ նրան հարող տարածքների քրիստոնէական բազմահազար յուշարձանների գոյութիւնը ադրբեջանցիների կողմից պարզապէս անտեսուում էր: Բաքուի հնագէտներն ուսումնասիրութեան օբյեկտներ էին ընտրում հիմնականում բրոնզ-երկաթեդարեան ժամանակաշրջանի յուշարձանները: Հնագոյն մշակոյթների ուսումնասիրութիւնը ԼՂԻՄ-ի տարածքում արւում էր՝ մի կողմից շրջանցելու միջնադարեան յուշարձաններից անբաժան էթնիկ-կրօնական հարցերը, միւս կողմից՝ ի ցոյց դնելու երկրամասում եւս կատարուող հնագիտական աշխատանքների ձեռքբերումները:

Սկսած 1950-ական թուականներից, երբ զուտ քաղաքական նկատառումներով ստեղծուեց «Աղուանական տեսութիւնը», համաձայն որի ադրբեջանցիները պատմական Աղուանքի յետնորդներն են, Բաքուի հետազօտողները սկսեցին Կուրի աջափնեակը ներկայացնել իբրեւ աղուանական տարածք, իսկ այնտեղ ապրած եւ ստեղծագործած ժողովրդին՝ աղուաններ⁹²: Այդ ճակատագրին արժանացան իշխան Սահլ Սմբատեանը, պատմիչներ Մովսէս Կաղանկատուացին (Դասխուրանցին), Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Գոշը եւ այլոք⁹³: «Աղուանական տեսութեան» սպասարկմանը եւ գիտական հիմնաւորմանը ծառայող միջոց դիտարկուեցին նաեւ պատմական Հայաստանի արեւելեան շրջանների քրիստոնէական յուշարձանները: Այդ նկատառումներով՝ 1960-1970-ական թուականներին ադրբեջանցիները սկսեցին անդրադառնալ Արցախի մի շարք նշանաւոր վանական համալիրներին՝ փորձելով դրանք ներկայացնել իբրեւ աղուանական մշակոյթի արգասիք եւ պնդելով, որ 10-13-րդ դարերի արցախեան վանքերն առնչութիւն չունեն հայերի հետ⁹⁴: Բաքուի կողմից տարուող մշակութային

91 Վ. Սաֆարյան, Արցախի մշակութային ժառանգության օտարացման և յուրացման մեթոդաբանությունը ադրբեջանական պատմագիտության մեջ, ԱրՊՀ Հայագիտական հանդես, Ստեփանակերտ, 2010, № 1, էջ 160:

92 Ս. Դադայան, Արցախի պատմամշակութային ժառանգությունը, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը, Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջ 19:

93 З. Бунияттов, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965 с. 12, 81.

94 С. Карапетян, Состояние армянских исторических памятников в Азербайджане и

այդ բռնազավթման քաղաքականությանը զուգահեռ, հայ մասնագետները հնարատրությամբ չունէին հնագիտական ուսումնասիրություններ իրականացնել ԼՂԻՄ-ի տարածքում: Արդիւնքում՝ պատմական Հայաստանի մաս կազմող Լեռնային Ղարաբաղի պատմա-մշակութային ժառանգութեան ուսումնասիրությունը դուրս մղուեց Խորհրդային Հայաստանում գիտական հիմքերի վրայ դրուած հայագիտական հետազոտությունների ընդհանուր գործընթացից:

Վերջնականապէս համոզուելով, որ պետական ամենաբարձր օղակներից ուղղորդուող ադրբեջանական նման վարքագիծը միտում ունի հայաթափելու Արցախը, իսկ նրա մշակութային արժէքները ներկայացնելու իբրեւ ադրբեջանական ժառանգութեան մաս, 1960-ական թուականներից հայ մասնագետները սկսեցին ակտիւօրէն անդրադառնալ ղարաբաղեան հարցին՝ յատկապէս շեշտադրելով Կենտրոնական Հայաստանի եւ Արցախի պատմութեան ու մշակոյթի անքակտելիութիւնը⁹⁵: Իրենց յօդուածներում ադրբեջանական նենգափոխումների դէմ եւ դրանց կանխարգելման կոչերով հանդէս եկան Կ. Մելիք-Օհանջանեանը, Ա. Մնացականեանը, Բ. Ուլուբաբեանը, Պ. Մուրադեանը, Բ. Յարութիւնեանը, Ա. Յակոբեանը, Հ. Սվազեանը եւ այլ հետազոտողներ⁹⁶, որոնց նախաձեռնությունները յետագայ տարիներին առաւել տարածուած եւ սուր բնոյթ ստացան⁹⁷:

Խաչենի իշխանութեան տարածքի միջնադարեան յուշարձանների խորհրդային շրջանի ուսումնասիրությունները սկիզբ են առնում 1920-ական թուականներից: Անդրանիկ քայլերը կատարուել են նորաստեղծ ԼՂԻՄ-ի

Արցախ, Երևան, 2011, ս. 3; Դ. Ախունդով, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, с. 95-203.

95 Վ. Սաֆարյան, Արցախի մշակութային ժառանգութեան օտարացման և յուրացման մեթոդաբանությունը ադրբեջանական պարմագիտութեան մեջ, Հայագիտական հանդէս, 2010, № 1, էջ 161:

96 Կ. Մելիք-Օհանջանյան, Историко-литературная концепция З. Буниатова, ВАА, 1968, № 2, с. 169-190; նոյնի՝ Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора “Судебника”, ВАА, 1969, № 1, с. 183-198; А. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Буниатова “Азербайджан в VII-IX вв.”, ИФЖ, 1967, № 1, с. 177-190; Б. Улубабян, “Еще одна произвольная интерпретация армянской “Истории страны Агван”, ВАА, 1979, № 2, с. 219-232; А. Аюбян, П. Мурадян, К. Юзбашян, К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой “Политическая история и историческая география Кавказской Албании”), ИФЖ, 1987, № 3, с. 166-189; Г. Свазян, Пример использования исторической науки в экспансивных целях, ВЕУ, 1989, № 2, с. 45-46; П. Мурадян, История – память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Ереван, 1990; Б. Арутюнян, “Когда отсутствует научная добросовестность”, ВОИ, 1987, № 7, с. 33-56:

97 Կ. Սվազեան, Освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении, Сборник статей, Ред. Л. Хуршудян, Ереван, 1991.

Եւ նրան հարող շրջանների ազգաբանական նկարագիրը բացայայտելուն ուղղուած գիտարշաւների շրջանակներում: 1924թ. ամռանը, Այսրկովկասի Կենտրոնական կոմիտէին կից գործող Գիտական ասոցիացիան՝ Ղարաբաղը, Չանգեզուրը եւ Քրդստանը (յետագայում Քելբաջարի եւ Լաչինի շրջաններ) ուսումնասիրելու նպատակով՝ կազմում է եօթ հոգուց բաղկացած գիտական արշաւախումբ: Վերջինս մէկ ամիս շրջելով վերոյիշեալ շրջաններում՝ կատարել է դրանց տնտեսական, վիճակագրական, ազգագրական ու պատմական հետազոտութիւնը:

Գիտարշաւի մասնակիցներից էր նաեւ անուանի հայագէտ Սմբատ Տէր-Աւետիսեանը, որին յանձնարարուած էր Լեռնային Ղարաբաղի, Քրդստանի եւ Չանգեզուրի նիւթական մշակոյթի յուշարձանների հետազոտութիւնը⁹⁸: Ժամանակի սղութեան պատճառով (ընդամէնը 10 օր) գիտնականն իր ուշադրութիւնը սեւեռել է հիմնականում Արցախի խոշորածաւալ կուրգանների վրայ, որոնք մեծ խմբերով ցրուած են ամբողջ Ղարաբաղով⁹⁹: Դրա հետ մէկտեղ, ազգագրական, վիճակագրական նիւթեր հաւաքելու եւ նախկին արտագրութիւնները ճշտելու նպատակով, Տէր-Աւետիսեանն այցելել է նաեւ հոգեւոր-մշակութային կենտրոններ Գանձասար ու Խօթավանք (Դադիվանք)՝ յիշատակելով իր ճանապարհին հանդիպած «ամեն տեղ ցրված կուլտուրական հիշատակարանների»¹⁰⁰ առկայութիւնը: Սակայն, վերոյիշեալ վանքերին վերաբերող նրա գրառումները սահմանափակուել են սոսկ հայկական միջնադարեան մշակոյթում դրանց քանդակների, վիճակագրերի, ճարտարապետական ձեւերի կարեւորութեամբ եւ շինութիւնների անխնամ վիճակի անհանգստութեամբ¹⁰¹:

Վերոյիշեալ գիտարշաւի մասնակից էր նաեւ ռուս կովկասագէտ, հնագիտութեան եւ ազգագրութեան բնագաւառի հմուտ հետազոտող Եւգենիա Պչոլինան, որի ուշադրութեան կենտրոնում էր Կարմիր Քրդստանի եւ Չանգեզուրի նախնադարեան մշակոյթի եւ անձաւային կացարանների ուսումնասիրութիւնը: Դրան զուգահեռ գիտնականն առանձին անդրադարձել է նաեւ քրդաբնակ Քարվաճառի շրջանում (Նախկին Ծար գաւառ) մեծ թուով

98 Լ. Վարդանյան, Հ. Սարգսյան, Լեռնային Ղարաբաղի էթնոմշակութային ուսումնասիրությունները 1920-ական թթ., «Էջմիածին», 2008, ԺԱ, էջ 98:

99 С. Тер-Аветисян, Памятники древности Нагорного Карабаха и скифская проблема / Հայագիտական հետազոտություններ, Խմբագիր՝ Ա. Քալանթարյան, Երևան, 2010, էջ 175:

100 Ա. Տէր-Ավետիսյան, Ինքնավար Ղարաբաղ, Չանգեզուր և Քուրդիստան (ճանապարհորդական դիպրոդություններ), նշվ. աշխ., էջ 73:

101 Նշվ. աշխ., էջ 76:

հանդիպող խոյակերպ եւ ձիակերպ գերեզմանաքարերին, որոնք, ըստ գիտնականի, բնորոշ են հայկական միջնադարեան տապանատներին¹⁰²: Հետազոտողի ուշադրութեանն արժանացած միջնադարեան միւս հնութիւնները կենցաղային հարուստ պատկերաքանդակներով տապանաքարերն են: Պջոլինան նշել է նաեւ յուշարձանների ընդհանուր վիճակի, հետազոտուող տարածքների հայկականութեան մասին. «Բազմաթիւ բնակելի քարայրեր, գիւղերի ակերակներ, բերդապարիսպներ, մատուռներ եւ եկեղեցիներ խօսում են երբեմնի ծաղկուն կեանքի մասին՝ ներկայիս համարեայ մարդագուրկ հեռաստաններում: ... Այստեղ հոծ զանգուածներով ամէնուր ապրած հայերից այսօր մնացել են միայն լայնատարած գերեզմանոցներ, որոնք սփռուած են թէ՛ կիսաւեր եկեղեցիների շուրջը, եւ թէ՛ առանձին (թարգ.՝ հեղինակի)»¹⁰³:

Արցախի եկեղեցական ճարտարապետութեան յուշարձաններին է անդրադարձել Վիեննայի Մխիթարեան միաբանութեան կարկառուն ներկայացուցիչ Համազասպ Ոսկեանը: Ի շարս պատմաբանասիրական բազմաթիւ աշխատութիւնների, 1940թ. սկսած, առանձին գրքերով յաջորդաբար հրատարակուել են նրա խոշոր ուսումնասիրութիւնները՝ նուիրուած պատմական Հայաստանի տարբեր շրջանների վանքերին¹⁰⁴: 1953թ. լոյս է տեսնում նաեւ Արցախի վանքերին նուիրուած մենագրութիւնը, որում հեղինակն անդրադարձել է մեր կողմից քննուող տարածաշրջանի հոգեւոր կառոյցներին¹⁰⁵:

Արցախի պատմամշակութային հարուստ ժառանգութեան մէջ մեծ թիւ կազմող բերդերի հետազոտութեանն է անդրադարձել Մխիթարեան միաբանութեան մէկ այլ ներկայացուցիչ՝ Միքայէլ Յովհաննէսեանը: 1870թ. նրա հեղինակութեամբ լոյս է տեսնում «Հայաստանի բերդերը» ստուարածաւալ աշխատութիւնը, որում ներառուել են նաեւ պատմական Արցախի բերդ-ամրոցները¹⁰⁶: Նկատենք, որ մխիթարեանների շարադրանքը հիմնուած է տեսական նիւթի վրայ՝ օգտագործելով այդ ժամանակ հրապարակի վրայ եղած ուսումնասիրութիւնները: Այդուհանդերձ, նրանց երկերում տեղ գտած

102 *Е. Пчелина, Армянские памятники на территории Азербайджанской ССР, Труды отдела истории культуры и искусства Востока (Гос. Эрмитаж), т. 3, Ленинград, 1940, с. 243-256.*

103 *Նշվ. աշխ., էջ 243:*

104 *Ս. Քոյանջյան, Հանգիստ Հ. Համազասպ Վ. Ոսկեանի, «Էջմիածին», 1968, Դ, էջ 58:*

105 *Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 51-130:*

106 *Ս. Յովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 435-467:*

յուշարձանների նկարագրությունները ներկայացուած են նիւթի քննութեամբ եւ ուղեկցում են հնավայրերի անուանը, տեղադրութեանը, պատմութեանը, վիմագրերին վերաբերող տեսակէտների վերլուծութիւններով:

1960թ. Հայաստանի եւ Ադրբեջանի գիտութիւնների ակադեմիաների համաձայնութեամբ անհրաժեշտ համարուեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետութեան տարածքում սփռուած, միջնադարեան պատմութեան եւ մշակոյթի ուսումնասիրութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող հայերէն եւ արաբատառ արձանագրութիւնների հաւաքումն ու հրատարակումը: Փոխադարձ համաձայնութեամբ ստեղծուեց Հայաստանի ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ու Ադրբեջանի ԳԱ պատմութեան ինստիտուտի միացեալ արշաւախումբը, որն իր աշխատանքները սկսեց պատմական Արցախ նահանգից: 1960-1964թթ. ընթացած գիտարշաւի աշխատանքների ընդհանուր ղեկավարն էր վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանը, իսկ ադրբեջանական կողմից՝ Մեշէդի խանում Նէյմաթովան: Աշխատանքների արդիւնքում ադրբեջանական կողմը հաւաքեց ընդամէնը հինգ տասնեակ արաբատառ վիմագրեր¹⁰⁷ եւ գիտակցելով ծրագրի հեռահար աննպատակայարմար լինելը՝ հրաժարուեց այն շարունակելու մտքից: Քաղաքական առաջնորդների կարգադրութեամբ, ադրբեջանցի գործընկերները տարբեր պատրուակներ յօրինելով (Ֆինանսական միջոցների բացակայութիւն, հիւանդութիւն եւ այլն) հրաժարուեցին յետագայ աշխատանքներին մասնակցելուց¹⁰⁸: Այնուամենայնիւ, Ս. Բարխուդարեանի ղեկավարած արշաւախումբը հաւաքեց 9-18-րդ դարերի 1071 վիմագիր՝ ԼՂԻՄ-ի, հարեւան Լաշինի ու Քելբաջարի, Կուրի աջափնեայ Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի եւ Գետաբակի շրջաններից¹⁰⁹: Դրանք հրատարակուեցին «Դիվան հայ վիմագրութեան» մատենաշարի 5-րդ պրակում, որը լոյս տեսաւ մեծավաստակ գիտնականի մահից տարիներ անց՝ 1982թ.¹¹⁰:

107 Վիմագրերը լոյս են տեսել առանձին գրքով (Մ. Նեյմատովա, *Мемориальные памятники Азербайджана XII-XIX веков, Баку, 1981*).

108 Տէն Գ. Գրիգորյան, *Ականավոր վիմագրագետը*, ԼՀԳ, 2005, № 3, էջ 191-192:

109 Մանրամասն տես Կ. Ասատրյան, Ս. Բարխուդարյանի դերը Արցախի վիմական արձանագրությունների հավաքման և հրատարակման գործում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը ներկան և ապագան, Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2007, էջ 278-281:

110 Դիվան հայ վիմագրութեան, պր. V, Արցախ, Կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982:



**Ս. Բարխուդարեանի վիճակագրագիտական արշավախումբը Գանձասարում, 1961թ.
(լուս.՝ Ա. Վրոյրի, ՊՄԱԹՊՄՊԾ¹¹¹ արխիվ)**

Հայկական միջնադարեան ճարտարապետության ուսումնասիրության եւ առհասարակ՝ հայագիտության երախտատուրներից է Անատոլի Եակոբսոնը, որը Հ. Օրբելու ղեկավարութեամբ բազմիցս եղել է Հայաստանում ու մասնագիտացել հայ միջնադարեան արուեստի եւ ճարտարապետութեան բնագաւառում: Որպէս հնագէտ, նա մասնակցել է նաեւ Հայաստանում ու Ադրբեջանում կազմակերպուած հնագիտական մի շարք գիտարշաների՝ ձեռք բերելով գործնական խոր գիտելիքներ եւ փաստական նիւթ¹¹²: 1960թ. «Արեւելքի ժողովուրդների արուեստի պատմութեան հետազոտութիւններ» ժողովածուում լոյս են տեսնում Ա. Եակոբսոնի ուսումնասիրութիւնները՝ նուիրուած Գանձասարի վանքին¹¹³: Տեղում կատարած հետազոտութիւնների հիման վրայ¹¹⁴ գիտնականը մանրամասն ներկայացրել է վանական համալիրի ճարտարապետութիւնը, նրա զուգահեռները հայկական

111 Պատմամշակութային արգելոց- թանգարանների և պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն:

112 Վ. Հարությունյան, Անատոլի Յակոբսոն, Հայ ճարտարապետության նվիրյալը, ՊԲՀ, 1998, № 3, էջ 111-112:

113 А. Якобсон, Гандзасарский монастырь XIII в., Исследования по истории культуры народов Востока, Сборник в честь академика И. Орбели, Ленинград, 1960, с. 144-158.

114 Գանձասարում Ա. Եակոբսոնը եղել է երեք անգամ՝ Օրեն-Վալայում ընթացող պեղումներին մասնակցելու ճանապարհին: Տե՛ս А. Якобсон, Письма, Ред. А. Айвазян, Ереван, 2014, с. 115, 137.

ճարտարապետական այլ կառույցների հետ, վանքի քանդակներն ու դրանց քրիստոնէական ակունքները: Գանձասարի վանքին անդրադարձած հետազոտողների շարքում Ա. Եակոբսոնն առաջինն էր, ով խորութեամբ քննութեան առաւ վանական համակառոյցի մանրամասները, քանդակները, խաչքարերը՝ յայտնելով այն միտքը, որ Գանձասարը 13-րդ դարի հայկական ճարտարապետութեան հանրագիտարանն է¹¹⁵:

Յիշեալ ուսումնասիրութիւններն առաջ են բերում Բաքուի պատմաբանների խոր անհանգստութիւնը՝ ժամանակի ընթացքում վերաճելով հայ-ադրբեջանական գիտական առճակատման: Սակայն, Ա. Եակոբսոնը հայկական ճարտարապետութեան սկզբունքները նենգափոխելու ձգտումների վճռական եւ հիմնաւոր հերքողներից էր: Գանձասարի վանքի ոչ գիտական լուսաբանման առնչութեամբ, ադրբեջանցի հետազոտողներ Ռ. Գէյուշեի, Դ. եւ Մ. Ախունդովների եւ այլոց դիտողութիւններին ի պատասխան, ռուս հետազոտողը ստիպուած է եղել առանձին յօդուածներով (1977թ., իսկ աւելի մանրամասն՝ 1984թ.¹¹⁶) նորից անդրադառնալ վանական համալիրի ուսումնասիրութեանը եւ ադրբեջանցիների չհիմնաւորուած յայտարարութիւններին՝ նշելով, որ Ախունդովների ձգտումը ծայրայեղօրէն միտումնաւոր է եւ նպատակամղուած է ապակողմնորոշելու ընթերցողներին¹¹⁷:

Ինչպէս նշեցինք, նախորդ դարի 60-ական թուականներից սկսած, ադրբեջանցիներն ուսումնասիրութեան օբյեկտներ են ընտրում Արցախի միջնադարեան վանքերն ու եկեղեցիները, մասնաւորապէս՝ Դադիվանքը, Գանձասարի, Գոչավանքի եւ Ամարասի վանքային համալիրները: Որդեգրած սկզբունքի համաձայն՝ քրիստոնէական յուշարձանների ուսումնասիրութիւնները ձեռնարկուած էին դրանք աղուանականացնելու, հետեւաբար՝ հայերից օտարելու կանխակալ մտայնութեամբ: Այդ վարքագիծն ակնառու է յատկապէս հնագէտ Ռ. Գէյուշեի եւ ճարտարապետ Դ. Ախունդովի աշխատանքներում: Ռաշիդ Գէյուշեյը յիշեալ յուշարձանների ուսումնասիրութեանն է անդրադարձել առանձին յօդուածներով¹¹⁸, իսկ

115 А. Якобсон, Гандзасарский монастырь XIII в., с. 158.

116 А. Якобсон, Из истории армянского средневекового зодчества, Гандзасарский монастырь XIII в., ВОН, 1977, № 12, с. 59-76; նոյնի՝ Гандзасарский монастырь и чачкары. Факты и вымыслы, ИФЖ, 1984, № 2, с. 146-152:

117 Մանրամասն տես Տ. Ալեքսանյան, Հայագետ Ս. Յակոբսոնի գործունեությունն ընդդէմ ադրբեջանական կեղծարարության, Օտարագոյի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2017, էջ 42-49:

118 Р. Геюшев, Армянская надпись о построении купольной базилики Хотаванкского

աւելի ուշ՝ նաեւ «Քրիստոնէութիւնը Կովկասեան Աղուանքում» (ռուսերէն) մենագրութեան մէջ¹¹⁹: Գրքում առանձին բաժիններ են նուիրուած յուշարձանների նկարագրութեանը, ճարտարապետական վերլուծութեանը, վիմագրերին, եկեղեցական պարագաներին եւ այլն: Կարելոր է նշել, որ մի շարք յուշարձանների (Եղիշէ առաքելի վանք, Դադիվանք եւ այլն) դէպքում դրանք ուղեկցուում են նաեւ յիշեալ հնավայրերում ձեռնարկուած պեղումների նկարագրութիւններով՝ կատարուած 1960-1970-ական թուականներին, Ադրբեջանի ԳԱ պատմութեան ինստիտուտի արշաւախմբի կողմից¹²⁰: Գանձասարի վանքի պարագայում Ռ. Գէյուշեւն ամէն կերպ հակադրուում է Ա. Եակոբսոնի դիտարկումներին՝ փորձելով հիմնաւորել, որ Գանձասարի վանական համալիրը հանդիսանում է Կովկասեան Աղուանքի մշակոյթի եւ կրօնի յուշարձան¹²¹:

1986թ. լոյս է տեսնում նաեւ ճարտարապետ Դաուդ Ախունդովի «Ադրբեջանի հին եւ վաղմիջնադարեան ճարտարապետութիւնը» (ռուսերէն) աշխատութիւնը: Հակառակ վերնագրին՝ գրքում ներկայացուած են նաեւ Արցախի զարգացած միջնադարի ճարտարապետութեան մի շարք յուշարձաններ, այդ թում եւ խաչքարեր: Նպատակ ունենալով Դադիվանքը հանել Հայաստանի պաշտամունքային ճարտարապետական յուշարձանների շարքից՝ Ախունդովը յայտարարում է, որ Կովկասեան Աղուանքի ճարտարապետների այդ ստեղծագործութիւնը խիստ տարբերում է հարեան ժողովուրդների պաշտամունքային կառոյցներից, եւ Հայաստանի միջնադարեան համալիրներից ոչ մէկում նմանատիպը չկայ¹²²:

Գրքում բազմաթիւ էջեր են տրամադրուած նաեւ Գանձասարի վանքին, ուր նորից ականատես ենք լինում յուշարձանի ինչպէս ճարտարապետութեան, այնպէս էլ պատկերագրութեան մեկնաբանման միտումնաւոր խեղաթիւրման փաստերին: Յատուկ ուշադրութեան են արժանի վանքի հարթաքանդակները լուսաբանելուն ուղղուած Դ. Ախունդովի «մեկնաբանութիւնները»¹²³: Աշխատութեան մի ամբողջ գլուխ նուիրուած է խաչքարերին, որտեղ

комплекса, Доклады АН Аз. ССР, 1971, № 2, с. 89-92; նույնի՝ *О Хотаванском храме и его надписях (աղբիւրներէն)*, Известия АН Аз. ССР, 1972, № 3, с. 65-72.

119 Р. Геюшев, *Христианство в Кавказской Албании*, Баку, 1984.

120 Նշվ. աշխ., էջ 90-93, 131:

121 Р. Геюшев, *О конфессионально-этнической принадлежности Гандзасарского монастыря, Материальная культура Азербайджана*, т. 7, Баку, 1973, с. 366-368.

122 Д. Ахундов, *Архитектура древнего и раннесредневекового Азербайджана*, Баку, 1986, с. 196.

123 Նշվ. աշխ., էջ 200-201:

հեղինակը խնդիր է դնում բացայայտել հնարածին աղուանական խաչդաշերի եւ հայկական խաչքարերի միջեւ եղած տարբերութիւնները¹²⁴:

Խաչենի վանքերում պահպանուած որմնանկարների գիտական հետազոտութեամբ անջրի է ընկնում արուեստաբան Լիդիա Դուռնովոն: Միջնադարեան Հայաստանի կերպարուեստի ուսումնասիրութեանը նուիրուած յայտնի մենագրութեան մէջ գիտնականն անդրադարձել է նաեւ Մարտակերտի շրջանի Առաջաձոր գիւղի եկեղեցում եւ Դադիվանքում պահպանուած որմնանկարներին: Կարելոր է առանձնացնել Դուռնովոյի դիտարկումը Դադիվանքի որմնանկարում պատկերուած Ս. Նիկողայոսի վերաբերեալ, որի համաձայն Ս. Նիկողայոսի պաշտամունքը Հայաստանում տարածուած չի գտել, եւ Դադիվանքում նրա առկայութիւնը պէտք է բացատրել յատուկ դրդապատճառներով¹²⁵:

Հայաստանի զարգացած միջնադարի աշխարհիկ պատկերաքանդակների քննութեան համատեքստում Դադիվանքի եւ Գանձասարի վանքի բարձրաքանդակների ուսումնասիրութեանն է անդրադարձել ճարտարապետութեան դոկտոր Ստեփան Մնացականեանը: Գիտնականը հանգամանօրէն շարադրել է դրանց պատկերագրութիւնը, կատարման եղանակը, մանրամասների նկարագրութիւնը: Յիշեալ քանդակները Մնացականեանը համեմատել է նաեւ Հայաստանի համաժամանակեայ միւս օրինակների հետ՝ թուարկելով դրանց ընդհանրութիւններն ու առանձնայատկութիւնները¹²⁶:

1970-ական թուականներից Արցախի պատմութեան եւ մշակոյթի տարբեր հարցերին նուիրուած ուսումնասիրութիւններով գիտական ասպարէզ է մտնում Բագրատ Ուլուբաբեանը: Քաջ գիտակցելով Ադրբեջանի վարած հայատեաց քաղաքականութեան կործանարար հետեւանքները՝ գիտնականն ամէն կերպ փորձել է ապացուցել դրանց հնարածին լինելը: Արցախի պատմութեանն ու ճարտարապետական առանձին յուշարձաններին նուիրուած Ուլուբաբեանի յօդուածների եւ աշխատութիւնների շարքում¹²⁷ առանձնանում է «Խաչենի

124 Նշվ. աշխ., էջ 203-211:

125 Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 154.

126 Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը 9-14-րդ դարերում, Երևան, 1976, էջ 109-122 (տես նաեւ Բ. Կարապետյան, Գանձասարի բարձրաքանդակները, ՊԲՀ, 1974, № 3, էջ 258-262):

127 Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութավանք, «Էջմիածին», 1971, 2-է, էջ 62-72; Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան, Գանձասարի վանքը, Հայկազեան հայագիտական հանդէս, Ե, Պէյրոս, 1974, էջ 91-123; Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան, Խաղաղական-խաթարական,

իշխանությունը X-XVI դարերում» մենագրությունը¹²⁸, որն առաջ է բերել Ադրբեջանի պատմաբանների կատաղի դիմադրությունը: Տեղին է նշել, որ յիշեալ աշխատանքը մինչ օրս շարունակում է լինել Արցախի պատմութեանը նուիրուած հիմնարար ուսումնասիրութիւն, որում աղբիւրագիտական հարուստ հենքի վրայ ոչ միայն շարադրուած է նահանգի միջնադարեան պատմութիւնը, այլև կարելոր տեղեկութիւններ կան իշխանական տների, նրանց շինարարական գործունէութեան, վիմագրերի, ճարտարապետական համալիրների կառուցման եւ դրանց թուագրութեան վերաբերեալ:

1981թ. «Գանձասար» վերնագրով լոյս է տեսնում Ուլուբաբեանի միւս կարելոր աշխատութիւնը: Դրանում հեղինակը ներկայացրել է Խաչենի իշխանութեան պատմա-ճարտարապետական նշանաւոր համալիրի ստեղծման պատմութիւնը, ճարտարապետական կառոյցների նկարագրութիւնները, եւ որ ամենակարելորն է՝ վանքի վիմագրերը¹²⁹: Երիտասարդ տարիներին մանկավարժ Ուլուբաբեանը կարելորել է ադրբեջանցի հետազօտողների խեղաթիւրումների թիրախ դարձած Գանձասարի վանքի վիմագրերը եւ ուսումնասիրել յուշարձանի որմերին, համալիրի տարածքի գերեզմանաքարերի վրայ առկայ արձանագրութիւնները՝ շատ լաւ գիտակցելով դրանց առանձնակի կարելորութիւնը որպէս միջնադարեան պատմութեան եւ մշակոյթի ուսումնասիրութեան ստոյգ աղբիւրներ¹³⁰:

«Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» վերտառութեամբ աշխատութիւնը գիտնականի վերջին ուսումնասիրութիւնն է, որտեղ հեղինակը մանրամասն անդրադարձել է Արցախ-Ուտիքի պատմական անցքերին, եկեղեցու հոգելոր եւ մշակութային կեանքին: Աշխատանքի վերջին գլուխը նուիրուած է Խաչենի իշխանութեան հոգելոր կենտրոններ Դադիվանքին, Գանձասարի վանքին եւ Խաթրավանքին՝ մանրամասն ներկայացնելով դրանց ճարտարապետութիւնն ու գեղարուեստական յարդարանքը¹³¹:

Հայկազեան հայագիտական հանդէս, Ժ, Պէրոյթ, 1982-1984, էջ 21-50:

128 Բ. Ուլուբաբեան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:

129 Բ. Ուլուբաբեան, Գանձասար (Ստեղծման պատմությունը և ճարտարապետական նկարագիրը), Երևան, 1981, էջ 149-161: 1989-1990թթ. Գանձասարի վանքում ձեռնարկուած նորոգչական եւ բարեկարգման աշխատանքների ընթացքում յայտնաբերուել են նոր վիմագրեր, որոնք հրատարակուել են Գանձասարի վանահայր Միքայէլ Աջապահեանի կողմից (տե՛ս Մ. վրդ. Աջապահյան, Նորահայր արձանագրություններ և վիմագրական սրբագրումներ, «Էջմիածին», 1990, Ը-Թ, էջ 54-56):

130 Հ. Սիմոնյան, Բագրատ Ուլուբաբեան (ծննդյան 75-ամյակի առթիւ), ԼՀԳ, 2001, № 1, էջ 262:

131 Բ. Ուլուբաբեան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 2001, էջ 362:

Լեոնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձաններին վերաբերող մի շարք արժէքաւոր ուսումնասիրութիւններով յայտնի է նաեւ պատմաբան-յուշարձանագէտ Շահէն Մկրտչեանը: 1965-1972թթ. լինելով Լեոնային Ղարաբաղի պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրէնը, գիտնականը հնարաւորութիւն է ունեցել հանգամանալից ուսումնասիրելու յուշարձաններով հարուստ երկրամասի պատմա-մշակութային ժառանգութիւնը: Նախորդ հետազոտողների, ինչպէս նաեւ սեփական ուսումնասիրութիւններով հաւաքած մեծածաւալ նիւթի հիման վրայ, 1980թ. լոյս է տեսնում Շ. Մկրտչեանի «Լեոնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» աշխատութիւնը, որը մի շարք լրացումներով եւ շտկումներով վերահրատարակում է հինգ տարի անց¹³²: Գիրքը լայն արձագանք է գտնում հետազոտողների շրջանում եւ 1988թ. թարգմանում է նաեւ ռուսերէն:

Աշխատութեան մէջ գիտնականը թուարկել է նախկին ԼՂԻՄ-ի տարածքում յայտնի գրեթէ բոլոր պատմա-ճարտարապետական յուշարձանները՝ հանգամանալից անդրադառնալով դրանց վերաբերող գրաւոր աղբիւրներին, վիճակագրական նիւթերին: Ներկայացուած յուշարձանները դասակարգուած են ըստ շրջանների եւ համալրուած են համապատասխան չափագրութիւններով, շատերը՝ նաեւ լուսանկարներով: Գրքում ներկայացուած մի շարք յուշարձաններ առաջին անգամ ուսումնասիրուել են հէնց հեղինակի կողմից եւ գիտական շրջանառութեան մէջ մտել նրա ջանքերի շնորհիւ:

Շ. Մկրտչեանի գրչին է պատկանում նաեւ «Արցախ» պատմա-մշակութային համառօտ ակնարկը¹³³, որտեղ նահանգի հակիրճ շարադրուած պատմութեան եւ մշակոյթի համատեքստում ներկայացուած են նաեւ Խաչենի իշխանութեան պատմա-ճարտարապետական առանձին յուշարձաններ:

Արցախի միջնադարեան արուեստին նուիրուած ուսումնասիրութեան սահմաններում երկրամասի նիւթական մշակոյթի տարբեր հարցերին է անդրադարձել արուեստագիտութեան դոկտոր Հրավարդ Յակոբեանը: «Արցախի միջնադարյան արվեստը» եռալեզու գրքում վաստակաշատ գիտնականը համառօտ ներկայացրել է Հայոց Արեւելից կողմանց ճարտարապետութեան պատմութիւնը, որմնանկարչութիւնը, քանդակագործութիւնը եւ այլն: Խօսելով ճարտարապետական կոթողների

132 Շ. Մկրտչեան, Լեոնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985:

133 Շ. Մկրտչեան, Արցախ. Պատմա-մշակութային համառօտ ակնարկ, Երևան, 1991:

մասին՝ Հ. Յակոբեանը նշում է, որ 12-13-րդ դարերում Հայաստանի ոչ մի հատուածում շինարարական աշխատանքներն այնպիսի լայն թափ ու ծաւալ չեն ստացել, ինչպէս Արցախում¹³⁴: Հետազօտողը մեծ հիացմունքով է նկարագրում յատկապէս Գանձասարի վանքն ու նրա քանդակները, նրա բնորոշմամբ՝ «Աղթամարից հետո հայ իրականության մեջ քանդակագարդման հարստությամբ երկրորդ հուշարձանը»¹³⁵:

Հետազօտողն առանձին անդրադարձել է նաեւ խաչքարերին, տապանաքարերին՝ նշելով, որ Արցախի տապանաքարային արուեստում կայ եւ՛ հոգու անմահութեան, եւ՛ կրօնական, եւ՛ ամէնից շատ՝ կեանքի պահպանման ու յարատեւութեան գաղափարը¹³⁶: Ներկայացնելով Արցախի հոգեւոր կառոյցներում պահպանուած որմնանկարները՝ Հ. Յակոբեանը եզրակացնում է, որ դրանց քննութիւնը թոյլ է տալիս «...խոսելու այդ ռեզիոնի գեղարվեստական միանգամայն ուրույն ֆենոմենի մասին»¹³⁷:

Նախորդ դարի 80-ական թթ. վերջերից Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանների ուսումնասիրման հարցում նկատում է որոշակի ազատականացում: Հայկական ճարտարապետութեանը նուիրում ռուսումնասիրութիւններում սկսում են ներառուել նաեւ Արցախի նշանաւոր վանքերն ու եկեղեցիները, համաժամանակեայ այլ յուշարձաններ: 1985թ. հայկական ճարտարապետութեան պատմութեանը նուիրում ընդհանրացնող աշխատանքում ճարտարապետութեան պատմաբան Վարազդատ Յարութիւնեանը ներկայացրել է նաեւ Լեռնային Ղարաբաղի միջնադարեան յուշարձանները՝ դրանք դիտարկելով որպէս պատմական Հայաստանի օրգանական մաս¹³⁸:

Այդ տարիներին Արցախի ճարտարապետութեան ուսումնասիրմամբ սկսեցին զբաղուել նաեւ արտասահմանեան գիտնականները: Նրանցից ամենանշանաւորն է իտալացի հետազօտող, հայկական միջնադարեան ճարտարապետութեան գիտակ Պաոլօ Կունէօն: Հարկ է նշել, որ նա առաջին օտարերկրացի գիտնականն էր, ով խորհրդային կարգերի ժամանակ՝ 1968թ., Հայաստանի ԳԱ արուեստի ինստիտուտի աշխատակիցների ուղեկցութեամբ այցելել է Լեռնային Ղարաբաղ¹³⁹: Գիտնականի երկարամեայ

134 Հ. Հակոբյան, Արցախի միջնադարյան արվեստը, Երևան, 1991, էջ 11:

135 Նույն տեղում:

136 Նշվ. աշխ., էջ 17:

137 Նշվ. աշխ., էջ 26:

138 В. Арутюнян, Каменная летопись армянского народа, Ереван, 1985.

139 Մ. Հասրաթյան, Պաոլո Կունէո, «Հուշարձան», Դ-Ե, Երևան, 2008, էջ 220-224:

ուսումնասիրությունների արդյունքում՝ 1988թ. հրատարակում է «Հայկական ճարտարապետությունը 4-19-րդ դդ.» (իտալերէն) ստուարածաւալ, երկհատոր աշխատությունը: Նրանում առանձին բաժնով ներկայացուած են նաեւ Լեոնային Ղարաբաղի պատմական յուշարձանները՝ համապատասխան լուսանկարներով եւ չափագրություններով¹⁴⁰:

Պ. Կունէոյի ակտիւ մասնակցութեամբ, նոյն թուականին լոյս է տեսել ՀԽՍՀ ԳԱ արուեստի ինստիտուտի եւ Միլանի Պոլիտեխնիկի ճարտարապետական ֆակուլտետի հետ համատեղ հրատարակուող մատենաշարի (անգլերէն եւ իտալերէն) հերթական հատորը՝ նուիրուած Ղարաբաղի ճարտարապետութեանը: Գրքում շարադրուած է երկրամասի համառօտ պատմությունը, ճարտարապետությունը, պատմա-ճարտարապետական յուշարձանների տեղաբաշխման քարտէզները, յուշարձաններով հարուստ բնակավայրերը: Առանձին եկեղեցիներից զատ՝ դիտարկուել են նաեւ վանական համալիրները, որոնց թում են Խաչենի հոգեւոր կեանքի կարեւոր յուշարձաններ Խաթրավանքը, Յակոբավանքը, Դադիվանքը, Գանձասարը¹⁴¹:

Արեւմտեան գիտնականներից Արցախի պատմամշակութային յուշարձանների ուսումնասիրութեամբ զբաղուել է նաեւ հայ միջնադարեան ճարտարապետութեան ու արուեստի ֆրանսիացի հետազօտող Ժան-Միշէլ Թիէրին: 1980-ական թուականներին, ճարտարապետ Մուրադ Հասրաթեանի համահեղինակութեամբ, լոյս են տեսնում Թիէրիի յօդուածները՝ նուիրուած Գանձասարի վանքին եւ Դադիվանքին¹⁴²: 1987թ. նրա եւ արուեստաբանութեան դոկտոր Պատրիկ Տօնապետեանի ջանքերով հրատարակուեց հայ արուեստին նուիրուած մեծածաւալ աշխատությունը, որտեղ, եկեղեցական ճարտարապետութեան քննութեան համատեքստում, հեղինակները դիտարկել են նաեւ Դադիվանքը, Եղիշէի վանքը, Գանձասարի վանքը, Խաթրավանքը¹⁴³: Արցախի եկեղեցիների եւ վանքերի առաւել խոր եւ հանգամանալից ուսումնասիրությունների արդյունքում՝ Թիէրին հրատարակում է «Ղարաբաղի եկեղեցիներն ու վանքերը» (ֆրանսերէն) մենագրությունը: Աշխատութեան մէջ ներառուած յուշարձանները գիտնականը խմբաւորել

140 P. Cuneo, *Architettura Armena (dal quarto al diciannovesimo secolo)*, t. I, Roma, 1988, p. 428-458.

141 Gharabagh, *Documents of Armenian architecture*, N° 19, Milan, 1988.

142 J.-M. Thierry, M. Hasratyan, *Le couvent de Ganjasar*, *Revue des études Arméniennes*, t. XV, Paris, 1981, p. 289-346; *Dadivank' en Arcax*, t. XVI, Paris, 1982, p. 259-312.

143 J.-M. Thierry, *Les arts Arméniens*, Paris, 1987, p. 195-200.

է ըստ աշխարհագրական բաժանումների՝ Թարթառի վերնահովիտ, Թարթառի ստորին հովիտ, Խաչենագետի աազան, Արեւելեան Ղարաբաղ եւ այլն: Սակայն նախքան բուն նիւթին անցնելը, կատարուած հետազոտութիւնն առաւել ամբողջական եւ ընկալելի դարձնելու նպատակով, հեղինակը շարադրել է նաեւ երկրամասի աշխարհագրութեանը, պատմութեանը, ճարտարապետութեանը, քանդակագործութեանը նուիրուած բաժիններ¹⁴⁴:



**Ս. Աստուածածին վանք: XII դարի յուշարձանախմբի տեսքը հարաւից
(լուս.՝ Դ. Դաւթեանի)**

Գ) ՅԵՏԵՆՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի ազատագրումից յետոյ, երկրամասի պատմամշակութային ժառանգութեան ուսումնասիրումը թեւակոխեց նոր փուլ: Դեռեւս խորհրդային տարիներին պատմական Արցախի մի շարք հնավայրերի հետազոտութիւններով աչքի ընկած մասնագէտները, ովքեր

144 J.-M. Thierry, *Eglises et couvents du Karabagh, Antélias-Liban, 1991.*

շատ յաճախ հնարաւորութիւն չունէին տպագրելու իրենց աշխատանքները, այժմ ստացան ազատ գործելու իրաւունք: Արդիւնքում՝ նախորդ տարիների ուսումնասիրութիւնները ներկայացնող առանձին յօդուածների փոխարէն հրատարակուեցին գիտական խորը եւ հանգամանալից քննութեամբ մենագրութիւններ:

Արցախ նահանգի հնութիւնների ուսումնասիրման ասպարէզում կատարած մեծածաւալ աշխատանքներով եւ պատմամշակութային ժառանգութեան բազմակողմանի ուսումնասիրութիւններով աչքի է ընկնում յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանը: Երեք տասնամեակից աւելի ծաւալած գործունէութեան ընթացքում, գիտնականը հետազօտել եւ ցուցակագրել է հայկական ճարտարապետութեան բազմաթիւ յուշարձաններ¹⁴⁵: 1970-ական թուականների վերջերից նա այցելել է պատմական Արցախի եւ Ուտիքի մի շարք բնակավայրեր, լուսանկարել, չափագրել ու նկարագրել այդ տարածքների հայկական յուշարձանները¹⁴⁶: ԼՂԻՄ-ի տարածքում կատարած նրա հետազօտութիւններն ամփոփուել են մի շարք յօդուածներում¹⁴⁷:

1998 թուականին, երբ «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ»-ը պաշտօնապէս սկսեց գործել նաեւ Հայաստանում, պատմական Արցախ նահանգի պատմա-ճարտարապետական յուշարձանների ուսումնասիրման գործը նոր թափ ստացաւ: Նախկինում կատարուած հետազօտութիւնները համալրուեցին նոր գիտարշաւների ընթացքում ձեռք բերուած փաստական նիւթերով, նորայայտ յուշարձաններով: Հաւաքուած հսկայական նիւթն ամփոփուեց հիմնադրամի նախաձեռնութեամբ լոյս տեսնող «Գիտական ուսումնասիրություններ» մատենաշարի տարբեր հատորներում: Իրարայաջորդ լոյս տեսան «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված

145 Բ. Քորթոշյան, Հուշարձանագետ Սամուէլ Կարապետյան, Վարձք, 2020, № 13, էջ 27-36:

146 Ս. Կարապետյան, Խրիսափորի ծորահովտում գտնվող պարմա-ճարտարապետական հուշարձանները և դրանց նորահայտ արձանագրությունները, ՊԲՀ, 1984, № 2, էջ 233-238; նոյնի՝ Մարասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, 1989, № 2, էջ 225-233:

147 Ս. Կարապետյան, Էսաջաձն գմբեթային եկեղեցիներ Արցախ նահանգում, ՊԲՀ, 1983, № 2-3, էջ 203-205; նոյնի՝ XVII դարի վանական երկու համալիր Արցախում, ՊԲՀ, 1985, № 1, էջ 225-231; նոյնի՝ Հաթերքի պարմա-ճարտարապետական հուշարձանները, ԼՀԳ, 1986, № 5, էջ 86-89; նոյնի՝ Արցախի որմնափակ խաչքարերը, «Էջմիածին», 1983, Ը, էջ 34-40; В. Арутюнян, С. Карапетян, Н. Саркисян, Монастырский комплекс Сурб Аствацацин в гаваре Цар, ВОН, 1989, № 7, с. 82-92:

շրջաններում»¹⁴⁸, «Արցախի կամուրջները»¹⁴⁹, «Հյուսիսային Արցախ»¹⁵⁰ աշխատութիւնները, ինչպէս նաեւ վերջին տարիներին լոյս տեսած «Հայաստանի պատմություն» գրքաշարի Դ հատորը (Մոսվականք¹⁵¹), որոնք անգնահատելի ներդրում են Արցախի պատմա-ճարտարապետական յուշարձանների եւ նիւթական մշակոյթի ուսումնասիրման բնագաւառում: Դաշտային հարուստ նիւթի ու աղբիւրագիտական հէնքի վրայ գրուած վերոյիշեալ ուսումնասիրութիւնները ներկայացնում են պատմա-մշակութային յայտնի եւ նորայայտ տարբեր յուշարձաններ, առանձին կոթողներ ու կառոյցներ: Մեզ զբաղեցնող խնդրի տեսանկիւնից առաւել արժէքաւոր են ազատագրուած Քարվաճառի շրջանի (պատմական Ծար, Վայկունիք) յուշարձանների քննութիւնը, որոնց հետազոտողն անդրադարձել է գրեթէ սպառիչ ամբողջականութեամբ¹⁵²: Ներկայացուած ամբողջ նիւթն ուղեկցում է համապատասխան չափագրութիւններով, լուսանկարներով, գրչագրերով, ինչն առաւել մնայուն եւ ամբողջական են դարձնում կատարուած ուսումնասիրութիւնները: Հարկ է ընդգծել, որ Արցախի պատմա-ճարտարապետական յուշարձանները հետազոտողների շարքում Ս. Կարապետեանը միակն է, ով անդրադարձել է նաեւ Արցախի տարածքում պահպանուած մահմեդական յուշարձանների քննութեանը: Դրանց թում են 14-15-րդ դարերի թուրքմենական ցեղապետերի դամբարանները, պարսկական տիրապետութեան օրօք ստեղծուած պաշտամունքային եւ աշխարհիկ կառոյցները¹⁵³:

Արցախի պատմական յուշարձանների, եւ յատկապէս աղբրեջանցիների թիրախ դարձած Խաչենի հոգեւոր կենտրոնների ուսումնասիրութիւնը նաեւ հայկական ճարտարապետութեան խոշոր տեսաբան Մուրադ Հասրաթեանի գիտական հետազոտութիւնների տիրոյթում է: Խորհրդային տարիներին Դադիվանքի, Խաթրավանքի եւ Գանձասարի վանքի հետազոտութեանը

148 Ս. Կարապետյան, *Հայ մշակոյթի հուշարձանները Խարհրդային Աղբրեջանին բռնակցված շրջաններում*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք III, Երևան, 1999:

149 Ս. Կարապետյան, *Արցախի կամուրջները*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք XII, Երևան, 2009:

150 Ս. Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք VI, Երևան, 2004:

151 Ս. Կարապետյան, *Մոսվականք*, Երևան, 2019:

152 Ս. Կարապետյան, *Հայ մշակոյթի հուշարձանները Խարհրդային Աղբրեջանին բռնակցված շրջաններում*, էջ 8-81: Նոյնի՝ *Մոսվականք*, էջ 207-417:

153 Ս. Կարապետյան, *Արցախի ճարտարապետության մահմեդական հուշարձանները*, Երևան, 2010: Տե՛ս նաեւ Բ. Քորթոշյան, *Խաչեն-Դորբարայի դամբարանի արաբերեն արձանագրությունը*, «Վարձք», 2020, № 14, էջ 36-40:

նուիրուած նրա համահեղինակութեամբ մի քանի յօդուածները լուրջ ձեռքբերումներ են հայկական ճարտարապետութեան արցախեան դպրոցի ուսումնասիրութեան ասպարէզում՝ միաժամանակ նպատակ ունենալով ապացուցել ադրբեջանցի հետազօտողների հակահայ գործելաճի գիտական սնանկութիւնը¹⁵⁴: 1992թ. լոյս տեսած «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը¹⁵⁵» մենագրութիւնը Մ. Հասրաթեանի արցախեան ուսումնասիրութիւնների հանրագումարն է: Դրանում հեղինակն արցախեան դպրոցի վերլուծութիւնը կատարել է փաստական նիւթ տիպաբանական մեկնաբանութեամբ՝ յստակօրէն ապացուցելով, որ հայկական յուշարձանների խեղաթիւրման ադրբեջանցիների փորձերը զուրկ են գիտական հիմնաւորումից: Արցախի ճարտարապետական դպրոցի ուսումնասիրման նպատակով Մ. Հասրաթեանը հետազօտել է երկրամասի կարեւորագոյն վանքերն ու Խաչենի իշխանական դղեակները, նշել հայկական ճարտարապետութեան մէջ այս դպրոցի առանձնայատկութիւններն ու ընդհանրութիւնները:

Արցախի քաղաքացիական ճարտարապետութեան ուրոյն բնագաւառ հանդիսացող իշխանական եւ մելիքական դղեակ-ապարանքների մանրամասն հետազօտութեամբ է զբաղուել ճարտարապետ Արտակ Ղուլեանը: Հետազօտողը հանգամանալից ուսումնասիրել է Ներքին Խաչենի գահերէց իշխան Հասան-Ջալալի ապարանքի ճարտարապետութեան մանրամասները¹⁵⁶: Աւելի ուշ հեղինակն առանձին յուշարձանների օրինակով անդրադարձել է նաեւ դրանց զարգացումը հանդիսացող ուշմիջնադարեան մելիքական ապարանքների քննութեանը¹⁵⁷: Խնդրի առաւել խորը եւ համապարփակ ուսումնասիրութիւնների արդիւնքում լոյս է տեսել նաեւ Ա. Ղուլեանի «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները» աշխատութիւնը, որտեղ ճարտարապետ-հետազօտողը մանրամասն դիտարկել է դրանց ստեղծման ընթացքը, բացայայտել ճարտարապետական-յօրինուածքային առանձնայատկութիւնները, ձեւաստեղծման ու ծագումնաբանական

154 Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան, Գանձասարի վանքը, Հայկագեան հայագիտական հանդէս, Ե, Պէյրութ, 1974, էջ 91-123; նոյնի՝ Դադիվանք, Հայկագեան հայագիտական հանդէս, Ը, Պէյրութ, 1980, էջ 7-54; նոյնի՝ Խաղապանք-Խաթրապանք, Հայկագեան հայագիտական հանդէս, Ժ, Պէյրութ, 1982-1984, էջ 21-50; Մ. Ասրաթեան, Арцахская школа армянской архитектуры. Факты и фальсификации, ВОН, 1989, № 9, с. 3-15:

155 Մ. Հասրաթեան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992:

156 Ա. Ղուլեան, Խաչենի իշխանական ապարանքը, ԼՀԳ, 1984, № 3, էջ 51-57:

157 Ա. Ղուլեան, Արցախի պալատական ճարտարապետության երկու հուշարձան, ԼՀԳ, 1982, № 10, էջ 65-70; Ա. Ղուլեան, Ռ. Արզարյան, Արցախի Քաղաքապետի բերդավանդակը, ՊԲՀ, 1988, № 1, էջ 147-162:

հնարաւոր ուղիները, նշել ճարտարապետական զուգահեռները¹⁵⁸:

Նախորդ դարի վերջին սկիզբ առած արցախեան գոյապայքարի առաջին իսկ օրերից, ի թիւս հրատապ այլ խնդիրների, հրամայական դարձաւ պատմական տարածքների յուշարձանների համակողմանի ուսումնասիրումը: Սանձագերծուած ակտիւ ռազմական գործողութիւնների աւարտից անմիջապէս յետոյ, որոշ ուսումնասիրողներ ձեռնամուխ եղան ազատագրուած Արցախի հնութիւնների նորովի ուսումնասիրմանը:

1990-ականներին այդօրինակ գործողութիւնների ակտիւ նախաձեռնողներից է դառնում նաեւ հնագէտ Յակոբ Սիմոնեանը: Նրա գլխաւորած գիտարշաւների արդիւնքում ուսումնասիրուել են բուն Արցախի եւ նրան հարող շրջանների հայկական բնակավայրերը, պատմական յուշարձանները, որոնք վաւերագրուել են, չափագրուել, իսկ արձանագրութիւնները՝ արտանկարուել եւ վերձանուել: Աւելի քան 15 տարի տեւած հետազօտութիւնների արդիւնքում ուսումնասիրուել է շուրջ 1500 յուշարձան, համակողմանի վաւերագրուել են նախկինում յայտնի բոլոր պահպանուած յուշարձանները, յայտնաբերուել նորերը¹⁵⁹:

Արշաւախմբի համար ուսումնասիրութեան առանձին առարկայ են եղել Դադիվանքի արձանագրութիւնները: Ձեռնարկուած աշխատանքների ընթացքում վերընթերցուել են տասնեակ վիմագրեր, յայտնաբերուել վիմական նոր միաւորներ, որոնց արդիւնքում Դադիվանքից յայտնի արձանագրութիւնների թիւը 65-ից հասաւ շուրջ երկու հարիւրի¹⁶⁰: Կարելոր են նաեւ գիտարշաւի մասնակիցների կողմից Դադիվանքի տարբեր հատուածներում կատարուած կարճատեւ պեղումները, որոնք նոր լոյս սփռեցին վանքի պատմութեանը վերաբերող տարբեր հարցերի վրայ:

Հ. Սիմոնեանի գլխաւորութեամբ 1993թ. մանրամասն հետազօտուել են նաեւ Խաչենի իշխանութեան աշխարհիկ եւ հոգեւոր տարբեր կառոյցներ: Ուսումնասիրուել եւ չափագրուել է Թարթառ գետի աջակողմում գտնուող Ս. Աստուածածին եկեղեցին (Կուսանաց անապատ), գետի ձախափնեայ շրջանում յայտնաբերուել է Մարդաղոնեաց Ս. Նշանը, մանրակրկիտ

158 Ա. Ղուլյան, Արցախի և Սյունիքի մշիքական ապարանքները, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք IV, Երևան, 2001:

159 Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Ա. Գնունի, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, Յուցահանդեսի ցանկ, Երևան, 2007, էջ 6; Հ. Սիմոնյան, Քարվաճառի յուշարձանները, «Բնօրրան», 1998, № 1-2, էջ 31-37:

160 Նոյն տեղում:

ուսումնասիրուել Հանդաբերդի վանական համալիրը: Գիտարշալի արդիւնքների եւ Արցախի պատմամշակութային առանձին յուշարձանների ուսումնասիրութեանը նուիրուած մի շարք դիտարկումներ ամփոփուած են ինչպէս Հ. Սիմոնեանի, այնպէս էլ գիտարշալի միւս անդամների հեղինակած մի շարք յօդուածներում¹⁶¹:

Խաչենի իշխանութեան տարածքի միջնադարեան յուշարձանների եւ առհասարակ՝ Արցախի պատմամշակութային ժառանգութեան ուսումնասիրման գործում կարելոր են հնագէտ Համլետ Պետրոսեանի կատարած հետազօտութիւնները: Վերջին տարիներին նա մեծածաւալ պեղումներ է իրականացրել Արցախի տարբեր շրջաններում: Զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ՝ 1995թ., նրա եւ ԱրՊՀ-ի ռեկտոր Լ. Եպիսկոպոսեանի ջանքերով ստեղծուեց ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի եւ Արցախի պետական համալսարանի միացեալ հնագիտական արշաւախումբը, որը նոյն տարում հետախուզեց մի շարք բազմաշերտ յուշարձաններ¹⁶²: Արդէն յաջորդ տարի սկսուեցին դրանցից մէկի՝ բրոնզի դարից մինչեւ ուշմիջնադարեան մշակութային շերտեր ներառող Քարաբլուրի բնակատեղիի հետախուզական պեղումները¹⁶³:

Առանձնայատուկ են Վերին Խաչենի՝ Ծարի իշխանութեան հոգելոր կենտրոն, Հանդաբերդի վանքի պեղումները, որոնց արդիւնքները կարելոր նշանակութիւն ունեն Խաչենի իշխանութեան պատմութեան եւ մշակոյթի տարբեր հարցերի լուսաբանման համար: Վանքի պեղումներով յայտնաբերուած հնագիտական նիւթերն ու նորայայտ վիմագրերը նոր տուեալներ են հաղորդում ընդհանրապէս Խաչենի իշխանութեան,

161 Հ. Սիմոնյան, Հայաստանում քրիստոնեւոյթյան փարածումը վավերագրող հուշարձաններ Արցախում, Գիտոյթոյն եւ փեխնիկա, 1998, № 7-9, էջ 10-14; Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Հանդաբերդի վանական համալիրը, ՀՀ-ում 1993-1995թթ. հնագիտական հետազօտութիւնների արդիւնքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Զեկուցումների թեգեր, Երևան, 1996, էջ 71-73; Հ. Սիմոնյան, Վերածոված Ծիծեռնավանքը, «Հուշարձան», Գ, Երևան, 2005, էջ 58-62; Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Վանքասարի հուշարձանները, «Հուշարձան», Գ, Երևան, 2005, էջ 159-178; Հ. Սանամյան, Դադի վանքի կառուցապարման փուլերը ըստ շինարարական շերտագրոյթյան, Հայ գրերի գյուրի եւ Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով, Զեկուցումների թեգեր, Երևան, 2005, էջ 150-155:

162 Հ. Պետրոսյան, Հնագիտական հետազօտութիւններն Արցախում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն. Անցյալը, ներկան եւ ապագան, Գիտաժողովի զեկուցումների հիմնադրոյթներ, Երևան, 2007, էջ 425-433:

163 Հ. Պետրոսյան, Լ. Եպիսկոպոսյան, Յու. Ասրյան, Վ. Սաֆարյան, Վ. Բալայան, Վ. Հովսեփյան, Հետախուզական պեղումներ Արցախի Քարաբլուր հնավայրում, Հին Հայաստանի մշակոյթը, XI, Նյույթեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 1998, էջ 53-54:

եւ մասնաւորապէս՝ Վերին Խաչենի Ծար գաւառի պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ¹⁶⁴: Արժէքաւոր են նաեւ Խաչենի հարաւային ծայրամասում՝ Շուշի քաղաքի մերձակայքում գտնուող միջնադարեան բնակատեղիի պեղումները: Դրանց կարեւորութիւնը մեծ է յատկապէս Շուշիի հիմնադրման եւ նրա շրջակայքում եղած բնակավայրերի գոյութեան, դրանց ժամանակագրութեան ուսումնասիրման տեսանկիւնից¹⁶⁵:

2007թ., Դադիվանքի վերականգնման աշխատանքների շրջանակներում, Հ. Պետրոսեանի ղեկավարութեամբ կազմակերպուել են պեղման աշխատանքներ վանքային համալիրի միանաւ եկեղեցու տարածքում:

Գիտնականի ուշադրութեան կիզակէտում են նաեւ միջնադարեան քարակոթողները: Արցախի խաչքարային արուեստի մի շարք հարցերի հետազոտմանն են նուիրուած Հ. Պետրոսեանի հեղինակած տարբեր յօդուածները¹⁶⁶, որոնցում մանրամասն քննութեան են առնուած խաչքարային մշակոյթի արցախեան դպրոցին յատուկ պատկերաքանդակները, դրանց մեկնաբանութիւնը եւ յօրինուածքային առանձնայատկութիւնները: Այս համատեքստում առանձնակի կարեւորութիւն ունի բուն Շուշիի եւ շրջակայքի խաչքարերի ուսումնասիրութիւնը, որը, հեղինակի դիպուկ գնահատմամբ «...դժվար է անվանել ամբողջական»¹⁶⁷:

Կարելի է նաեւ Հ. Պետրոսեանի ձեռնարկած պեղումները Խաչենի միջնադարեան յուշարձաններից մէկի՝ Վաճառի Ս. Ստեփանոս վանքի տարածքում: Դրանց արդիւնքները կարելի է տուեալներ են հաղորդում վաղմիջնադարեան դամբարանային կառոյցների ձեւաստեղծման եւ յօրինուածքի վերաբերեալ¹⁶⁸:

164 Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Երևան, 2009:

165 Հ. Պետրոսյան, Ն. Ենգիբարյան, Վ. Սաֆարյան, Մ. Տիտանյան, Շուշիի 2005թ. պեղումները, Հին Հայաստանի մշակոյթը, XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2008, էջ 239-246; Գ. Պետրոսյան, Վ. Տիտանյան, Մ. Տիտանյան, Археологические свидетельства существования древних армянских поселений на территории Шуши, “Феномен Шуши” (Историко-политологическое исследование), Հայկական բանակ, 2013, № 1-2, էջ 30-39:

166 Գ. Պետրոսյան, Новонайденный хачкар из Арачадзора, ВОН, 1991, № 4, с. 147-152; նոյնի՝ К интерпретации группы сюжетных рельефов на хачкарах Арцаха, ИФЖ, 1997, № 2, с. 164-171; նոյնի՝ Դադիվանքի ծածկագիր արձանագրությունը, Իրան-նամե, 1998, № 1-3, էջ 38-40; նոյնի՝ Հ. Օրբելիւն և Արցախի խաչքարային պատկերաքանդակի հետազոտութեան խնդիրը, «Վէմ», 2014, № 2, էջ 1-14:

167 Հ. Պետրոսյան, Շուշիի և շրջակայքի խաչքարային մշակոյթը, ԱրՊՀ Հայագիտական ուսումնասիրություններ, 2013, № 4, էջ 22-34:

168 Հ. Պետրոսյան, Վաճառի Ս. Ստեփանոս վանքի հնագիտական հետազոտութեան հիմնական արդիւնքները և նորահայտ արձանագրությունները, «Ս. Բարխուդարյան-120»,

Արցախի յուշարձանների, պատմական Արցախ նահանգի տարբեր գաւառների, դրանց աշխարհագրական սահմանների եւ առանձին բնակավայրերի ուսումնասիրման ու տեղորոշման խնդիրներին է անդրադարձել պատմաբան Սլավա Սարգսեանը: Ծնունդով արցախցի գիտնականը (Ասկերանի շրջանի Խնապատ գիւղից) լաւ ծանօթ լինելով յուշարձանների գտնուելու վայրին ու տեղանքին եւ երկար տարիներ աշխատելով յուշարձանների պահպանութեան ոլորտում՝ բազմիցս առիթ է ունեցել անձամբ այցելելու Արցախի տարբեր բնակավայրեր, ուսումնասիրելու բնութեան գողտրիկ անկիւններում ծուարած բազմաթիւ պատմա-ճարտարապետական յուշարձանները: Ս. Սարգսեանի գիտական հետաքրքրութիւնները բաւականին լայն են՝ առանձին յուշարձանների ուսումնասիրութիւնից մինչեւ պատմական վարչա-տարածքային բաժանումների հետազոտում: Գիտնականի երկարամեայ պրպտումների արդիւնք են նրա տասնեակ յօդուածներն ու գրքոյկները, որոնցում մեզ համար առաւել կարեւոր են Խաչենի բազմաթիւ (այդ թւում՝ նաեւ նորայայտ) բերդ-ամրոցների հետազոտութիւնները՝ դրանց տեղադրութեանը, անուանումներին վերաբերող ուշագրաւ դիտարկումներով¹⁶⁹:

Արցախի պատմութեան, պատմական աշխարհագրութեան եւ հարուստ վիմագրական նիւթի ուսումնասիրութեան ոլորտում կարեւոր են պատմաբան Ալեքսան Յակոբեանի աշխատանքները: Հրապարակում առկայ ու նորայայտ մի շարք մատենագրական աղբիւրների եւ վիմական արձանագրութիւնների նորովի քննութեամբ գիտնականն անդրադարձել է Խաչենի իշխանական տան ակունքներին, տոհմի նստոց Խաչեն-Խոխանաբերդին, Դադիվանքի նորայայտ վիմագրում յիշատակուող Տպէլ ամրոցի տեղորոշմանը, ինչպէս նաեւ տարբեր յուշարձանների հետ կապուած պատմական խնդիրներին¹⁷⁰:

Արցախի պատմա-ճարտարապետական յուշարձանների

Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2019, էջ 11-30:

169 Ս. Սարգսյան, Կաջաղակաբերդ, ԼՀԳ, 1990, № 1, էջ 41-48; նոյնի՝ Խոխանաբերդ. նորահայտ վիմագրեր Խաղբակյանների մասին, ԼՀԳ, 1996, № 3, էջ 96-105; նոյնի՝ Արցախ. պարմա-աշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996; նոյնի՝ Խաչենի ամրոցները, Երևան, 2002; նոյնի՝ Ջրաբերդ ամրոցը, ԱրՊՀ Հայագիտական հանդես, 2011, № 2, էջ 81-93:

170 Ա. Հակոբյան, Հ. Սիմոնյան, Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպէլի տեղադրության հարցը, ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 227-232; Ա. Յակոբեան, Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում, «Հանդես ամսօրեայ», 2010, սն. 71-170; նոյնի՝ Պարմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտություններ (Արցախ և Ուրիք), Վիեննա-Երեւան, 2009; նոյնի՝ Արքայապոռնիքներն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 292-351:

ուսումնասիրության բնագաւառում ակտիւ գործունէութիւն է ծաւալել նաեւ հնագէտ Գագիկ Մ. Սարգսեանը: Վերջին տարիներին պատմական Խաչենի մի շարք եկեղեցիների ու վանական համալիրների վերականգնմամբ պայմանաւորուած, նրա գլխատրութեամբ իրականացուել են պեղման եւ մաքրման աշխատանքներ: Դրանցից են Դադիվանքը, Չարեքտարի վանքը, Յոռեկավանքը, Ջուխտակ վանք սրբատեղին, Մեծարանից Ս. Յակոբավանքը: Ուսումնասիրութիւններ են կատարուել նաեւ մի շարք այլ յուշարձաններում: Կատարուած պեղումները, որոնք յաճախ առաջին հնագիտական հետազօտութիւններն էին նշուած յուշարձանների տարածքում, ի յայտ են բերել նոր վիմագրեր, քարակոթողներ ու հնագիտական նիւթեր, որոնք արժէքաւոր տուեալներ են հաղորդում Խաչենի հոգեւոր կեանքի եւ պատմամշակութային դիմագծի մասին: Յատկապէս հետաքրքրական են 2008թ. Դադիվանքի միանաւ եկեղեցում կատարուած պեղումները, որոնց շնորհիւ նոր եւ ուշագրաւ տեղեկութիւններ ի յայտ եկան վանքի հիմնադրման, շինարարական փուլերի եւ գործունէութեան վերաբերեալ:

Գ. Սարգսեանի կողմից Արցախում կատարուած պատմա-մշակութային յուշարձանների հնագիտական, հետախուզական աշխատանքների արդիւնք է «Արցախի վանքերն ու եկեղեցիները» քարտէզ-ալբոմը¹⁷¹, որը յաջողուած փորձ է՝ հնարաւորինս սեղմ, ամբողջական եւ փաստարկուած ներկայացնելու երկրամասի պաշտամունքային յուշարձանները:

Արցախի հարուստ վիմագրական ժառանգութեամբ զբաղուել է նաեւ վիմագրագէտ Հայկ Յակոբեանը: Վերջին տարիներին նրան յաջողուել է Ռուսաստանի Դաշնութեան Գիտութիւնների ակադեմիայի արխիւի սանկտ-պետերբուրգեան մասնաճիւղում գտնել ու հրատարակել Գանձասարի վանքի եւ շրջակայքի վիմագրերին նուիրուած ակադեմիկոս Հ. Օրբելու անտիպ աշխատութիւնը¹⁷²: Պարգեւ արք. Մարտիրոսեանի դիպուկ բնորոշմամբ՝ դա չափազանց կարեւոր ձեռքբերում է, քանզի աղբբեջանցի ընդդիմախօսները տարիներ շարունակ, քաղաքական նկատառումներից ելնելով, պնդում էին, թէ նման աշխատութիւն գոյութիւն չունի եւ որ դրանում ընդգրկուած արձանագրութիւնները աղուանական են¹⁷³: Աշխատանքը հարուստ փաստական նիւթ է պարունակում: Հ. Օրբելու հաւաքած

171 Գ. Սարգսյան, *Արցախի վանքերն ու եկեղեցիները*, Երևան, 2014:

172 Ի. Օրբելու, *Надписи Гандзасара и вАвоцтутука, Собрал и подготовил к печати А. Аконян, Ереван, 2016.*

173 Նշվ. աշխ., էջ 4:



Ջրաբերդ (լուս.՝ Դ. Դալթեանի)

արձանագրութիւններէից զատ, Հ. Յակոբեանի կողմից համադրուել եւ ուսումնասիրուել են նաեւ Գանձասարի վիմագրերի նախկին հետազօտողների ընդօրինակութիւնները: Յաւելենք, որ ժողովածուն ներառում է նաեւ նորայայտ վիմագրեր՝ 12-ը Գանձասարից, 6-ը՝ Հաւապտուկ վանքից¹⁷⁴:

174 Նշվ. աշխ., էջ 9:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԽԱՉԵՆԻ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Խաչենի բազմաճիւղ իշխանութեան զբաղեցրած տարածքը հարուստ է եկեղեցական ճարտարապետութեան կառոյցներով: Յայտնի է, որ հայ միջնադարի ամենատարածուած եւ պատուաբեր նախաձեռնութիւններից համարուող եկեղեցաշինութիւնը լայն թափ էր ստանում խաղաղութեան թէկուզեւ կարճատեւ ժամանակահատուածում: Այս գործընթացն առանձին հոգաձութեան առարկայ էր յատկապէս իշխանական տների համար: Մաղաքիա արք. Օրմանեանի բնորոշմամբ. «Ժամանակիս իշխաններուն մէջ մրցակցութիւն մը կար եկեղեցիներ եւ վանքեր կառուցանելու եւ շէնացնելու, եւ անոնք կալուածներով ճոխացնելու»¹⁷⁵: Միջնադարեան բազմաթիւ եկեղեցիներ ու վանքեր կառուցուել կամ վերականգնուել են տարբեր իշխանական տների նախաձեռնութեամբ ու հովանաւորութեամբ, որոնցից կարելորները դարձել են նրանց իշխանութեան հոգեւոր կենտրոններ: Պակաս կարելոր չէ նաեւ այն հանգամանքը, որ իշխանական տոհմերի առաջնորդանիստ վանքերը հանդիսանում էին նաեւ նրանց տապանատները, որտեղ ամփոփում էին տուեալ տոհմի ներկայացուցիչները: Բազմաթիւ վանքեր ժամանակի ընթացքում համալրում էին աշխարհիկ ու հոգեւոր նոր շէնքերով եւ ամբողջանում՝ դառնալով բարդ եւ ներդաշնակ համալիրներ¹⁷⁶:

Ազատագրումից յետոյ, Արցախի միջնադարեան յուշարձանների հնագիտական ուսումնասիրութիւնները ձեռնարկուել են գլխաւորապէս եկեղեցիների կամ վանքային համալիրների տարածքում՝ պայմանաւորուած լինելով դրանց վերականգնման եւ բարեկարգման աշխատանքներով: Ստորեւ ներկայացնում ենք Խաչենի իշխանութեան միջնադարեան յուշարձաններում իրականացուած հնագիտական աշխատանքները՝ դրանց ամփոփ նկարագրութեամբ եւ արդիւնքներով:

ԴԱԴԻՎԱՆՔ: Վանքը գտնուում է համանուն գիւղի տարածքում, Մարտակերտի եւ Քարվաճառի շրջանների սահմանին, Թարթառ գետի ձախ ափից 0.5կմ հիւսիս, անտառածածկ լեռան հարաւահայեաց փէշին:

175 Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, հր. Ա, Պէյրութ, 1959, էջ 524:

176 Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 295:

Հայոց Արեւելից կողմանց առաջին խոշոր հոգեւոր կենտրոնն է, որն ըստ աւանդութեան, կոչուում է Թադէոս առաքեալի 70 աշակերտներից մէկի՝ Դադիի կամ Դադոյի անունով: Գտնուելով բլրի (խութ) վրայ՝ այն կոչուել է նաեւ Խութավանք: Ըստ որոշ մատենագրական աղբիւրների՝ Դադիվանքը հիմնադրուել է առաջին դարում, քրիստոնէութիւն քարոզելու համար նահատակուած Դադի առաքեալի գերեզմանի տեղում. «Թադէոս, մի յեթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէի ի մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ եւ լուեալ զմահն Աբգարու, դարձաւ եւ եմուտ ի Փոքր Սինիք եւ կրօնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»¹⁷⁷: Գրաւոր սկզբնաղբիւրներում վանքի յիշատակումը Դադի անունով առաջին անգամ հանդիպում ենք 9-րդ դարի սկզբին, Ներսէս Փիլիշեանի կողմից Աղուանից գահերէց պայագատների սպանութեան տեղի նկարագրութեան կապակցութեամբ. «...ի խորածորն, որ կոչի Դադոյի վանք»¹⁷⁸:

1145-1146թթ. սելջուկ Չօլի զօրապետը, ի թիւս Խաչենի իշխանութեան բազմաթիւ բերդերի ու վանքերի, աւերում է նաեւ Դադիվանքը¹⁷⁹: Սակայն, արդէն 13-րդ դարի սկզբից վանքի տարածքում ծաւալում են լայնամասշտաբ շինարարական աշխատանքներ, կառուցում նոր շինութիւններ: 1214թ. աւարտում է Կաթողիկէ եկեղեցու, 1224թ.՝ ժամատան կառուցումը: 1211-1224թթ. կառուցում է նաեւ գմբէթաւոր փոքր եկեղեցին, իսկ դարի կէսերին՝ Դադի «եկեղեցին», փոքր գաւիթը, սինասրահը, կատարում են վերակառուցումներ¹⁸⁰: 18-19-րդ դարերում համալիրի տարածքում կատարում են որոշ նորոգումներ եւ կառուցում աշխարհիկ նշանակութեան նոր շէնքեր¹⁸¹: 18-րդ դարավերջից վանքի գործունէութիւնն աստիճանաբար մարում է, իսկ նրա տարածքը՝ ամայեանում¹⁸², որտեղ «...միայն մրգաբեր ծառք վայրենացեալք դեռ եւս աճեն եւ բազմանան»¹⁸³:

Տարբեր նշանակութեան կառոյցներից կազմուած վանական համալիրը

177 Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 52:

178 Մովսէս Կաղանկապոտացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 340:

179 Նշվ. աշխ., էջ 353:

180 Ս. Այվազյան, Դադիվանքի վերականգնումը 1997-2011թթ., ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք XVII, Երևան, 2015, էջ 11:

181 Նոյն տեղում:

182 Ե. (Հովակիմ) ավագ քին. Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք XIII, Երևան, 2010, էջ 72:

183 Ս. վրդ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիսի, 1858, էջ 225:

բաղկացած է երկու յուշարձանախմբից, որոնցից հիւսիսայինում վանքի եկեղեցիներն են, գաւիթները, զանգակատունը, իսկ հարաւայինում՝ աշխարհիկ շէնքերը:

Դադիվանքի հիմնական յուշարձանախմբից բացի, շրջակայ բլուրների վրայ գոյութիւն ունեն մի քանի մատուռներ: Այսօր համալիրի տարածքում պահպանուել են երկու տասնեակից ատելի տարբեր նշանակութեան շինութիւններ՝ կանգուն, վերականգնուած, կիսաւեր, վթարային կամ ւերակ վիճակում:



Դադիվանքի հնձանահորերը (լուս.՝ հեղինակի)

Դադիվանքը եղել է Հաթերքի, իսկ յետոյ նաեւ Ծարի իշխանատուների տիրոյթում, որոնք հետեւողականօրէն օժանդակել են վանքի ծաղկմանը: Վանական համալիրի գլխաւոր եկեղեցու՝ Կաթողիկէի կառուցումն աւարտին է հասցրել 1214թ., Հաթերքի մեծ իշխան Վախտանգի կինը՝ Արզու-խաթունը: Դրա մասին պատմող շինարարական վիմագիրը պահպանուել է եկեղեցու հարաւային պատին¹⁸⁴: Կառոյցի հարաւային եւ արեւելեան ճակատներին կան կտիտորական բարձրաքանդակներ՝ եկեղեցու մանրակերտով¹⁸⁵: Եկեղեցու ներսը պատուել է որմնանկարներով:

Կաթողիկէից հարաւ գտնուում է գմբէթաւոր փոքր եկեղեցին, որի կառուցման ժամանակ նրա պատերի մէջ ագուցուել են այլ կառոյցների մնացորդներ՝ խոյակներ ու քանդակագարդ քարեր, թերի եւ ամբողջական

184 Դիվան հայ վիմագրոյթյան, պր. V, էջ 198-199, արձ. N° 708:

185 Սանրամասն տիւն Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը 9-14-րդ դարերում, Երևան, 1976, էջ 109-116:

խաչքարեր: Դրանց մէջ կայ նաեւ մի ջաղացքար, որով փաստուում է վանքի տարածքում երբեւէ եղած ջրաղացի գոյութիւնը:

Կաթողիկէից արեւմուտք կառուցուած սինասարահն աւարտող զանգակատան մէջ գտնուում են հայ խաչքարագործութեան լաւագոյն նմուշներից երկուսը՝ ստեղծուած 1283թ. տէր Աթանասի պատուէրով:

1970-ական թուականներին վանքի տարածքում չափագրման եւ մասնակի պեղման աշխատանքներ են իրականացրել ադրբեջանցի մասնագէտները: Մասնաւորապէս, փոքրածաւալ պեղումներ են կատարուել Դադի եկեղեցու հարաւ-արեւմտեան մասում՝ նրա հիմնադրման եւ թուագրութեան հարցերի պարզաբանման նպատակով: Արդիւնքում ի յայտ եկած խեցեղէնի հիման վրայ, ադրբեջանցի հետազօտողները կառոյցը շտապողաբար թուագրել են 6-7-րդ դարերով¹⁸⁶:

Մինչեւ Արցախի ազատագրումը վանքի ճարտարապետական մանրամասն հետազօտումն իրականացրել է Մուրադ Հասրաթեանը¹⁸⁷: Իսկ 1993թ. սկսած այն դառնում է նաեւ այլ հետազօտողների ուսումնասիրութեան առարկայ:

1993-1997թթ. ՀՀ կառավարութեանն առընթեր Յուշարձանների պահպանութեան վարչութեան համահաւաքի խմբագրութեան անդամներից բաղկացած արշաւախումբը, ի թիւս բազմաթիւ այլ յուշարձանների, ուսումնասիրութիւններ է կատարել նաեւ Դադիվանքում: Դրանց արդիւնքում մանրամասն ուսումնասիրուել է համալիրի ճարտարապետութիւնը, վերընթերցուել են բազմաթիւ վիմագրեր, յայտնաբերուել նոր արձանագրութիւններ¹⁸⁸:

Շուրջ երկու տարի վանքի տարածքում մանրամասն ուսումնասիրութիւններ են կատարել նաեւ Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող կազմակերպութեան մասնագէտները, որոնք մանրագնին անդրադարձել են եղած վիմագրերի նորովի վերծանմանը, վանական համալիրի պատմութեանը եւ ճարտարապետական կառոյցների քննութեանը¹⁸⁹: Այդ կազմակերպութեան կողմից, 1997-2001թթ. ձեռնարկուել են նաեւ հոգետոր կառոյցներից մի

186 P. Гюшев, Христианство в Кавказской Албании, с. 86.

187 Մ. Հասրաթյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, էջ 44:

188 Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Ա. Գնունի, Արցախի և ազատագրված տարածքների 1990-2005թթ. Հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, էջ 6; Ա. Հակոբյան, Հ. Սիմոնյան, Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպէլի փեղադրության հարցը, էջ 227-232:

189 Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 81:

քանիսի՝ կաթողիկէի, գմբէթաւոր փոքր եկեղեցու եւ արեւմտեան մասում գտնուող թաղաձածկ խցերի վերականգնման աշխատանքներ: Դրանց շրջանակներում կատարուել են նաեւ պեղման-մաքրման աշխատանքներ:

Գմբէթաւոր փոքր եկեղեցու տանիքին կատարուած մաքրման աշխատանքների արդիւնքում, թաղերի բուսածածկ հողի շերտը հեռացնելու ժամանակ, յայտնաբերուել են նախնական կղմինդրածածկ տանիքի մնացորդներ եւ կղմինդրների ամբողջական օրինակներ¹⁹⁰: Վերականգնող ճարտարապետ Ս. Այվազեանի դիտարկմամբ՝ դա շատ կարելուր վկայութիւն է Արցախի զարգացած միջնադարեան կառուցողական արուեստի մասին¹⁹¹: Տանիքի կառուցողական շերտերի մէջ փաստագրուել է նաեւ աղիւսի կիրառումը, որը, թերեւս, կատարուել է տանիքի անջրաթափանցութիւնն ապահովելու նպատակով: Նման երեւոյթ հանդիպում է նաեւ Հանդաբերդի վանքում¹⁹²:

Կաթողիկէ եկեղեցու վեղարի մէջ յայտնաբերուել են մեծածաւալ կարասներ եւ կղմինդրներ: Հայկական միջնադարեան ճարտարապետութեան մէջ գոյութիւն ունեցող կառուցողական այսօրինակ լուծումը միտուած էր թեթեւացնելու ծածկի բեռնուածութիւնը եւ խնայելու շինանյութը: Եկեղեցու մաքրման ժամանակ, նրա հիւսիսային կողմում յայտնաբերուել են բազմաթիւ թաղումներ՝ տապանաքարերով եւ խաչքարերով:

Վանական համալիրի որոշ կառոյցների վրայ շինարարական արձանագրութիւններ չկան, եւ դրանց թուագրութիւնը, կառուցման ժամանակագրական յաջորդականութիւնն արուել է աղբիւրագիտական նիւթի, ճարտարապետական ձեւերի ու ծաւալատարածական յօրինուածքի համադրմամբ: Այդ տեսակէտից, վերջին տարիներին կատարուած ուսումնասիրութիւնները առիթ են տուել որոշ հետազօտողների՝ վերանայելու մինչ այդ գոյութիւն ունեցած մի շարք հարցեր¹⁹³: Մասնաւորապէս, վանքի ճարտարապետութեանն ու առանձին կառոյցների հիմնադրմանն

190 Ա. Հախնազարյան, Վերանորոգման աշխատանքները Դաղիվանքում, Արցախի պարմությանն ու հուշարձանների պահպանութեանը նվիրված գիտական համաժողովի նյութեր, Սրբեփանակերտ, 2002, էջ 16-19:

191 Ս. Այվազյան, Դաղիվանքի հողերի շինութիւնների կառուցման ժամանակագրական հաջորդականութիւնը, ՊԲՀ, 2006, № 3, էջ 199-218:

192 Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, էջ 40:

193 Հ. Սանամյան, Դաղիվանքի կառուցապարման փուլերը ըստ շինարարական շերտագրութեան, էջ 150-155; Ս. Այվազյան, Դաղիվանքի հողերի շինութիւնների կառուցման ժամանակագրական հաջորդականութիւնը, էջ 199-218:

անդրադարձած Ս. Այվազեանը նշում է, որ վանական համալիրի պահպանումը շենքերից ամենավաղը ոչ թե Դադիի, այլ միանալ փոքր բազիլիկ եկեղեցին է՝ կառուցում մինչև 12-րդ դ. կեսերը, որին յետագայում կցակառուցուել են միւս շինութիւնները: Ճարտարապետը հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում նաեւ այլ շինութիւնների հետ կապում¹⁹⁴:

2007-2008 թուականներին, դարձեալ վերականգնման աշխատանքներով պայմանաւորուած, Դադիի եկեղեցու ներսում կատարուել են պեղումներ (2007թ. հնագէտ՝ Հ. Պետրոսեան, 2008թ.՝ Գ. Սարգսեան, ճարտարապետ՝ Ս. Այվազեան): Դրանց նպատակն էր՝ հետազօտել Դադիի եկեղեցու խորանում գտնուող քարակոթողի մանրամասները, խորանի հատուածում ինչ-որ շինութիւնից մնացած կրաշաղախով պատը, ինչպէս նաեւ հնարաւորութեան դէպքում յայտնաբերել Դադիի գերեզմանը:

2007թ. կատարուած աշխատանքների արդիւնքում, Դադիի եկեղեցու խորանի կենտրոնում գտնուող կոթողի ետեւում յայտնաբերուել է դիաթաղում: Թաղման խուցն անմշակ քարերով շարուած, արեւմուտքում կիսաշրջանաձեւ աւարտուող մի կառոյց է, որի արեւելեան եզրը կից է խորանի պատին: Թաղումն արուած էր արեւելք-արեւմուտք ուղղութեամբ՝ մէջքի վրայ պառկած դիրքով: Պեղումներն աւարտելուց յետոյ, խորանի քարակոթողի առջեւ յայտնաբերուել է մի փոս, որտեղից բանուորները գտել էին փայտի 27 մեծ եւ 11 փոքր կտորներ, ինչպէս նաեւ 13 մետաղական գամեր¹⁹⁵: Կատարուած վերակազմութիւնից պարզուեց, որ յայտնաբերուել է փայտէ բազկաթոռ՝ գահ, որից պահպանուել են միայն նստատեղիից վերեւ եղած հատուածները՝ աթոռի ամբողջ թիկնակը եւ երկու բազուկները:

2008թ. քարակոթողի արեւմտեան հատուածում վերսկսուած պեղումների արդիւնքում բացուել է թաղման քարաշէն խուցը, որն ունէր ձուածեւ յատակագիծ (չափերն են՝ 107x72սմ, բարձր.՝ 132սմ), կառուցուած էր տեղական անտաշ աւազաքարով, առանց շաղախի: Թաղումն ամբողջութեամբ իջեցուած է եղել մայր հողի մէջ: Դամբարանախցից յայտնաբերուել են անկանոն թափուած մարդու ոսկորներ, իսկ նրա հարաւային պատի տակ՝ ձեռնափայտի (գաւազան) սպիտակ օնիքսից գլխամաս՝ երկթեք ծայրերով: Վերջինս ունի ձեռնափայտի վերջնամասն ագուցելու համար փորուած խոռոչ՝ մետաղեայ գամերի երկու անցքերով: Գտնուած իրերի թւում են նաեւ

194 Նշվ. աշխ., էջ 217:

195 Ս. Այվազյան, Գ. Սարգսյան, Դադի վանքում 2008թ. կատարված պեղումները, Վարձք, 2012, № 7, էջ 1-12

կղմինդրի երկու փոքր բեկորներ¹⁹⁶:

Պեղումների ընթացքում, Դադիի եկեղեցու արեւելեան ճակատի տակ բացուած հիմնապատին կից, մօտ 1մ խորութիւնից, բացուել են առանց ծածկասալերի քարարկղային երկու թաղումներ:

Կատարուած ուսումնասիրութիւնները աշխատանքների ղեկավար Գ. Սարգսեանին բերել են այն համոզման, որ յայտնաբերուած խուցը դամբարան է, որտեղ թաղումը կատարուել է փայտէ գահին նստած վիճակում՝ դէմքով դէպի արեւելք: «Դամբարանախուցը գոյություն է ունեցել կոթողից, եկեղեցուց և դրանից էլ դեռ վաղ ավերված կառույցից առաջ՝ առնվազն 12-րդ դարի երկրորդ կեսին: Դրա ծավալային հորինվածքն ու շինարարական տեխնիկան, կառուցման ժամանակագրությունը և թաղման ծիսակարգը հուշում են, որ Ս. Դադիի ավանդազրույցը կարող էր անմիջական կապ ունենալ հենց այս դամբարանի հետ»¹⁹⁷:

Ինչ վերաբերում է Դադիի եկեղեցուն, ապա հնագէտ Գ. Սարգսեանի եւ չափագրող ճարտարապետ Ս. Այվազեանի պնդմամբ՝ եկեղեցու չափերը (20,7x9,4մ), նրա խորանի հատուածում կատարուած թաղումները, արեւելեան մասում լուսամուտի բացակայութիւնը եւ մի շարք այլ հանգամանքներ թոյլ են տալիս կարծելու, որ այս կառույցը եկեղեցի չէ: Միեւնոյն ժամանակ այստեղ է այն սրբացուած տարածքը, որի շուրջը դարերի ընթացքում կազմաւորուել է վանական համալիրը, եւ Դադիի եկեղեցի կոչուող կառույցը ծառայել է որպէս դամբարան-սրբատեղի¹⁹⁸: Դադիի եկեղեցում կատարուած ուսումնասիրութիւնները թոյլ են տալիս ենթադրելու, որ նախքան եկեղեցու կառուցումը (13-րդ դար¹⁹⁹), այստեղ կառուցուած է եղել մէկ այլ շինութիւն:

196 Նշվ. աշխ., էջ 5:

197 Նշվ. աշխ., էջ 8: Այ. Յակոբեանի դիտարկմամբ, այսպէղ կարող էր թաղուած լինել Աթանաս վանահայրը, որը յայտնի է նախեստուաց Դադիվանքի զանգակարան մէջ իր կանգնեցրած զոյգ խաչքարերով: Իսկ Դադի եկեղեցու հիւսիսային աւանդարան ներսում, կամարածեւ առաստաղին պահպանուած ՏԷՐ ԱԹԱՆԷՍ վիմագիրը (տես Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խարհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 117, արձ. № 67), հաւանական է լինի նրա փառանազիրը: «Իսկ թաղումը եղել է յիրաւի եզակի գրածոյ՝ այն աթոռով, որն այժմ ցուցադրուում է Սրբեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանում եւ ոմանց կողմից շտապողաբար վերագրուում «Դադի առաքեալին», (տես Ս. Յակոբեան, Արքայապոռհմերն ու իշխանապոռհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում, էջ 326, ծնթ. 2):

198 Գ. Սարգսյան, Ս. Այվազյան, Դադիվանքում 2008թ. կատարված պեղումներ և որոշ եզրակացություններ, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010թթ., Սրբեփանակերտ, 2011, էջ 94-112:

199 Մ. Հասարթյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, էջ 50; Ս. Այվազյան, Դադիվանքի հոգևոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, էջ 217:

Չենք բացառում, որ հէնց այդ շինութեանը վերաբերող հնագիտական նիւութեր են յայտնաբերել ադրբեջանցի մասնագէտները նախորդ դարի 70-ական թուականներին:

Վերականգնման աշխատանքներով պայմանաւորուած, 2009-2011թթ. պեղման-մաքրման աշխատանքներ են տարուել նաեւ համալիրի գլխաւոր մուտքի եւ տաճարի մօտ: Տաճարի տարածքում կատարուած ուսումնասիրութիւնները ճարտարապետ Ս. Այվազեանին բերել են այն համոզման, որ գիտական շրջանակներում ընդունուած կառուցման թուականը՝ 1211²⁰⁰, իրականում վերաբերում է վերակառուցմանը, իսկ կառոյցի հիմնադրումը եղել է աւելի վաղ: Ըստ մասնագէտի՝ ամենայն հաւանականութեամբ, նախնական կառոյցի սիւներն ու ծածկը եղել են փայտից²⁰¹:

Վանական համալիրի գլխաւոր մուտքի մօտ կատարուած պեղումներով, նրա հարաւային մասում բացուել է ուղղանկիւն յատակագծով սենեակ: Այն կցուած է դարպասի հարաւային ճակատին եւ պահպանուել են պատերի միայն հիմնամասերը: Սենեակի մուտքը բացուած է համալիրի բակից, նրա արեւելեան ճակատի հարաւային անկիւնում: Շերտագրօրէն սենեակը կցուած է արդէն կանգնած դարպասին, եւ ամենայն հաւանականութեամբ, վերաբերում է 16-17-րդ դարերին²⁰²:

Կամարակապ մուտքի որմնամոյթերի ներքեւի մասերում կան փորուածքներ, որոնցից հարաւայինը միջանցիկ է: Դրանք նախատեսուած են եղել շարժական գերանի համար, որի ետ ու առաջ տանելով՝ բացել-փակել են մուտքի փայտաշէն դուռը: Այս մանրամասները ենթադրել են տալիս, որ մուտքից հարաւ բացուած կառոյցը եղել է դռնապահի սենեակ ²⁰³:

Որմնանկարները: Վերջին տարիներին ուսումնասիրութեան առանձին առարկայ են դարձել նաեւ Դադիվանքի Կաթողիկէ եկեղեցու հիւսիսային եւ հարաւային պատերին պահպանուած որմնանկարները: Թէեւ պահպանուածութեան տեսակէտից դրանք լաւագոյնն են Արցախում, այնուամենայնիւ եղել են խամրած, գրերը՝ դժուարընթեռնելի եւ ծածկուած մրի

200 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 201, արձ. №749:

201 Տէն Ս. Այվազյան, Դադիվանքի «Տաճարի» վերականգնման էսքիզային նախագծի բացատրագիր, Երևան, 2010, էջ 1:

202 Գ. Սարգսյան, Ս. Այվազյան, Դադիվանքի գլխավոր մուտքի պեղման-մաքրման աշխատանքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012թթ., Սրբեկանակերպ, 2015, էջ 133-135:

203 Նշվ. աշխ., էջ 134:

հաստ շերտով, ինչը բարդացնում էր դրանց համակողմանի հետազոտումը²⁰⁴:

2014-2016թթ. իտալաբնակ ճարտարապետ Արա Զարեանի եւ որմնանկարների վերականգնող Քրիստին Լամուրէի ջանքերով կատարուել է որմնանկարների ամբողջական մաքրում, ամրակայում եւ պահպանական վերականգնում:



**Որմնանկարների վերականգնման ընթացքը:
Լուսանկարում՝ վերականգնող Քր. Լամուրէ (լուս.՝ հեղինակի)**

Հիւսիսային պատին պահպանուած որմնանկարը ներկայացնում է Ս. Ստեփանոս Նախավկայի նահատակութիւնը, իսկ հարաւային պատինը՝ Փոքր Ասիայի Զմիւռնիա քաղաքի հայրապետ Նիկողայոս Սքանչելագործի հայրապետական իշխանութիւն ստանալու դրուագը: Ուշագրաւ է, որ մաքրման եւ վերականգնման աշխատանքների ժամանակ պատկերներից մէկի վրայ յայտնաբերուել է նկարագիր արձանագրութիւն, որում նշում է պատկերի ստեղծման թուականը՝ ՉԽԶ (1297թ.)²⁰⁵:

204 Ա. Հայրապետյան, Դադիվանքի որմնանկարները, Մշակութային մտավոր ժառանգության խնդիրներն ու զարգացման հեռանկարները, Գիտաժողովի դրոյթներ, Երևան, 2014, էջ 188-190:

205 Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Ա. Զարյան, Ք. Լամուրէ, Դադիվանք: Վերածնված հրաշալիք, Երևան, 2018, էջ 26; Մանրամասն տե՛ս Ա. Զարյան, Ք. Լամուրէ, Դադիի վանք, 1214թ. կառուցված Կաթողիկէ եկեղեցու 1297թ. որմնանկարների պահպանական վերականգնում, Երևան, 2021:

ՉԱՐԷՔՏԱՐԻ ՎԱՆՔ: Վանքը գտնուում է Մարտակերտի շրջանի համանուն գիւղի տարածքում՝ Թարթառ գետի աջ ափի բարձրանիստ բլրի վրայ: Վանքին վերաբերող մատենագրական տուեալները սուղ են, ուստի յուշարձանի մասին եղած մեր պատկերացումներն ամբողջանում են հիմնականում վիմագրական նիւթի ուսումնասիրմամբ:

Չարէքտարի վանքի անունը եւ հիմնադրման ստոյգ թուականը մնում են անյայտ: Միայն ժամանակին տեղում պահպանուած մի արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ վանքի եկեղեցին կոչուել է Ս. Աստուածածին²⁰⁶: 19-րդ դարից սկսած վանքի տարածքում եղած վիմագրերին անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Նրանցից Ս. Զալալեանցը վիմագրերից մէկի շտապողական վերձանումից կարծել է, թէ վանքի անունը Մշահան է²⁰⁷, որին հետեւել է նաեւ Մ. Բարխուտարեանցը: Յետագայում Մ. Տէր-Մովսիսեանը եւ Ս. Բարխուդարեանը ապացուցել են, որ դա սխալ ընթերցման արդիւնք է²⁰⁸:

Խորհրդային տարիներին հայաթափուած Չարէքտար գիւղում բնակութիւն հաստատած ադրբեջանցիներն աստիճանաբար ոչնչացնում են վանքի հետքերի մի մասը: Տարածքում սփռուած գրեթէ բոլոր խաչքարերն ու տապանաքարերը կտորուել են եւ որպէս շինանիւթ օգտագործուել այլ շինութիւններում, իսկ վանքի կառոյցները ձեւափոխուել են ու դարձել անասնագոմեր:

Չարէքտարի վանքը կարելոր դեր է խաղացել Վերին Խաչենի հոգեւոր կեանքում, ինչի մասին վկայում են յայտնաբերուած տապանաքարերն ու խաչքարերը: Պակաս կարելոր չէ նաեւ այն հանգամանքը, որ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին էջմիածնապատկան վանքի կալուածքները Դադիվանքի հետ միասին յիշատակուել են պաշտօնական գրութիւններում՝ Խօթավանք կամ Չարեքդարվանք անունով²⁰⁹:

Յուշարձանի չափագրման եւ յետագայ պահպանութեան աշխատանքներով պայմանաւորուած, 2009թ. վանքի տարածքում կատարուել են պեղման-մաքրման աշխատանքներ (հնագէտ՝ Գ. Սարգսեան, ճարտարապետ՝ Ս. Այվազեան): Դրանց արդիւնքում հնարաւոր եղաւ

206 Ս. վրդ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 229:

Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 134, արձ. N^o 450:

207 Ս. վրդ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 228:

208 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 132, արձ. N^o 443; Մեսրոպ Մազիսպորոս արք. Տէր-Մովսիսեան, Հայկական երեք Մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, 1938, էջ 98:

209 Նշվ. աշխ., էջ 83, 97:

վերականգնել յուշարձանախմբի ընդհանուր պատկերը, նրա մաս կազմող շինությունների ճարտարապետությունը եւ կառուցողական տեխնիկայի մանրամասներ²¹⁰:

Վանքի գլխավոր եկեղեցու եւ մատուռի միացման հատուածի տանիքը մաքրելիս յայտնաբերուել է տեղում անխախտ պահպանուած կղմինդրածածկի մի հատուածը: Վերջինիս վրայ թափուած էր կոտրտուած կղմինդրի շերտ: Այն ցոյց է տալիս, որ մատուռի տանիքին թափուել են մէկ ուրիշ՝ նրանից բարձր կառոյցի փլուածքի կղմինդրները, որոնք կարող էին պատկանել միայն մատուռին կից եկեղեցուն: Այսինքն՝ ժամանակին եկեղեցին նոյնպէս կղմինդրածածկ է եղել:

Խորհրդային տարիներին վանքի տարածքում կատարուած աշխատանքների արդիւնքում, ամբողջութեամբ խաթարուել են կամ իսպառ ոչնչացուել նրա մշակութային շերտերն ու պատմամշակութային միջավայրը: Եւ հնագիտական գտածոների բացակայութիւնը բացատրում է հէնց այդ հանգամանքով:

Պեղումներով ի յայտ են եկել թերի եւ ամբողջական մի շարք խաչքարեր ու տապանաքարեր, որոնց մի մասն արձանագիր է: Վերջիններս, իրենց յօրինուածքով եւ պատրաստման եղանակով, թուագրում են 12-14-րդ դարերով: Գ. Սարգսեանի պնդմամբ՝ դրանց ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ առնուազն 11-րդ դարի սկզբին վանքի տարածքն արդէն օգտագործուել է հոգեւոր նպատակների համար, ինչի մասին վկայում է 1002 թուականից մեզ հասած խաչքարի բեկորը²¹¹:

Հետաքրքիր է գտնուած խաչքարերից մէկը՝ սպիտակ մարմարից, երկատուած, որի թիկունքին 12 տողով փորագրուած արձանագրութեան մէջ նշուում է ոչ միայն կերտողի անունը, այլեւ նրա մասնագիտութիւնը՝ խաչգործ:

Ամենայն հաւանականութեամբ, ներքուստ սուաղուած եկեղեցու որոշ հատուածներ եղել են նկարազարդ: Սուաղի վրայ պահպանուել է փորագիր, կլոր վարդեակներից կազմուած կապոյտ եւ կարմիր ներկի հետքեր պարունակող զարդագօտի, որը շրջագծում է եկեղեցու ներսի ողջ տարածքը՝ անցնելով մուտքի ու արեւելեան պատուհանի վրայով²¹²:

210 Գ. Սարգսյան, Ս. Այվազյան, *Չարեքտար գյուղի վանական համալիրի պեղումների և հետազոտությունների հիմնական արդյունքները*, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010թթ., էջ 113-133:

211 Նշվ. աշխ., էջ 119-120:

212 Նշվ. աշխ., էջ 122:

ՀՈՌԵԿԱՎԱՆՔ: Վանական համալիրը գտնում է Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղից մօտ 5կմ արեւմուտք՝ անտառապատ գօտում: Յուշարձանախումբը բաղկացած է միանաւ բազիլիկ եկեղեցուց, նրան արեւմուտքից կից գաւիթից, վերջինիս արեւմտեան մուտքի առջեւ բարձրացող զանգակատնից եւ գերեզմանոցից: Հնում վանքին յարող տարածքը եղել է խիտ բնակեցուած: Յուշարձանի անուանակոչութեան համար հիմք է ծառայել վաղ միջնադարում այստեղ գոյութիւն ունեցած Ուռեկ-Ուռեկան գիւղը, որի ւերակները գտնում են վանքային համալիրից մօտ 150մ արեւմուտք²¹³:

Վանքի վիմագրերին անդրադարձել են Հ. Շահխաթունեանցը, Ս. Զալալեանցը, Մ. Բարխուդարեանցը²¹⁴: Եկեղեցու մուտքի բարաւորին պահպանուած շինարարական արձանագրութեան համաձայն՝ այն կառուցել է Տէր Յովհաննէսը՝ 1279թ., հայրապետ Տէր Ստեփանոսի օրօք: Ութ տարի անց նա կառուցել է նաեւ գաւիթը, ինչի մասին վկայում է այդ շինութեան բարաւորի արձանագրութիւնը²¹⁵: Զանգակատունը կառուցուել է աւելի ուշ, միանգամայն ուրիշ տեխնիկայով եւ կցուել է գաւթի ճակատին՝ առանց կցակապերի: Զանգակատան հիւսիսային սեան ստորին քարերից մէկի վրայ պահպանուած «Ռ» տառը հիմք է տուել հնագէտ Գ. Սարգսեանին ենթադրելու, որ այն շինարարութեան տարեթիւն է՝ 1551, ինչը եւ համահունչ է տուեալ կառոյցի շինարուեստին²¹⁶:

Յուշարձանախումբն ուսումնասիրելու, նրա փլուզումն արագացնող ծառերը հատելու, տարածքը մաքրելու եւ չափագրելու նպատակով, 2012թ. կազմակերպուել են վանքի պեղման աշխատանքներ (հնագէտ՝ Գ. Սարգսեան, ճարտարապետ՝ Ս. Այվազեան), որոնց արդիւնքում ի յայտ են եկել վանքի պատմութեանն ու շինարուեստին վերաբերող մի շարք մանրամասներ: Եկեղեցու եւ գաւիթի մաքրման ժամանակ բացուել են կիսախողովակաձեւ, ուշ միջնադարում արուած կղմինդրաձաձկի մնացորդներ, որոնք անմիջապէս դրուած էին կրաշաղախի հիմքի վրայ: Եկեղեցու փլուած մասերի մաքրման ժամանակ գտնուել են աւելի վաղ շրջանի սեղանաձեւ կղմինդրներ:

213 Գ. Սարգսյան, Ս. Այվազյան, Հռոեկավանքի պեղման-մաքրման աշխատանքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012թթ., էջ 138-146:

214 Յ. եպս. Շահխաթունեանց, Սյորրագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարապայ, հր. Բ, Վաղարշապատ, 1842, էջ 378; Ս. վրդ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 174; Մ. եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 228-229:

215 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 102, արձ. N° 322-323:

216 Գ. Սարգսյան, Ս. Այվազյան, Հռոեկավանքի պեղման-մաքրման աշխատանքները, էջ 139:

Տոփանուած հողի լիցքով արուած բեմի մակերեսի հողը հեռացնելու ժամանակ գտնուել են կղմինդրների եւ խեցեղենի բեկորներ, երկաթից, պղնձից ու մեքիորից պատրաստուած մոմակալների հատուածներ²¹⁷: Ուշագրաւ է, որ նշուած լիցքը հանելուց յետոյ, նրա տակ բացուել են մատուռ-աւանդատներ, որոնք եղել են հին եկեղեցու բաղադրամասերից: Կատարուած հնագիտական եւ ճարտարապետական ուսումնասիրութիւններով պարզուել է, որ դրանց թաղակապ ծածկերի հարթ տանիքին նստել է եկեղեցու հին բեմը, որի նիշը բարձր է սրահի յատակից 220սմ:

Եկեղեցու, գաւթի եւ զանգակատան արտաքին պատերի տակ բացուած խուզահորերում՝ անմիջապէս պատի տակ, բացուել են սալարկղային եւ հիմնահողային թաղումներ: Իսկ եկեղեցու արեւելեան ճակատի տակ՝ 0,5մ խորութեամբ, յայտնաբերուել են 13-րդ դարի գերեզմանների հարթ սալատապաններ²¹⁸:



Բեմի տակ բացուած մատուռ-աւանդատները (լուս.՝ Գ. Սարգսեանի)

217 Նշվ. աշխ., էջ 141:

218 Նշվ. աշխ., էջ 143:

ՅԱԿՈԲԱՎԱՆՔ: Վանքային համալիրը գտնուում է Մարտակերտի շրջանի Քոլատակ գիղից մօտ Չկմ հիւսիս, Խաչենագետի աջակողմեան, անտառապատ գօտում: Համալիրի հիմնական յուշարձանախումբը շրջափակուած է պարսպապատով եւ բաղկացած է երկու եկեղեցուց, երկու գաւթից, վեհարանից ու շրջապարիսպների երկայնքով տեղաբաշխուած բնակելի եւ տնտեսական նշանակութեան շինութիւններից:

Վանքի անուանումը կապուած է սրբերի շարքին դասուած Մծբինի հայրապետ Յակոբի հետ, որի մասունքները, ըստ ասանդութեան, ամփոփուել են այստեղ. «Նախապէս ուներ Ս. Նշանի մասունք մը եւ յետագային կը ստանայ Ս. Յակոբի մասունք եւս, որ յարգանքի շատ առարկայ կըլլայ»²¹⁹: Գրաւոր աղբիւրներում եւ գիտական գրականութեան մէջ վանական համալիրը յիշատակուում է նաեւ Մեծարանք, Մեծարանից վանք անուանաձեւերով եւ յայտնի է իբրեւ Արցախի Մեծարանք (Մեծիրանք) գաւառի հոգեւոր կենտրոն: Յուշարձանախմբի առատ վիճագրերի անդրանիկ հետազօտող, 1892թ. Յակոբավանքի վանահայր նշանակուած Խաչիկ վրդ. Դադեանի կարծիքով՝ վանքը կոչուել է Մեծարանց, քանզի այստեղ են թաղուած Աղուանից մեծ այրերը՝ կաթողիկոսները²²⁰:

Յակոբավանքի հիմնադրման մասին պատմական տեղեկութիւններ չկան: Յուշարձանի մասին մատենագրական վաղագոյն յիշատակումը վերաբերում է 7-րդ դարին, երբ Աղուանից Ուխտանէս կաթողիկոսի օրօք (656-680թթ.) իրաւորուած եկեղեցական ժողովին մասնակցում էր նաեւ «... եպիսկոպոսն Արցախական կողմանց զոր Մեծիրանցն կոչեն»²²¹: Նոյն դարի մէկ այլ իրադարձութեան հետ կապուած յիշատակում է Մեծարանց Հովել եպիսկոպոսը, որը քաղկեդոնականութեանը յարած Ներսէս եպիսկոպոսից պահանջում է նզովել Քաղկեդոնի ժողովը եւ Լեւոնի տոմարը²²²: Վանքի մասին եղած վիմագիր եւ մատենագիր հաղորդումները առատ են նաեւ յետագայ դարերում:

Ժամանակի ընթացքում վանքը քանիցս նորոգուել է, ինչի արդիւնքում հին եկեղեցիների, խաչքարերի ու տապանաքարերի բեկորները որպէս շինաքար օգտագործուել են ներկայիս վանքի տարբեր կառոյցների շարուածքներում,

219 Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 88:

220 Խաչիկ ծ. վրդ. Դադեան, Մեծարանց որ եւ Ս. Յակովբայ վանից արձանագրութիւնները, «Բանասէր», հր. 3, պր. Բ և Գ, Պարիս, 1901, էջ 135:

221 Մովսէս Կաղանկապոտացի, Պատրութիւն Աղուանից աշխարհի, էջ 203:

222 Նշվ. աշխ., էջ 293; Մ. Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին, Սրբեփանակերտ, 2009, էջ 74-75:

յատկապէս վերակառուցուած հոգեւոր կառոյցներում: Դրանց մէջ է նաեւ Սողոմոն եպիսկոպոսի կողմից կանգնեցրած վաղագոյն թուակիր խաչքարի (853թ.) պատուանդանի բեկորը, որն իբրեւ շինաքար պահպանուել է փոքր եկեղեցու արեւմտեան անկիւնում²²³:

Վանական համալիրի վերականգնման նախագիծ կազմելու նպատակով, 2013թ. նրա տարածքում կատարուել են մաքրման եւ պեղման աշխատանքներ (հնագէտ՝ Գ. Սարգսեան, ճարտարապետ՝ Ս. Այվազեան): Դրանց ընթացքում վեհարանի ընդունարանի հաստ հողաշերտի մաքրման ժամանակ բացուել են մեծ քանակութեան կաւէ ամբողջական խողովակներ: Վերջիններս յայտնաբերուել են կոյտերով՝ իրար վրայ դրուած, եւ կրում են օգտագործուածութեան հետքեր: Պեղող հնագէտ Գ. Սարգսեանի կարծիքով՝ դրանք հաւաքուել ու պահուել են ընդունարանի թաղակապ տանիքի կամարների կցակէտերում գոյացող տեխնիկական խորշերում եւ թափուել են տանիքի փլուզուելու ժամանակ²²⁴:

Գլխաւոր եկեղեցու շինարարական փուլերի յաջորդականութեան, դրանց արդիւնքում կատարուած ձեւափոխումների ու թուագրութեան հետ կապուած մի շարք հարցեր մնում են չպարզուած: Խորանի վերակառուցուած բեմի թուագրութիւնը պարզելու նպատակով, բեմահարթակի հարաւային կողմում բացուած խուզահորից գտնուել են 12-13-րդ դարերի բեմառէջքը, իսկ աւելի խորքում՝ ներկայիս բեմի մակարդակից մօտ 1մ ներքեւ, բացուել է կրասուաղով հարթեցուած մէկ այլ բեմահարթակի յատակ: Վերջինս եկեղեցու յատակից բարձր է ընդամէնը 32սմ, ինչը բնորոշ է վաղմիջնադարեան յուշարձաններին: Եկեղեցուն հարաւից կցուած սինասարահի թաղի թափուած քարերի խորշում՝ լիցքի մէջ, փաստագրուել են 5-7-րդ դարերին բնորոշ կղմինդրներ, որոնք սինասարահը կառուցելու ժամանակ օգտագործուել են որպէս շաղախի լցանիւթ: Կատարուած ուսումնասիրութիւններով Գ. Սարգսեանը փաստում է, որ համալիրի երկու եկեղեցիները 12-13-րդ դարերում վերակառուցուած եւ վերանորոգուած շէնքեր են, իսկ յուշարձանախմբի հնագոյն շինութիւնը՝ մեծ եկեղեցին, ամենայն հաւանականութեամբ, կառուցուել է 7-րդ դարում²²⁵:

223 Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 12, արձ. N° 1:

224 Գ. Սարգսյան, Ս. Այվազյան, Ս. Հակոբավանք վանական համալիրում 2013թ. կատարված պեղման-մաքրման աշխատանքները (հաշվեկրկություն), էջ 6, տե՛ս Արցախի պատմական միջավայրի պահպանության ծառայության արխիվ:

225 Նշվ. աշխ., էջ 8:

ՀԱՆՂԱՔԵՐՂԻ ՎԱՆՔ: Վանքը գտնուում է Քարվաճառի շրջանում, Լեւազետի աջակողմեան լեռնաբազկի բարձրադիր բացատի եզրին, Հանդաբերդի ամրոցից մօտ 1կմ հիւսիս-արեւելք: Դեռեւս 1985թ. ճարտարապետ Մուրադ Հասրաթեանն այցելել է վանք եւ իրականացրել համալիրի սխեմատիկ չափագրութիւնը: Հետխորհրդային ժամանակաշրջանում՝ տարածքի ազատագրումից յետոյ, վանքի ուսումնասիրութեանն են անդրադարձել ՀՀ կառավարութեանն առընթեր Յուշարձանների պահպանութեան վարչութեան համահաւաքի խմբագրութեան անդամներից բաղկացած արշաւախումբը²²⁶, իսկ ապա նաեւ Սամուէլ Կարապետեանը²²⁷:

Վանքի իրական անունը մնում է անյայտ, եւ հարեւանութեամբ գտնուող համանուն բերդի պատճառով այն պայմանականօրէն կոչում են Հանդաբերդի վանք: Տեղում գտնուած շինարարական արձանագրութեան համաձայն՝ վանքի շինութիւնների մեծ մասը կառուցուել են 1276թ., Դաւիթ վարդապետի կողմից՝ տեղում եղած աւելի հին եկեղեցու շուրջը: Վանքի պեղումների արդիւնքում պարզ է դարձել, որ յուշարձանախումբը գոյատեւել է մինչեւ 14-րդ դարի վերջերը²²⁸:

Յուշարձանի մասնակի վերականգնման եւ ամրակայման աշխատանքներով պայմանաւորուած՝ 2004-2005թթ. վանքի տարածքում կատարուել են պեղումներ (հնագէտներ՝ Հ. Պետրոսեան, Վ. Սաֆարեան, ճարտարապետ՝ Լ. Կիրակոսեան): Ճարտարապետա-հնագիտական աշխատանքների արդիւնքում պարզուել է համալիրի շինութիւնների կառուցման ժամանակագրութիւնը, շինարարական տեխնիկան, վանքի ճարտարապետութեանը բնորոշ առանձնայատկութիւնները:

Համալիրը բաղկացած է երկու խումբ կառոյցներից: Դրանցից հիմնականը ներառում է գլխաւոր եկեղեցին, նրան կից երկու մատուռները, գաւիթ-ժամատունը եւ նրան հիւսիսից կցուած մատուռը, զանգակատունը եւ տապանաբակը: Սրանցից մօտ 10մ հիւսիս գտնուում է հիւսիսային մատուռը: Խորհրդային տարիներին թեք հողաշերտը 2մ խորութեամբ կտրելով՝

226 Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Հանդաբերդի վանական համալիրը, ՀՀ-ում 1993-1995թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Ձեկուցումների թեզեր, Երևան, 1996, էջ 71-73:

227 Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 24-30:

228 Հ. Պեպրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, էջ 9:

ադրբեջանցիները համալիրի գրեթե մէջտեղով բացել են մօտ 4մ լայնութեամբ ատօճանապարհ: Դէպի մօտակայ անտառները տանող մէկ այլ ճանապարհ անց է կացուել վանքի շուրջը տարածուող միջնադարեան գերեզմանոցի տարածքով: Դրանց արդիւնքում որոշ խաչքարեր ու տապանաքարեր տեղահան են արուել, կամ գլորուել ձորը:

Կատարուած պեղումներով համալիրի հիւսիսային՝ առանձին կանգնած մատուռի արտաքին հատուածում, նրա հարաւարելեւեան մասում, բացուել են մէջքի վրայ պառկած, ձեռքերը կրծքին խաչած ամբողջական կմախքներ, որոնք արշաւախմբի անդամներին հիմք են տուել ենթադրելու, որ մատուռին հարաւից կից տարածքը վեր է ածուել տապանաբակի²²⁹: Դրա օգտին են խօսում նաեւ մատուռի շրջակայքի պեղումներից յայտնաբերուած բազմաթիւ խաչքարերը:

Հնագիտական աշխատանքների արդիւնքում գլխաւոր եկեղեցում բացուել են բեմը եւ սուրբ սեղանի պատուանդանը, իսկ խորանի հարաւային մասում՝ բեմի երկու աստիճանները:

Վանական համալիրի ժամատան պեղումներով, նրա արելեւեան մասում բացուել են 25 եւ 30սմ բարձրութեամբ եւ 55սմ լայնութեամբ աստիճաններ, որոնք տանում են դէպի գլխաւոր եկեղեցի եւ նրան կից մատուռներ: Յատկանշական է յուշարձանախմբի կազմում մատուռների առատութիւնը: Ճարտարապետ Լ. Կիրակոսեանի դիտարկմամբ՝ դա կապուած է 13-14-րդ դարերում ինչպէս Արցախում, այնպէս էլ ողջ Հայաստանում հանգուցեալի հոգու հանգստութեան համար մատուցուող պատարագների թուի աճով. «Եթե գլխավոր եկեղեցու և նրան կից երկու մատուռների բեմերին հավելենք նաև հյուսիսային մասում առանձին կանգնած մատուռի և ժամատանը կից մատուռի բեմերը, ապա կստացվի, որ վանքում կար հինգ բեմ և կարող էին պատարագ մատուցել միանգամից հինգ տեղում, ինչը պատկառելի թիվ է նման փոքր և ակնհայտորեն առանձնացված վանքի համար»²³⁰: Հանդաբերդի վանքի ճարտարապետութեան ուշագրաւ կողմերից է գլխաւոր եկեղեցում ու մատուռներում պեղումներով վաւերացուած եւ Արցախի ճարտարապետական դպրոցի առանձնայատկութիւններից համարուող ուղղանկին խորանի կիրառութիւնը: Յատկանշական է նաեւ, որ ի տարբերութիւն այլ յուշարձանների, որտեղ գաւիթներն ունեն նաեւ տապանատան գործառոյթ, Հանդաբերդի վանքի գաւիթ-ժամատանը ոչ մի

229 Նշվ. աշխ., էջ 24:

230 Նշվ. աշխ., էջ 30:

թաղում չի բացուել²³¹:

Պատերի յարդարման միջոց են հանդիսացել համալիրի տարբեր շինությունների շարուածքներում որպէս շինաքար օգտագործուած բազմաթիւ խաչքարերը: Արցախի ճարտարապետական դպրոցին բնորոշ այս շինարարական տեխնիկան լաւագոյնս կիրառուել է նաեւ այստեղ: Ներքին տարածութեան գեղարուեստական յարդարանքի միջոցներից ժամատան հիւսիսային եւ արեւելեան պատերին պահպանուել են որմնանկարների եւ որմնագրերի նմանուող դրուագներ: Հանդաբերդի վանքը պատմական Խաչենի տարածքում առկայ բազմաթիւ հոգեւոր համալիրներից պեղուած եւ համակողմանի ուսումնասիրուած սակաւաթիւ յուշարձաններից է: Ձեռնարկուած հնագիտական աշխատանքներով յուշարձանախմբի տարբեր հատուածներից գտնուել են մեծաթիւ հնագիտական նիւթեր, արտացոլելով տարածաշրջանի զարգացած միջնադարեան նիւթական մշակոյթի բնոյթն ու նկարագիրը: Մեծ թիւ են կազմում նաեւ տարբեր խաչքարերի ու խաչային յօրինուածքով քարակոթողների բեկորային եւ ամբողջական օրինակները, որոնցից մի քանիսն ունեն պատկերաքանդակներ: Ուսումնասիրելով նշուած քարակոթողները եւ յատկապէս հեծեալ ռազմիկների յօրինուածքները՝ հնագէտ Հ. Պետրոսեանը եզրակացնում է, որ «Արցախում գոյութիւն ունէր հայրենիքի համար կովող ռազմիկի մի առանձնահատուկ պաշտամունք, և մեր պատկերաքանդակներն էլ հենց այդ պաշտամունքի դրսևորումներից մեկն են²³²»:

ՎԱՃԱՌԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔ: Վանքը գտնուում է Մարտակերտի շրջանի Ծմակահող գիւղից հարաւ-արեւելք, պատմական Վաճառ գիւղաքաղաքի աւերակներից մօտ 500մ հարաւ: Ս. Ստեփանոս եկեղեցու մասին առաջին անգամ յիշատակում է Աղուանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանը՝ ներկայացնելով յուշարձանի վիմագրերը²³³: Դրանցից պարզ է դառնում, որ եկեղեցին կառուցել է Խաչենի իշխան Հասան-Ջալալը՝ 1229թ., իսկ դամբարանի վրայ կառուցուած մատուռը՝ նրա կին Մամքանը, 1251թ.: Վանքի ճարտարապետական կառոյցների մանրամասները ներկայացրել է Մակար Բարխուդարեանցը՝ ընդօրինակելով նաեւ յուշարձանի տարածքում պահպանուած արձանագրութիւնները²³⁴:

231 Նշվ. աշխ., էջ 36:

232 Նշվ. աշխ., էջ 62:

233 Ե. Հասան-Ջալալեան, Վիմական արձանագրութիւնք, ՄՄ Հմր 7821, էջ 19բ, 20ա:

234 Մ. եպս. Բարխուդարեանց, Արցախ, էջ 184-185: Հ. Պետրոսյան, Վաճառի Ս.

Ստեփանոս վանքի հնագիտական հետազոտութեան հիմնական արդյունքները և նորահայր

Նախորդ տարիներին Արցախի Տիգրանակերտի, ապա նաև Ամարասի Ս. Գրիգորիսի դամբարանի պեղումներով բացուել էին դամբարանային կառույցների արեւելեան մուտքերը: Վերջիններիս պատմա-մշակութային համատեքստը հետազոտելու նպատակով, 2017թ. անհրաժեշտ համարուեց պեղումներ կատարել նաև Վաճառի Ս. Ստեփանոսի դամբարանում (ղեկավար՝ Հ. Պետրոսեան, հնագէտ՝ Ա. Գաբրիէլեան, ճարտարապետ՝ Լ. Մինասեան), որը, նախնական տուեալներով, նոյնպէս ունեցել է արեւելեան մուտք²³⁵:

Ձեռնարկուած պեղումները ցոյց են տալիս, որ վանքը բաղկացած է եղել միանաւ, բազիլիկ եկեղեցուց, նրան յարակից Ս. Ստեփանոսի կրկնայարկ դամբարան-մատուռից, արեւմուտքից կից գաւթից եւ դրանց շուրջը գտնուող տապանաբակերից: Եկեղեցու հիւսիսային մասում պահպանուել են դարպասի եւ պեղումներով բացուած որմնափակ խաչքարի մնացորդները: Ամբողջ համալիրը շրջափակուած է պարսպապատով:

